

Է.Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ, Ֆ.Դ.ԴԱՎԻԹԵԼՅԱՆ, Ա.Յ.ԵՍԱՅԱՆ, Գ.Գ.ՍԵՎՈՅԱՆ

# ԿԵՆՍԱԳԱՆՈՒԹՅՈՒՆ

# 10

(ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ՀԱՄԱՐ)

ԵՐԵՎԱՆ



«ԱՍԴԻԿ ԳՐԱՏՈՒՆ», 2011

**ՀՏԴ 373.167.1: 574/577(075.3)**

**ԳՄԴ 28.0 y72**

**Կ-414**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՅ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

Ընդհանուր խմբագրությամբ՝ ՀՅ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ա. Չ. Թոչունյանի

- Կ-414**      **Կենսաբանություն-10:** Դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի համար/ Է.Ս.Գևորգյան, Ֆ.Դ.Դանիելյան, Ա.Յ.Եսայան, Գ.Գ.Սևոյան - Եր.:«Աստղիկ Գրատուն» 2011. -112 էջ:

**ՀՏԴ 373.167.1: 574/577(075.3)**

**ԳՄԴ 28.0 y72**

ISBN 978-99941-76-79-3

© Գևորգյան Է.Ս., Դանիելյան Ֆ.Դ., Եսայան Ա.Յ., Սևոյան Գ.Գ., 2011  
© «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, 2011

**«ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ» հրատարակչություն**  
0009, Երևան, Գևորգ Քոչարի փ., 21.  
հեռ.+374 10 52 88 00, E-mail: *ast\_gratun@yahoo.com*

## Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն

**ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԼԻԿԱՆ ԴԱՐՄՈՑՈՒՄ:** Մարդը միշտ հետաքրքրվել է և այսօր էլ հետաքրքրվում է իրեն շրջապատող բնությամբ, դրանում ընթացող երևույթներով, տարրեր կենդանի օրգանիզմներով: Նա ցանկանում է նկարագրել, պարզել, հասկանալ դրանց կառուցվածքը, ֆունկցիաները, վարքը, տարածումը, դերը. մի խոսքով՝ ճանաչել կենդանի օրգանիզմները: Մարդուն հետաքրքրում է նաև օրգանիզմների բազմազանությունը, ապրելու միջավայրերը և պահպանումը: Դա ինքնանպատակ չէ. կարևոր է նաև կենդանի օրգանիզմները մարդու կյանքում օգտագործելը: Առավել հետաքրքրի են կենդանի օրգանիզմների ծագման և զարգացման հարցերն ինչպես երկրագնդի վրա, այնպես էլ Տիեզերքում: Մարդու հետաքրքրությունն անսահման է, բայց այն ավելի առարկայական է դառնում հստակ համակարգված տեղեկությունների, հասկացությունների, տեսությունների, օրինաչափությունների առկայության դեպքում:

Կենդանի օրգանիզմների մասին պատկերացումներն ունեն դարերից եկող պատմություն, բայց միայն 19-րդ դարում կենսաբանությունը ձևավորվեց որպես գիտություն կյանքի մասին: Դարերի ընթացքում այն ընդլայնվեց ու խորացավ, դարձավ մի համալիր առարկա՝ ներառելով երկրագնդի վրա գոյություն ունեցող կենդանի տարրեր օրգանիզմների՝ բակտերիաների, սնկերի, բույսերի, կենդանիների, ինչպես նաև մարդու կենսագործունեության ընդհանուր օրինաչափություններն ամբողջացնող ուղղությունները: Դպրոցում այդ օրինաչափությունների հետ ծանոթացումը պատկերացում է տալիս կենդանի օրգանիզմների կառուցվածքի և ընդհանուր ֆունկցիաների, կենդանի բջիջների ընդհանրության, կենդանի օրգանիզմների ժառանգականության և փոփոխականության, դրանց վրա շրջակա միջավայրի տարրեր գործոնների ազդեցության, ինչպես նաև երկրագնդի վրա կյանքի ծագման և զարգացման մասին: Ավելացնենք, որ կենսաբանությունն ընդգրկում է նաև կյանքի ոչ բջջային ծևեր՝ վիրուսներին նվիրված բաժինը:

Կենսաբանությունը ներառում է շատ տեղեկություններ, որոնք ժամանակի ընթացքում փոփոխվում են, լրացվում նոր հայտնագործություններով, այնպես որ տարիների ընթացքում դպրոցում նրա ուսումնասիրումը երթեք չի կարող սպառիչ լինել:

**ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ. ԾՈՐ ՄԵԽԱՆԱԿՀԱՆԵՐԻ ԿԻՐԱԾՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ:** Յուրաքանչյուր առարկա ունի հետազոտության իրեն հատուկ մեթոդները, խնդիրներն ու նպատակները: Կենսաբանությունն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների հսկայական բազմազանությունը՝ սկսած բակտերիաներից, սնկերից մինչև կաթնասուն կենդանիները, մարդը, ինչպես նաև դրանց բազմապիսի համակեցությունները և փոխադրեցությունները: Սա մի համալիր առարկա է, որտեղ ընդգրկված են մանրէաբանությունը, բուսաբանու-

թյունը, սնկաբանությունը, կենդանաբանությունը, մարդաբանությունը, բջջաբանությունը, գենետիկան, բույսերի և կենդանիների ֆիզիոլոգիան, կենսաքիմիան, կենսաֆիզիկան, կենսատեխնոլոգիան և այլ գիտաճյուղեր: Կենսաբանությունը սերտորեն կապված է ֆիզիկայի, քիմիայի և բնագիտական մյուս առարկաների հետ և օգտագործում է պատմության, փիլիսոփայության և հումանիտար այլ ուղղությունների գծով կատարված ուսումնասիրությունների ու հետազոտությունների արդյունքները:

Կենսաբանությունը կիրառում է դիտարկման և նկարագրական, համեմատության և խնբավորման, փորձի, ընտրության, ընտրասերման և բազմաթիվ այլ մեթոդներ, որոնց մի մասը հայտնի է ձեզ կենսաբանության տարբեր բաժինների հետ ծանոթությունից:

Այսպես, **դիտարկումը** հնարավորություն է տալիս հայտնաբերել այս կամ այն կենդանի օրգանիզմն ու կենսաբանական երևույթը, նկարագրել տարբեր կենդանի օրգանիզմների, հիմնականում, արտաքին կառուցվածքը: Այսօր դիտարկումը կատարվում է նաև տարբեր, այդ թվում՝ էլեկտրոնային մանրադիտակների օգնությամբ (**նկ. 1**), որոնք հնարավորություն են ընձեռում նկարագրել մանր չափերի օրգանիզմները և բջիջները, տարբեր օրգանոիդները:



**Նկ. 1. Լուսային և էլեկտրոնային մանրադիտակներ:**

**Դամենմատումը** հնարավորություն է ստեղծում հաստատելու տարբեր կենդանի օրգանիզմների ու երևույթների ընդհանուր օրինաչափությունները: Իսկ փորձը ստեղծում է արհեստական պայմաններ կենդանի օրգանիզմների այս կամ այն հատկանիշն ու հատկությունը բացահայտելու համար: Դա հստակեցնում է, հաստատում կամ

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

հերքում կենդանի օրգանիզմների կամ դրանց առանձին մասերի, կենդանի բջիջների նաև նաև տեղեկությունները: Հաճախ կարելի է ստանալ ոչ միայն որակական, այլ նաև քանակական տվյալներ: Այսպես, օրինակ, լաբորատոր պայմաններում (**Ակ. 2**) կամ փորձնական հողանասում ու ջերմոցում (**Ակ. 3**) կատարված փորձերը նպաստել են բակտերիաների, սնկերի, բույսերի կամ կենդանիների հատկանիշների ու հատկությունների մասին տարրեր հարցադրումների պատասխանների պարզաբանմանը:



**Նկ. 2. Դպրոցի կենսաբանության կարինետ:**

Փորձով կարելի է համոզվել, օրինակ, որ ֆոտոսինթեզող բակտերիաներն աճում են միայն լույսի պայմաններում, կամ բույսերը լույսի ազդեցությամբ օգտագործում են օդի ածխաթթու գազն ու արտազատում թթվածին (**Ակ. 4**), որը շատ կարևոր է Երկրագնդի վրա կենդանի օրգանիզմների գոյատևման համար:

Շատ կարևոր է նաև **պատմական մեթոդ**, որը թույլ է տալիս ժամանակակից կենդանի օրգանիզմների և նրանց անցյալի ու նախնիների մասին տեղեկությունների հիման վրա ճանաչել կենդանի օրգանիզմների ծագման ու զարգացման գործընթացները: Այդ մեթոդի շնորհիվ հնարավոր է դարձել պատկերացնել Երկրագնդի վրա կենդանի օրգանիզմների պատմական զարգացումը՝ **էվլյուցիան**, պարզել դրա փուլերը, գտնել օրինաչափությունները, գնահատել այսօրվա արդյունքները և կանխորոշել հետագա փոփոխությունները: Կարևոր է նաև **մոդելավորումը**, որի միջոցով բացահայտվում են կենդանի օրգանիզմի այս կամ այն հատկանիշի, հատկության, կամ էլ կենսաբանական երևույթի որոշիչ պայմանները:

Կենսաբանության մեջ լայն կիրառում ունեն չափիչ և վերլուծական, ֆիզիկական և քիմիական բազմաթիվ նույր մեթոդներ՝ բարդ սարքավորումների օգտագործ-

մամբ, ինչպես նաև քանակական տվյալների մաթեմատիկական վերլուծության մեթոդները, որոնք իրականացվում են համակարգչային տեխնիկայի միջոցով:



Նկ. 3. Դպրոցամերձ հողամասում,  
ջերմոցում:

Ժամանակակից կենսաբանությանը բնորոշ են նաև տեխնոլոգիական շատ մոտեցումներ: Դրանցից են արդեն ձեզ ծանոթ գենետիկական և բջջային ճարտարագիտությունը: Այդ տեխնոլոգիաների կիրառման միջոցով ստացվում են փոփոխված հատկություններով նոր բժիշներ, առանձին օրգաններ կամ նույնիսկ օրգանիզմներ:



Նկ. 4. Բույսի կողմից ածխաթթու գագի  
կլանումը ու թթվածնի արտազատումը  
հաստատող փորձը:

**ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՈ ՍՊՈՐՈՂՄՆԵՐԻ ԱԺԽԱՐԻՀԱՅԱԳՐԻ ՃԼԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ:**  
Կենսաբանությունը 20-րդ դարում հասավ մեծ նվաճումների և դարձավ սպորողների աշխարհայացքի ճլավորման ամենակարևոր և առաջատար ուղղությունը:

Կենդանի օրգանիզմների կառուցվածքի և ֆունկցիայի մասին հստակ պատկերացումները, ժառանգականության «կրողների» և կենսագործունեության հիմքում ընկած երևույթների պարզաբանումը, շրջակա միջավայրի գործոնների նկատմամբ կենդանի օրգանիզմների հայտնի «պատասխանները» բացահայտել են կյանքի նյութական հիմքի առկայությունը: Իհարկե, ներկայումս նկարագրված են երկրագնդի վրա ապրող ոչ բոլոր կենդանի օրգանիզմները, ոչ բոլոր երևույթների նաև կյանքի հստակ պատկերացումներ, սակայն դրանք ժամանակի խնդիր են և դժվար թե շարունակվող հետազոտությունների արդյունքում կասկածի տակ դրվի կյանքի նյութական հիմքը:

Կենսաբանական գիտելիքները պարզել են կենդանի օրգանիզմների վրա շրջակա միջավայրի տարրեր էկոլոգիական գործոնների ազդեցությունը, բացահայտել տարրեր կենդանի օրգանիզմների միջև ուղղակի և անուղղակի փոխհարաբերությունները, դրանց տարրեր ձևերը: Սա անհրաժեշտ է բնապահապանական միջոցառումների մշակման և իրականացման համար, որոնք հատկապես արդիական են Շայաստանում: Սովորողների համար պարզ են դառնում բույսերի և կենդանիների պահպանության հարցերը, դրանց անհետացող ձևերի համար «Կարմիր գրքերի» ստեղծման անհրաժեշտությունը, արգելոցների, ազգային պարկերի և արգելավայրերի դերը, բնակավայրերի կանաչապատման, տարածքներում անտառատնկման աշխատանքների կարևորությունը, բնական պաշարների արդյունավետ օգտագործումը և այլն:

Աշխարհայացքի ճլավորման համար առավել կարևոր է այն, որ կենդանի օրգանիզմները կամ դրանցում ընթացող գործընթացները վաղուց են օգտագործվում արդյունաբերության և գյուղատնտեսության տարրեր ոլորտներում՝ հացարխման, գարեջրի ստացման, գինեգործության, կաթնամթերքների արտադրության մեջ: Ֆիզիկաքիմիական, մոլեկուլային կենսաբանության, ինչպես նաև կենսատեխնոլոգիայի վերջին նվաճումները բերեցին սկզբունքորեն նոր ուղղությունների զարգացմանը: Յնարավոր դարձավ արդյունաբերական ծավալներով տարրեր նյութերի ստացման նպատակով օգտագործել փոփոխված հատկություններով բակտերիաների և սնկերի քջիջներ, որոնք աչքի են ընկնում բարձր արդյունավետությամբ: Դրանք լայնորեն կիրառվում են կերային և սննդային սպիտակուցների, վալինի, լեյցինի և այլ ամինաթթուների, տետրացիկլինի, վալինոնդիցինի և այլ հակարիոտիկների, հորմոնների, վիտամինների, վնասատուներից և տարրեր հիվանդություններից բույսերը պաշտպանող միջոցների և բազմաթիվ այլ նյութերի արտադրության ժամանակ:

Ուշադրությունը մարդու, որպես կենդանի օրգանիզմի, նկատմամբ միշտ մեծ է եղել: Պարզվել են մարդու սնվելու և մարսողության առանձնահատկությունները, մաքուր և բրվածնով հարուստ օդի նշանակությունը շնչառության համար, խմանքի անհրաժեշտությունը մաշկի նկատմամբ և այլն: Վերջին տարիներին պարզաբանվել են մարդու բազմացման առանձնահատկությունները, տարրեր հատկանիշների և


հիվանդությունների ժառանգումը, հայտնաբերվել են դրանց համար պատասխանատու գեները (**նկ. 5**): Այդ տեղեկությունները հիմք հանդիսացան մարդու առողջության ձևավորման և պահպանման միջոցառումների համար, կազմակերպելու մարդու կյանքի պայմանների բարելավումը և նրա խնամքը: Դրա հետ մեկտեղ առողջ կենսակերպում կարևորվում են անձնական հիգիենան, ֆիզիկական մարզվածությունն ու շարժողական ակտիվությունը, կոփումը:



**Նկ. 5. Տարրեր գեներում առկա խախտումներով պայմանավորված ժառանգական հիվանդություններով տառապող մարդիկ:**

Բուժման արդյունավետ եղանակների շարքում տեղ են գտել այն նոր մեթոդներն ու մոտեցումները, որոնք ուղղված են տարրեր հիվանդությունների, այդ թվում՝ ժառանգական հիվանդությունների հիմքում ընկած խախտումների պատճառների հաղթահարման խնդիրներին:

Ներկայում հաջողությամբ կիրառվում է գենային ճարտարագիտությունը, որը հնարավորություն է տալիս փոխարինել կամ «բուժել» խաթարված գեները: Բուժման գործում կարևոր են սպիտակուցային պրեպարատները (պատրաստուկները), որոնք օգնում են վերականգնել այս կամ այն սպիտակուցների քանակը կամ շտկել դրանց խաթարումները: Նշենք, օրինակ, ինսուլինը (**նկ. 6**), որի անհրաժեշտ քանակն ու ակտիվությունն ապահովում են արյան մեջ շաքարի (գլյուկոզի) քանակի կարգավորումը:



**Նկ. 6. Ինսուլին սպիտակուցի մոդելը:**



Նկ. 7. Ախտաբանության նպատակով օգտագործվող նոր սարքերը:

Վերջին տարիներին բժշկության մեջ ներդրվել են կենսաքիմիական և կենսաֆիզիկական նոր ներողներ համակարգչային վերլուծության ծրագրերով, որոնք հիմք են դարձել ժամանակակից ախտաբանության համար, կիրառվում են նոր տեսակի սարքեր (**Նկ. 7**): Դրանցից կարելի է նշել էլեկտրակարդիագրիչը, համակարգչային տոնոգրաֆը, ջերմատեսագրիչը:

## ԳԼՈՒԽ 1.

### ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

#### 1. ԿՅԱՆՔԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ: ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**Կյանքի էռլեյունը:** Ի՞նչ է իրենից ներկայացնում «կյանք» հասկացությունը: Կյանք ասելով առաջին հերթին հասկանում ենք Երկրագնդի վրա ապոռող բոլոր կենդանի օրգանիզմները՝ բակտերիաները, սնկերը, բույսերը, կենդանիները, ինչպես նաև մարդը: Նրանք սնվում են, շնչում, աճում և բազմանում, ստեղծում իրենց նմաններին:

Մեզ շրջապատող աշխարհում որոշ մարմիններ մենք համարում ենք կենդանի, մյուսները՝ անկենդան: Ինչո՞վ են տարբերվում կենդանի մարմիններն անկենդաններից: Այս հարցը երկար ժամանակ մտահոգել է շատերին: Երկար ժամանակ շատ գիտնականներ և մտածողներ փորձել են տալ կյանքի բնորոշումը, տարանջատել կենդանի և անկենդան մարմինները: Կյանքի սահմանումը փորձել են ձևակերպել խոշոր փիլիսոփաներ և կենսաբաններ՝ Արիստոտելը, Լինեյը, Լամարկը, Կյուվեն և ուրիշներ: Կյանքի, որպես իրական գոյություն ունեցող երևույթի, պարզ և հստակ սահմանում ո՛չ կենսաբանները, ո՛չ փիլիսոփանները չեն կարողանում տալ նույնիսկ ներկայումս: Հնարավոր է միայն առանձնացնել որոշ հատկանիշներ կամ չափանիշներ, որոնցով կարող ենք կենդանի օրգանիզմը տարանջատել անկենդան մարմնից: Դա առաջին հերթին սպիտակուցների և նուկլեինաթթուների համակարգված կառույցներն են, դրանց գոյության ձևերը:


**Կյանքի ծագման վարկածները:** Կյանքի ծագման խնդիրը շատ վաղուց հետաքրքրել է մարդկանց: Գիտությունը երկար ժամանակ անզոր էր համոզիչ պատասխան տալ այն հարցին, թե ինչպես և երբ է առաջացել կյանքը Երկիր մոլորակի վրա: Հարյուրամյակներ շարունակ գիտնականների միջև անհաշտ պայքար է ընթացել Երկիրի վրա կյանքի ծագման հարցի վերաբերյալ:

Անտիկ շրջանի գիտնականների մի մասը գտնում էր, որ կյանքը Երկիրի վրա ստեղծվել է Արարչի կողմից և այն անփոփոխ է: Վարկածներից մեկի կողմնակիցները գտնում էին, որ գոյություն ունեն «կյանքի սերմեր», որոնք այլ մոլորակներից Երկիր մոլորակ են տեղափոխվել մետեորիտների (Երկնաքարերի) միջոցով: Գիտնականների մեկ այլ խումբ ենթադրում էր, որ առաջին կենդանի էակներն անմիջականորեն ինքնագոյացել են անօրգանական նյութերից՝ գոնարբից, տիղմից, խոնավ հողից, «կենսաթիւ ուժի» ազդեցության շնորհիվ: Կայուն վիճակի վարկածի կողմնակիցները գտնում էին, որ կյանքը միշտ գոյություն է ունեցել և անփոփոխ է:

## ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԵՐԸ

Ըստ կենսաքիմիական վարկածների՝ կյանքը երկրի վրա ծագել է ֆիզիկական և քիմիական օրենքներին ենթակա գործնաբացների արդյունքում:

**ՈԵԴԻԻ ՎԻՈՐՃԵՐԸ:** Կյանքի ինքնածնության հնարավորության տեսակետը համարում էին բավական համոզիչ մինչ այն պահը, երբ իտալացի բժիշկ Ֆրանչեսկո Ոեդին (1626-1697թթ.) շատ ավելի խոր մոտեցում ցուցաբերեց կյանքի առաջացնան խնդրին: Փորձերի միջոցով նա ապացուցեց կենդանի օրգանիզմների ինքնածնության անհնարինությունը: Ոեդին պարզեց, որ ճանճի փոքրիկ սպիտակ թրթուներն առաջանում են ոչ թե հտուած մսից, այլ ճանճերի դրած ձվերից: Նա ապակյա վեց անոթներից յուրաքանչյուրի մեջ դրեց բարմ մսի կտոր: Անոթներից երեքը թողեց բաց վիճակում, մյուս երեքը՝ փակեց: Մի քանի օրից հետո բաց անոթներում գտնվող մսերի վրա երևացին որդեր (ճանճի թրթուներ): Փակած անոթներում գտնվող մսի վրա որդեր չառաջացան (նկ. 8):



Նկ.8. Ֆ.Ոեդիի վիորճը:


Սակայն ինքնածնության գաղափարի կողմնակիցները պնդում էին, որ Ոեդիի վիորճերում փակված էր թթվածնի ճանապարհը և «կենսական ուժը» չէր կարող մոլուք ունենալ ապակյա աման:

**Պաստյորի վիորճերը:** Ինքնածնության մասին գաղափարները պահպանվեցին մինչև 19 -րդ դարի կեսը: Ոեդիից միայն 85 տարի հետո՝ 1861 թ. ֆրանսիացի հռչակավոր գիտնական-քիմիկոս և մանրէաբան Լուի Պաստյորն ապացուցեց կենդանի օրգանիզմների ինքնածնության անհնարինությունը:

Պաստյորը մսացուրը լցուց Տ-աձև երկար վզիկ ունեցող սրվակի մեջ, որտեղ օդը թափանցում էր ազատորեն, մինչդեռ մանրէները թափանցել չէին կարողանում, քանի որ նստում էին Տ-աձև վզիկի ծնկանման մասում: Սրվակում գտնվող մանրէներին ոչնչացնելու համար Պաստյորը եռացրեց մսացուրը: Անցան ամիսներ, իսկ սրվակի

## **ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

պարունակությունը մնաց ստերիլ վիճակում: Սակայն բավական եղավ սրվակը շրջել այնպես, որ նրանում պարունակվող մսաջուրը շփվի վգիկի S-աձև ծնկան հետ և հոսի սրվակի մեջ, որպեսզի կարծ ժամանակից հետո սկսվի մսաջրի նեխումը: Դա տեղի էր ունենում վգիկի S-աձև ծնկում գտնվող մանրէների մսաջրի մեջ թափանցելու պատճառով: Այս փորձի միջոցով Պաստյորը համոզիչ կերպով ապացուցեց մանրէների ինքնածնության անհնարին լինելը (**նկ. 9**):



**Նկ. 9. L.Պաստյորի փորձը:**

**Կյանքի ծագման ժամանակակից պատկերացումները:** Ըստ կյանքի ծագման ժամանակակից պատկերացումների՝ կյանքը երկրի վրա ծագել է անկենդան նյութից՝ մեր մոլորակի էվոլյուցիայի ընթացքում՝ նրա գոյության որոշակի փուլում: Երկրի վրա կենդանի կիմնական սկզբնանյութը սպիտակուցն է: Հետազոտողների մեջ մասը գալիս է այն եղրակացության, որ երկրի վրա կյանքի ծագմանը և կենդանի օրգանիզմների էվոլյուցիային նախորդել է քիմիական միացությունների երկարատև էվոլյուցիան:

Ժամանակակից պատկերացումների համաձայն կյանքը գոյություն ունեցող բարդ համակարգերի գործընթաց է, որոնք բաղկացած են բազմաթիվ օրգանական մոլեկուլներից և անօրգանական նյութերից, ընդունակ են ինքնավերարտադրվել, ինքնազարգանալ և ապահովել գոյությունը շրջապատող միջավայրի հետ նյութափոխանակության և էներգիայի փոխանակության հետևանքով:

Երկրի վրա կյանքի ծագման ամենահավանական վարկածներից է ռուս գիտնական **Ա.Ի. Օպարինի** (1924թ.) (**նկ. 10**) և անգլիացի գիտնական **Զ. Ռոլեբյեմի** (1929թ.)

---

#### ԳԼՈՒԽ 1. ԵՐԿԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԵՐԸ

---

կյանքի անօրգանական նյութերից ծագելու վարկածը: Ըստ Օպարինի Երկրի վրա նրա երկարատև էվոլյուցիայի փուլերից մեկում առաջանում են այնպիսի պայմաններ, որոնց դեպքում կյանքի ծագումը դաշնում է հնարավոր և նույնիսկ անխուսափելի:



Նկ. 10. Ա.Ի.Օպարին:  
(1894 -1980թթ.)

Համաձայն Օպարինի վարկածի և ժամանակակից լրացուցիչ տվյալների՝ երիտասարդ Երկիր մոլորակն առաջանալուց հետո, սկզբում եղել է սառը տիեզերական մարմին: Հետագայում իր մեջ պարունակվող ռադիոակտիվ տարրերի տրոհման շնորհիվ սկսել է տաքանալ: Նրա ընդերքում ջերմաստիճանը հասել է մինչև  $1000^{\circ}$  C: Այդպիսի ջերմաստիճանի պայմաններում կարծր ապարները հալվում են և առաջացած քիմիական տարրերը բաշխվում են տարրեր խորություններում. ամենածանրերը՝ խորքում, թեթևաները՝ միջին մասերում, իսկ ամենաթերևաները՝ մակերևույթին:

Դրա հետևանքով տեղի է ունեցել երկարի և երկարի օքսիդների ծանր համաձուլվածքների արագ հոսք դեպի մոլորակի կենտրոն, որտեղ ձևավորվել է Երկրի ամուր միջուկը: Այս փուլում առաջացած քիմիական նյութերը ռեակցիայի մեջ են մտնում իրար հետ: Այդ ռեակցիաների ընթացքում առաջացած գագերը վիթխարի ծնշման տակ ժայթքում և դուրս են գալիս Երկրի մակերևույթը (Նկ.11):



Նկ. 11. Երկրի կեղևի առաջացումը:

## **ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՍԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

Թերեւ գագերը՝ ջրածինը, հելիումը, ազոտը և արգոնը, դուրս էին գալիս մթնոլորտից, քանի որ Երիտասարդ Երկրի մոլորակի ծգողական դաշտը բավարար չէր դրանք պահելու համար: Մինչդեռ այս և այլ տարրեր պարունակող պարզ միացությունները մնում էին Երկրի վրա. դրանց թվում էին՝ ջուրը, ամոնիակը, ածխածնի Երկօքսիդը, մեթանը և այլն: Ըստ Երևույթին այսպես առաջացավ Երիտասարդ Երկրի առաջնային մթնոլորտը՝ կազմված գազային միացություններից, որի բաղադրության մեջ, հավանաբար, եղել են ջրային գոլորշիններ, ածխածնի օքսիդ, ածխածնի Երկօքսիդ, մեթան, ծծմբաջրածին, ամոնիակ և այլն: Մոլեկուլային թթվածինը բացակայում էր:

Երկրի մակերևույթի ջերմաստիճանն աստիճանաբար իջնում է, որի հետևանքով Երկրագունդը սկսում է սառչել և քիմիական տարրերը վերադասավորվում են, ավելի թերևները՝ (ածխածին, ազոտ, ջրածին) դասավորվում են մակերևույթին, իսկ ծանրերը՝ ընդերքի տարրեր շերտերում: Ածխածինը և դժվարահալ մետաղները սառչելուն գուգընթաց խտանում էին և կազմում Երկրի կեղևը:

Երկրի կեղևի նյութը կազմում է լիթոսփերային (քարուղորտային) շերտերի համեմատաբար բարակ մասը և սահմանակից է մանթիայի վերին շերտին: **Մանթիան** քարուղորտի և միջուկի միջև գտնվող սիլիկատային թաղանթ է:

Երկրի սկզբնական կեղևը կազմված էր բյուրեղային հանքատեսակներից: Կեղևի բաղադրության մեջ բացի ածխածնից մտնում էին ալյումինի, երկաթի, մագնեզիումի, նատրիումի, կալիումի և այլ տարրերի միացություններ: Այն սկզբում շատ անկայուն էր, և Երկրի կեղևի անդադար տեղաշարժերն առաջացնում էին ճեղքեր և ծալքեր: Այդ ճեղքերից դուրս էր հոսում Երկրագնդի հրահեղուկ պարունակությունը և, թաղանթի մակերեսի վրա սառչելով, առաջացնում մեծ ու փոքր խորդուրդություններ, բարձրություններ, խորացումներ:

Միլիոնավոր տարիներ հետո Երկրագնդի ջերմաստիճանն իջնում է մինչև  $100^{\circ}\text{C}$ : Զերմաստիճանի հետագա նվազման հետևանքով առաջացած ջրային գոլորշիները խտանալով՝ վերածվում էին տաք անձրևաջրերի և հեղեղների ձևով թափվում էին Երկրի վրա՝ իրենց հետ տանելով մթնոլորտում եղած նյութերը: Միլիոնավոր տարիներ տեղացող հորդառատ անձրևների հետևանքով սկսեցին ձևավորվել առաջնային մեկուսացված ծովային ավազանները, որոնք հետագայում միավորվեցին մեկ, ոչ խորը Համաշխարհային օվկիանոսի մեջ:


Համաշխարհային օվկիանոսի անձրևային տաք ջրերում բացի մթնոլորտում գտնվող նյութերից՝ լուծվում էին նաև Երկրի մակերևութային շերտերից լվացվող հանքային աղերը և այլ նյութեր: Առաջնային մթնոլորտում ուլտրամանուշակագույն և իոնացնող ճառագայթներն օգնուի բացակայության հետևանքով ուժգնորեն էին ներգործում Երկրի մակերևույթի վրա: Ամպրոպների հաճախականությունը մեծանում էր և առավել ուժգնանում: Մթնոլորտում հաճախակի տեղի ունեցող հզոր էլեկտրական պարագումների, ուլտրամանուշակագույն ճառագայթների ներգործությամբ առաջնային օվկիանոսում լուծված նյութերի միջև պետք է որ տեղի ունենային քիմիական ռեակցիաներ, որոնց հետևանքով կարող էին առաջանալ օրգանական միացություններ (**նկ. 12**):



Նկ. 12. Առաջնային մեկուսացված ծովային ավագանների առաջացումը Երկրի վրա:

Նման հետևությունների, Օպարինից անկախ, 1929թ. հանգել է նաև անգլիացի կենսաքիմիկոս **Զ.Բ. Շոլդեյնը**, ով նույնպես առաջարկեց կյանքի ծագման ոչ կենսածին՝ արիոգեն վարկածը: Ըստ նրա Երկրի վրա որպես օրգանական միացությունների առաջացման էներգիայի աղբյուր էին Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթները: Առաջացած օրգանական միացությունները կուտակվում էին Արեգակի միջոցով տաքացվող ծանծաղ ջրամբարներում: Զրի գոլորշիացման հետևանքով տեղի էր ունենում դրանց խտացում «առաջնային արգանակի» տեսքով: Ըստ երևույթին հենց այդպիսի «առաջնային արգանակում» էլ առաջացել է կյանքը:

Օպարին-Շոլդեյնի վարկածն ընդունվել է տարբեր երկրների շատ գիտնական-ների կողմից և իհմք է դարձել անգլիացի գիտնական **Զոն Բեռնալի** կողմից 1947թ. առաջարկած Երկրի վրա կյանքի ծագման ժամանակակից՝ **կենսագենեզի** վարկածի համար (նկ. 13):



Նկ. 13. Երկրի վրա կյանքի ծագման փուլերի գծապատկերը:

## **ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՍԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

Ըստ այդ վարկածի կյանքի ծագումը երկրի վրա ընթացել է երեք փուլով՝

- 1. Քիմիական էվոլյուցիայի փուլ:** Աբիոգեն ճանապարհով օրգանական մոնոմերների առաջացում:
- 2. Նախակենսաբանական էվոլյուցիայի փուլ:** Կենսաբանական պոլիմերների առաջացում:
- 3. Կենսաբանական էվոլյուցիայի փուլ:** Թաղանթային կառույցների և առաջին պրոբիոնտների առաջացում:

**Դարցեր կրկնության համար.**




1. Անտիկ շրջանի փիլիսոփաներն ինչպես էին բացատրում օրգանիզմների ծագումը երկրի վրա:
2. Բերեք երկրի վրա կյանքի ծագման ձեզ հայտնի բոլոր վարկածները:
3. Բացատրեք պանսաբերմիայի վարկածը:
4. Որ՞ն է Ֆ.Ռեդիի փորձերի նշանակությունը:
5. Նկարագրեք L.Պաստյորի փորձը, որն ապացուցում էր կյանքի ինքնածնության անհնարին լինելը:
6. Ի՞նչ գործնական նշանակություն ունեն Պաստյորի աշխատությունները:
7. Որո՞նք են երկրի վրա կյանքի ծագման հիմնական վարկածներն ըստ Ա.Ի.Օպարինի:
8. Երկրի վրա որտե՞ղ և ինչպես են առաջացել առաջին օրգանական միացությունները:

## **2. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՍՈՆՈՄԵՐՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊՈԼԻՄԵՐՆԵՐ**

**Օրգանական միացությունների ոչ կենսածին սինթեզը:** 1953 թ. ամերիկացի գիտնականներ Ս. Միլլերը և Գ. Յուրինը, ապակյա սրվակում ջրում լուծված ամոնիակի, ջրածնի և մեթանի խառնուրդի վրա ազդելով էլեկտրական պարագումների միջոցով, ստացան օրգանական նյութեր: Դրանով նրանք ապացուցեցին բարդ օրգանական նյութերի առաջացումն անօրգանական նյութերից, ինչը կարող էր տեղի ունենալ նախական օվկիանոսի ջրերում (**Ընդ. 14:**):

Ահա այդ պայմաններում սկզբնական օվկիանոսի տաք ջրերում ածխաջրածիններն ու ամոնիակն իրենց ածանցյալներով առաջացրին օրգանական միացություններ, այդ թվում սպիտակուցի հիմքը կազմող ամինաթթուներ:

Օպարինը գտնում է, որ երկրի վրա կյանքի ծագման ճանապարհին առաջին քայլը եղել է անօրգանական նյութերից օրգանական մոլեկուլների ոչ կենսաբանական (արիոգեն) սինթեզը:



Նկ. 14. Երկրի առաջնային մթնոլորտի առաջացումն ապացուցող Ա.Միլերի փորձը. 1-էլեկտրական կայճ, 2-սառնարան, 3-օրգանական նյութեր, 4-ջրի ելք:

**ԿԵՆՍԱՊՈՂԻՄԵՐՆԵՐԻ ԱՌԱՋԱԳՈՒՄԸ և ԷՎՈԼΥՈՒՋԻԱՆ:** Օպարինի վարկածի համաձայն Երկրի վրա կյանքի ծագման երկրորդ քայլն առաջացած պարզ օրգանական նյութերի կուտակումն էր նախնական օվկիանոսի ջրերում և դրանց հետագա փոխակերպումն ավելի բարդ ու բազմազան օրգանական միացությունների՝ մոնոմների և պոլիմերների: Այդ փոխակերպումները տեղի են ունեցել շատ նվազ թթվածին պարունակող միջավայրում:

Օրգանական նյութերն առաջնային օվկիանոսի ջրերում սկզբում գտնվում էին նոսր լուծույթի ձևով, այնուհետև դրանք խտանում, կենտրոնանում էին և առաջացնում կոացերվածներ: Ա.Ի.Օպարինը նշում է, որ կոացերվածի կարիմերն ունեին արտաքուստ կենդանի համակարգ հիշեցնող մի շարք հատկություններ: Դրանք ընդունակ էին շրջապատող լուծույթից, իրենց կայունությունն ապահովելու համար, ընտրողաբար կլանել զանազան նյութեր, մեծանալ չափերով, ինչպես նաև իրենց ներսում կատարվող քիմիական ռեակցիաների ժամանակ առաջացած որոշ նյութեր արտագատել շրջապատող միջավայր: Այս ամենը նման էր սննան, ածնան, արտազատման, նյութափոխանակության գործնթացներին: Արտաքին միջավայրից նյութերի կլանման հետևանքով կոացերվածներն անընդհատ մեծանալով՝ տրոհվում էին դուստր կոացերվածների, որոնք հաճախ նորից մեծանալով՝ նմանվում էին ելակետային ձևին: Ա.Ի.Օպարինի կարծիքով՝ կոացերվածի կարիլի մեջ սկսել է գործել նաև բնական ընտրություն: Բնական ընտրության հետևանքով՝ պահպանվել և գոյատևել են այն կոացերվածները, որոնք ավելի են համապատասխանել գոյության անընդհատ փոփոխվող պայմաններին:

Թեև կոացերվածներն իրենց ձևով և հատկություններով արտաքուստ նման էին կենդանի օրգանիզմի, սակայն դրանք անկենդան գոյացություններ էին: Դրանք դեռ չունեին կենդանի օրգանիզմի գլխավոր հատկանիշը՝ իրեն վերարտադրելու ընդունակությունը: Այդ պատճառով կոացերվածներին դեռ չի կարելի կենդանի օրգանիզմներ համարել: Այդպիսի սպիտակուցային կոացերվածներն Օպարինի կողմից դիտարկվում էին որպես կենդանի օրգանիզմի նախնիներ՝ **պրոբիոնտներ**: Օպարինը ենթադրում էր, որ կոացերվածները կարող են առաջանալ առաջնային մթնոլորտի առաջացումից հետո:

## **ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՍԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

րում էր, որ որոշակի փուլում այդ պրոբիոնտները ձեռք են բերում նույնագույն առաջացնում են նոր համակարգեր: Այս իրադարձությունների արդյունքում պետք է առաջանար պարզունակ ինքնավերարտադրվող հետերոտրոֆ օրգանիզմ, որը պետք է սնվեր առաջնային օվկիանոսում լուծված օրգանական նյութերով:

Ա.Ի. Օպարիխն օվկիանոսում կոացերվածների մոլեկուլների ինքնավերարտադրման գործընթացի առաջացումը: Ինքնավերարտադրման հատկությունը կապված է նույնագույն առկայության և դրանց կրկնապատկման ընդունակության հետ, որի հետևանքով կարող են սինթեզվել խիստ որոշակի կառուցվածք ունեցող բարդ օրգանական միացություններ՝ սպիտակուցային պոլիմերներ: Դնարավոր է, որ առաջին ինքնավերարտադրվող կոացերվածի մոտ ի հայտ է եկել կենդանի համակարգերի համար այնքան բնորոշ մատրիցային սինթեզը:

Ամերիկացի գիտնական **Սիդնեյ Ֆոքսը** 1957 թ. ուսումնասիրելով Երկրի վրա կյանքի ծագման վարկածները՝ լաբորատոր պայմաններում կարողացավ ստանալ ամինաթթուներ և ցույց տվեց, որ ամինաթթուների և ավելի բարդ պրոտեինունիդների սինթեզը հնարավոր է  $60^{\circ}\text{C}$ -ից մինչև  $210^{\circ}\text{C}$  ջերմաստիճանային պայմաններում: Ս.Ֆոքսը համարում էր, որ սպիտակուցային նյութերը կարող էին սինթեզվել ծանծաղութ ջրամբարներում, որոնք տաքանում էին Արեգակի ճառագայթներից: Զրի գոլորշիացման հետևանքով մեծանում էր սինթեզվող նյութերի խտությունը, և լուծույթը ձեռք էր բերում խտացված «արգանակի» տեսք: Ըստ Երևույթին այդպիսի «առաջնային արգանակի» մեջ է առաջացել կյանքը:

Դրաբխային լավայից վերցված չոր ամինաթթուների խառնուրդը մինչև  $100^{\circ}\text{C}$  տաքացնելիս Ս. Ֆոքսը ստացավ պոլիպեպտիդ, որի մոլեկուլային զանգվածը հասնում էր 10.000 ածխածնային միավորի:

Այդ պոլիպեպտիդները Ֆոքսն անվանեց **պրոտեինոիդներ**: Պրոտեինոիդները, ֆերմենտների նման, օժտված էին կատալիտիկ հատկություններով և ընդունակ էին առաջացնել նման կոացերվածային կաթիլներ:

Փորձարարական ճանապարհով Ս. Ֆոքսը ապացուցեց, որ պրոտեինոիդների խիստ, տաքացված լուծույթների սառեցման դեպքում ինքնարերաբար առաջանում են մոտ 2 մկմ տրամագծով կաթիլներ՝ **միկրոսֆերաներ**: Միջավայրի թԲ-ի որոշակի պայմաններում այդ կաթիլներում ձևավորվում են ժամանակակից քիչների թաղանթներին նման թաղանթներ: Միկրոսֆերաներն օժտված էին նաև կիսվելու ընդունակությամբ: Չնայած միկրոսֆերաները չեն պարունակում նույնագույն նույնագույն առաջնային արգանակի միավորը, ունենալու համար առաջնային արգանակի միավորը պարունակում է առաջնային արգանակի միավորը:

**Դարցեր կրկնության համար.**



1. Ո՞ր անօրգանական նյութերն էին ծառայում որպես առաջնային մթնոլորտ Միլլերի սարքում:


## **ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԵՐԸ**

2. Ի՞նչ օրգանական նյութեր էին առաջանում Միլլերի սարքում:
3. Երկրի տաքանալու շնորհիվ ի՞նչ է տեղի ունենում քիմիական տարրերի հետ:
4. Ինչպես առաջացավ առաջնային օվկիանոսը Երկրի գոյության վաղ շրջանում:
5. Ինչպես են առաջացել օրգանական միացություններն առաջնային օվկիանոսում:
6. Ի՞նչ միացություններ էին լուծված առաջնային օվկիանոսի ջրերում:
7. Ի՞նչ հատկություններ ունեին կոացերվատները:
8. Ի՞նչ հատկություններ ունեին միկրոսֆերաները:

## **3. ԹԱՂԱՆԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԵՆՍԱՊՈԼԻՄԵՐՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ**

Առաջնային օվկիանոսի ջրերում առաջացած կոացերվատային կաթիլները բազմամուլեկուլային համակարգեր էին՝ օժտված պարզագույն կազմությամբ: Այդ կաթիլներում օրգանական նյութերն ունեին բարձր խտություն, և մոլեկուլներն ավելի խիտ էին դասավորված: Դա մեծացնում էր նրանց փոխազդեցության և օրգանական սինթեզի հնարավորությունը: Առանձին փոքր կոացերվատները կուտակվելով մեկ տեղում սկսեցին միանալ միմյանց՝ առաջացնելով կոացերվատային ագրեգատներ, որոնք կազմված էին մեկ ընդհանուր ջրային թաղանթով շրջապատված օրգանական բազմաթիվ մոլեկուլներից: Կոացերվատների և արտաքին միջավայրի սահմանում գտնվում էին լիպիդների մոլեկուլները, որոնք պատում էին ջրի մակերևույթը լիպիդային թաղանթով: Այդ թաղանթին միանում էին ջրում լուծված տարրեր պետիդներ: Քանուց ջրի մակերևութային շերտի տատանման հետևանքով՝ թաղանթից կոացերվատները կարող էին պոկվել բշտիկների ձևով, որ բարձրանալ և նորից հետ ընկնել ջրի լիպիդային շերտի վրա ու պատվել լիպիդա-պետիդային թաղանթով (**Ակ.** **15**): Այդ շերտը պաշտպանում էր կոացերվատներին և ապահովում դրանց միմյանցից անկախ գոյությունը:

Հայտնի է, որ շատ նյութերի, մասնավորապես, ճարպերի և պոլիպետիդների մոլեկուլները կազմված են ջրի հետ տարրեր հարաբերություններ ունեցող մասերից: Կոացերվատների և լուծույթների սահմանին գտնվող մոլեկուլների հիդրոֆիլային մասերը հակված էին դեպի լուծույթը, որտեղ ջրի պարունակությունն ավելի մեծ էր, իսկ ջուր վանող, այսպես կոչված հիդրոֆիբրային մասերը՝ ուղղված էին դեպի կոացերվատի ներսը, որտեղ ջրի խտությունն ավելի փոքր էր: Կոացերվատային ագրեգատների քանակը մեծանալուն զուգընթաց, այդ կոացերվատների մոլեկուլները ռեակցիայի մեջ էին մտնում միմյանց հետ՝ ծեռք բերելով ավելի կանոնավոր կառուցվածք, առաջացնելով ավելի բարդ օրգանական համակարգեր: Դրա շնորհիվ կոացերվատի մակերևույթը ծեռք էր բերում որոշ նյութեր մեկ ուղղությամբ բաց թողնելու կամ չքողնելու հատկություն: Այդպիսի ընտրողականության ունակություն ունեն կենդանի բջիջները:



Նկ. 15. Կենսաբանական թաղանքի առաջացման գծապատկերը. Ա-ջրի մակերևույթին առաջացող թաղանք, 1-սպիտակուցներ, 2-լիպիդներ, Բ-ջրի մակերևույթի տատանումը թաղանքից ձևավորված բշտիկի պոկվելը ջրի մակերեսից, Գ-բշտիկը՝ պատված լիպիդա-պետպիդային թաղանքով:

Սա հանգեցրեց պարզագույն բջջային թաղանքի կազմավորմանը՝ ապահովելով կոացերվատային ագրեգատի կայունությունը: Կոացերվատային կաթիլները դառնում են միջավայրից մեկուսացված համակարգեր: Նյութափոխանակության բարդացումը, ըստ երևույթին, պատճառ հանդիսացավ, որպեսզի կոացերվատների շուրջն առաջանա լիպիդների շերտից կազմված կենսաբանական թաղանք, որը կոացերվատը բաժանում է շրջապատող ջրային միջավայրից և պաշտպանում նրա պարունակությունը: Էվոլյուցիայի հետագա ընթացքում լիպիդներն առաջացնում են արտաքին թաղանք, որն էականորեն բարձրացնում է կենդանի օրգանիզմների կենսունակությունն ու կայունությունը: Կենսաբանական թաղանքներն ապահովում են կոացերվատների ամբողջությունը և կենսաբանական գործընթացների պաշտպանությունը: Թաղանքների առաջացմանը զուգընթաց կարգավորվում և կատարելագործվում էր նյութափոխանակություն՝ կապված գենետիկական ծրագրերի և տրանսլյացիոն գործընթացների հետ: Ըստրողական թափանցելիությամբ օժտված թաղանքի առաջացումը նպաստեց առավել կատարյալ ինքնակարգավորվող համակարգերի զարգացմանը՝ ընդհուպ մինչև առաջին բջջների առաջացումը: Ըստ երևույթին, հենց այդպիսի պատմական զարգացման ընթացքում է տեղի ունեցել առաջնային օրգանիզմների՝ կոացերվատների փոխարկումը ժամանակակից բջջի:

Ըստ Օպարինի՝ այդպիսի պրոբիոնտներին, որոնց նյութափոխանակության ունակությունը համընկնում է ինքնակերարտադրման ունակության հետ, կարելի է համարել պարզագույն նախաբջիջների նախատիպ: Նման համակարգերում նյութափոխանակության բարդացման մեջ էական դեր պետք է խաղային կատալիզատորները: Յնարավոր է, որ պրոբիոնտում կարող էր առաջանալ պրոտեինուիդ, որը կարող էր կատալիզել նուկլեոտիդների պոլիմերացումը և նպաստել 10-12 նուկլեոտիդից կազմված օղակաձև ՈՆԹ-ի առաջացմանը: Փորձով ապացուցված է, որ

## **ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

ամինաբրուների և նույլեոտիդների միջև հնարավոր են յուրահատուկ փոխազդեցություններ, որոնց արդյունքում կարող է առաջանալ պարզունակ (առանց ոիբրոսունների) սպիտակուցի կենսասինթեզի ապարատ, որն էլ հետագայում բարդացավ և կատարելագործվեց:

Այդպես են առաջացել պրոբիոնտները՝ «առաջնային արգանակ»-ի օրգանական նյութերով սնվող հետերոտրոֆ օրգանիզմները: Պրոբիոնտների առաջացմամբ ավարտվեց քիմիական էվոլյուցիան և սկսվեց կենսաբանական էվոլյուցիայի ժամանակաշրջանը:



### **Դարցեր կրկնության համար.**

1. Ինչպե՞ս է առաջացել կենսաբանական թաղանթը:
2. Ի՞նչ հատկություն ունեին պրոբիոնտները:
3. Ինչպիսի՞ օրգանիզմներ են պրոբիոնտները:
4. Ինչպե՞ս են առաջացել կոացերվատային ագրեգատները:
5. Ի՞նչ յուրահատկություն ունեին կոացերվատային կաթիլները:
6. Ի՞նչ դեր է խաղում լիպիդների առկայությունը կենսաբանական թաղանթում:

## **4. ՄԻԱԲՁԻՉՆԵՐԻ ԷԿՈԼՅՈՒԹԻԱՆ (ՆԱԽԱԿՈՐԻՉԱՎԱՐՈՂՆԵՐ ԵՎ ԿՈՐԻՉԱՎԱՐՈՂՆԵՐ)**

Գենետիկական տեղեկատվության վերարտադրման հուսալի մեխանիզմի առաջացումը բերեց կյանքի ծագման գործընթացի երկրորդ փուլի ավարտին: Ավարտվում է քիմիական էվոլյուցիայի դարաշրջանը և սկսվում է կենսաբանական էվոլյուցիան:

Առաջին օրգանիզմներն, ըստ Երևույթին, եղել են պարզունակ բակտերիաները, որոնց քարացած մնացորդները և կենսագործունեության արգասիքները հայտնաբերվել են 3,5 մլրդ տարվա նստվածքներում: Դատելով քարացած նստվածքներից՝ այդ օրգանիզմները եղել են ձողիկաձև և հիշեցնում են ժամանակակից բակտերիաները: Ելեկտրոնային մանրադիտակով ուսումնասիրելիս դրանց մոտ հայտնաբերվել է ժամանակակից բակտերիաների բջջապատին նմանվող երկշերտ բջջապատ: Եթե նստվածքներում հայտնաբերված մնացորդներն իսկապես պատկանել են պրոկարիոտ օրգանիզմներին կամ եղել են դրանց կենսագործունեության արգասիք, ապա կարելի է ասել, որ այդ ժամանակ արդեն ձևավորված են եղել կյանքի որոշակի տիպեր: Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ կյանքն առաջացել է մոտավորաես 3,5 մլրդ տարի առաջ, եթե միակ կենդանի օրգանիզմները եղել են պարզագույն միկրոօրգանիզմները:


Առաջնային պարզ օրգանիզմներն եղել են հետերոտրոֆներ: Դրանք սնվել են անթրվածնային պայմաններում արիոգեն ճանապարհով առաջացած պատրաստի

## **ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

օրգանական նյութերով։ Մեծ քանակությամբ հետերոտրոֆ օրգանիզմների առաջացումը պատճառ հանդիսացավ առաջնային օվկիանոսում օրգանական նյութերի պաշարների աստիճանաբար սպառման համար, իսկ նոր նյութերի սինթեզը չէր բավարարում առաջացող պահանջին։ Սկսվել էր պայքար սննդանյութերի համար, որում գոյատևում էին առավել ակտիվները։ Օրգանական միացությունների պաշարի շարունակ պակասելու պայմաններում՝ որոշ օրգանիզմներ անցան ավտոտրոֆ սննդառության։ Դրանց մի մասը բնական ընտրության ընթացքում ձեռք բերեց հնարավորություն անհրաժեշտ օրգանական նյութերի սինթեզի համար օգտագործել անօրգանական նյութերի օքսիդացման ժամանակ անջատված էներգիան։ Այսպես ծագեց **քեմոսինթեզը**։

Առաջին ավտոտրոֆ օրգանիզմներն առաջացել են մոտ 3 մլրդ տարի առաջ։ Դրանք անաերոր բակտերիաներն էին՝ ժամանակակից ֆոտոսինթետիկ բակտերիաների նախնիները։ Դրանք, հավանաբար, իրականացրել են ֆոտոսինթեզ, որը բնորոշ է ժամանակակից ծծմբային ծիրանագույն բակտերիաներին։ Զրածնի աղբյուր էին նաև օրգանական միացությունները։ Նման տիպի ֆոտոսինթեզի արդյունքում թթվածին չի անջատվում։

Եվոլյուցիայի ընթացքում ֆոտոսինթեզող օրգանիզմների հաջորդ քայլը ջրի օգտագործումն էր որպես ջրածնի աղբյուր։ Այդ օրգանիզմների կողմից ածխաբթու գազի ավտոտրոֆ յուրացումն ուղեկցվում է թթվածնի անջատմամբ։ Առաջին ֆոտոսինթեզող օրգանիզմները, որոնք իրականացրել են ֆոտոսինթեզ թթվածնի անջատմամբ, կապտականաչ ջրիմուռներն են եղել։ Դրանք կարողացել են օգտագործել մթնոլորտային ազոտը, իենց այդ պատճառով էլ կարող էին գոյատևել ածխաջորից և ազոտային միացություններից ամբողջությամբ գերծ պայմաններում (**նկ. 16**)։




**Նկ. 16. Կապտականաչ ջրիմուռների արտաքին կառուցվածքը։**

Քանի որ կապտականաչ ջրիմուռներն առաջացել են այն ժամանակ, երբ թթվածնի քանակությունը մթնոլորտում տատանվում էր, հնարավոր է, որ դրանք հանդի-

## ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՍՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԵՐԸ

սացել են աերոր և անաերոր օրգանիզմների միջև անցումային ծներ: Առաջնային միաբղիջ օրգանիզմների ֆոտոսինթետիկ գործունեության արգասիքները նկատելի ազդեցություն են թողել կենդանի օրգանիզմների հետագա էվոլյուցիոն զարգացման վրա: Առաջին հերթին օրգանիզմներն ազատվեցին օրգանական աբիոգեն նյութերի բնական պաշարների համար մղվող նրացակցությունից: Ավտոտրոֆ սննդառության զարգացման հետ պայմաններ ստեղծվեցին ավտոտրոֆ և հետերոտրոֆ օրգանիզմների հսկայական բազմազանության ստեղծման համար: Մթնոլորտը հարստացավ ազատ թթվածնի բավական մեծ քանակությամբ: Թթվածնի առկայությամբ հնարավոր եղավ իրականացնել էներգիապես առավել շահավետ թթվածնային տիպի նյութափոխանակություն, ինչը նպաստեց աերոր բակտերիաների առաջացմանը:

Ժամանակի ընթացքում բնական ընտրությունը նպաստել է այնպիսի օրգանիզմների առաջացմանը, որոնք ընդունակ էին կլանելու արեգակնային էներգիան և սինթեզելու օրգանական նյութեր ու մթնոլորտ արտազատելու թթվածին: Այսպես առաջացավ ֆոտոսինթեզը, որը վիրտարի ազդեցություն ունեցավ կյանքի հետագա էվոլյուցիայի վրա: Ֆոտոսինթեզի արդյունքում ջրում և մթնոլորտում սկսեց կուտակվել ազատ թթվածին, որի հանդես գալու հետ մեկտեղ առաջացավ օրգանական նյութերի, մասնավորապես ածխաջրերի ճեղքավորման թթվածնային ուղին: Այն նոտավորապես 20 անգամ ավելի արդյունավետ է ճեղքավորման անթթվածին ուղղուց: Աստիճանաբար ձևավորվեց ռադիոակտիվ ճառագայթման կործանարար ազդեցությունից երկրագունդը պաշտպանող օգոնային շերտը (**նկ. 17**):



Նկ. 17. Երկրագունդը պաշտպանող օգոնային շերտի առաջացումը:

Ֆոտոսինթեզը կարևոր նշանակություն ունեցավ Երկրագունդի վրա կյանքի հետագա զարգացման համար: Նյութափոխանակության աերոր տիպի և ֆոտոսինթեզի ի հայտ գալուց հետո Երկրի կենսաբանական էվոլյուցիայի ամենակարևոր քայլ պետք է համարել էռկարիոտ քիչների և բազմաթիջ օրգանիզմների առաջացումը:


## ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿԱՅԱՔԻ ԾԱԳՄԱՆ ՍԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**ԷՌԱԿԱՐՀՈՒԾ ԲԺԻՇՆԵՐԻ Առաջացման վարկածներ:** Գիտնականների մեջ մասն այն կարծիքն է, որ էռկարհուտ բժիշներն առաջացել են պրոկարհուտ բժիշներից: Էռկարհուտ բժիշների և դրանց օրգանիզմների առաջացման վերաբերյալ գոյություն ունի երկու վարկած՝ **առւտոգեն (ինքնածին) և սիմբիոտիկ:**

Ըստ առւտոգեն վարկածի էռկարհուտ բժիշն առաջացել է ելակետային պրոկարհուտ բջից՝ տարբերակման ճանապարհով: Սկզբում առաջացել է արտաքին թաղանթը, ապա թաղանթի ներփակման շնորհիվ առաջացել են առանձին կառույցներ, որոնք սկիզբ են տվել բջջային օրգանիզմներին (**նկ. 18**):

Դաջորդ վարկածը սիմբիոտիկն է: Առաջին անգամ սիմբիոգենեզի միտքն առաջ է քաշել ռուս գիտնական **Ա.Ս.Ֆոմինցինը**, իսկ հետագայում այն մշակվել է ամերիկուհի գիտնական **Լին Ս.Մարգուլիսի** կողմից: Ս.Մարգուլիսի վարկածը բավականին հիմնավոր էր և այն ընդունվեց շատ գիտնականների կողմից:


Սիմբիոտիկ վարկածի համաձայն՝ էռկարհուտ բժիշն առաջացել է մի քանի հաջորդական սիմբիոգեների արդյունքում:



Նկ. 18. Ներփակման ճանապարհով էռկարհուտ բժիշների առաջացման գծապատկերը. 1-մայնաբժիշ, 2-պրոկարհուտ բժիշ, 3, 4, 5-բժիշներ, որտեղ ձևավորվում են միտոքոնդրիումները, պլաստիդները, կորիզը, 6, 7-կենդանիների և բույսերի բժիշներ:

## ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԵՐԸ

Համաձայն այդ վարկածի էռկարիոտ բջջի մի շարք օրգանոիդներ՝ պլաստիդները, միտոքրոնդրիումները, ինչպես նաև մտրակների ու թարթիչների մարմնիկները, ինչ-որ ժամանակ եղել են ազատ ապրող պրոկարիոտ բջջներ: Դրանք օրգանոիդներ են դարձել սինթիոզի հետևանքով: Սկզբնական բջջը եղել է հետերոտրոֆ ամերիանան օրգանիզմ, որը սնվում էր ավելի մանր բջջներով, այդ թվում նաև թթվածին օգտագործող աերոր բակտերիաներով: Այդ բակտերիաներն ընդունակ էին գործել նաև տիրոջ մարմնում՝ անջատելով էներգիա: Հետագայում աերոր բակտերիաները վերածվեցին միտոքրոնդրիումների: Նման սինթիոտիկ պրոկարիոտ բջջը սինթիոզի մեջ է մտնում կապտականաչ ջրիմուռների և ծիրանագույն բակտերիաների հետ, որոնց ԴՆԹ-Ն և ՈՆԹ-Ն կառուցվածքով խիստ նման են ժամանակակից էռկարիոտ բջջների միտոքրոնդրիումների և քլորոպլաստների սեփական ԴՆԹ-ին և ՈՆԹ-ին (**նկ. 19**):



Նկ. 19. Էռկարիոտ բջջների սինթիոտիկ առաջացումը.  
1-պրորիոն, 2-անաերոր հետերոտրոֆ բջջ, 3-ֆոտոսինթեզող բակտերիա,  
4-աերոր բակտերիա, 5-անաերոր բակտերիա, 6-առաջնային կենդանական բջջ,  
7-առաջնային բուսական բջջ:

Չարժուն էռկարիոտները սինթիոզի մեջ մտնելով կապտականաչ ջրիմուռների հետ՝ իմք ծառայեցին ֆոտոսինթետիկ մտրակավորների, ջրիմուռների առաջացման համար:

Միաբջիջ էռկարիոտ օրգանիզմների հետագա էվոլյուցիան բերեց դիպլոիդության և սեռական գործընթացի առաջացման: Գեների բազմաթիվ համակցությունների առաջացումը նպաստեց այն կենդանի օրգանիզմների առաջացմանը, որոնք սկսեցին արագ բազմանալ: Սակայն կենսական միջավայրում գոյության պայմանները սահմանափակ էին: Միաբջիջ օրգանիզմները չէին կարող անսահման աճել, քանի որ շնչառության համար թթվածինը կլանում էին մարմնի ամբողջ մակերևույթով: Այդ պատճառով խոշոր միաբջիջ օրգանիզմում գգացվում էր թթվածնի մշտական պակաս և որպես հետևանք՝ էներգիայի պակաս:

## **ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՍԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

Կենդանի օրգանիզմների հետագա զարգացումը տեղի է ունեցել կենսաբանական էվոլյուցիայի միջոցով: Ժառանգական փոփոխությունների հետևանքով տվյալ պայմաններում պատահաբար ձեռք բերած օգտակար հատկանիշներն ամրապնդվում էին բնական ընտրությամբ: Ըստ երևույթին հենց այդպես՝ պատմական զարգացման ընթացքում է տեղի ունեցել առաջնային օրգանիզմների փոփարկումը ժամանակակից բջջի, որի շուրջն առաջացել է պաշտպանական քաղանք: Առաջացած բջջի կորիզանյութը սկզբում ցրված է եղել ցիտոպլազմայում, հետո դարերի ընթացքում այն խտացել, պնդացել և տարբերակվել է որպես բջջակորիզ, և այս ճանապարհով սկիզբ են առել կորիզային օրգանիզմները:

Ժամանակի ընթացքում անկորիզ պրոկարիոտ բջիջներից սկիզբ առան էուկարիոտ բջիջները: Ըստ երևույթին, էուկարիոտ բջիջն արդեն ուներ քրոմոսոմների կրկնակի հավաքակազմ, բջիջն հատուկ բոլոր օրգանոիդները: Էուկարիոտ բջիջները, բացի անսեռ եղանակով բազմանալուց, ձեռք են բերում նաև սեռական ճանապարհով բազմանալու առանձնահատկություն: Միաբջիջ օրգանիզմներն արագ բազմանում էին՝ գրավելով ամբողջ երկրագունդը: Մոտավորապես 2,5 մլրդ տարի առաջ միաբջիջ գաղութային նտրակավորներից առաջացան բազմաբջիջ օրգանիզմները:

### **Դարցեր կրկնության համար.**



1. Ինչպե՞ս առաջացան առաջին պրոկարիոտ օրգանիզմները:
2. Ե՞րբ են առաջացել ավտոտրոֆ օրգանիզմները:
3. Ի՞նչն էր ավտոտրոֆ օրգանիզմների առաջացման պատճառը:
4. Ինչպե՞ս առաջացավ ֆոտոսինթեզը և ի՞նչ դեր խաղաց կենսաբանական էվոլյուցիայի համար:
5. Ի՞նչ վարկածներ գոյություն ունեն էուկարիոտ բջիջների առաջացման վերաբերյալ:


## **5. ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՐԿՐԻ ՎՐԱ**

Օրգանական աշխարհի զարգացումը սերտորեն կապված է Երկիր մոլորակի պատմության հետ: Երկրի տարիքը մոտավորապես կազմում է 4,5-7 մլրդ տարի: Գիտնականները երկրի և լյանքի զարգացման պատմությունը բաժանում են երկար ժամանակահատվածների՝ դարաշրջանների, որոնցից յուրաքանչյուրը ստորաբաժանվում է ժամանակաշրջանների:

Յուրաքանչյուր երկրաբանական ժամանակահատվածի որոշման համար գիտնականներն օգտագործում են պեղումների ընթացքում բրածո օրգանիզմներում հայտնաբերված կայուն և ռադիոակտիվ իզոտոպների հարաբերությունը, ինչպես նաև Երկրի ընդերքում գտնվող ապարներում անօրգանական տարրերի հարաբերական

## ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԵՐԸ

քանակությունը, որը թույլ է տալիս որոշելու ապարի տարիքը: Օրգանական աշխարհի զարգացումը սերտողեն կապված է Երկրի պատմության հետ: Օրգանական աշխարհի երկրաբանական ժամանակագրությունը բաժանվում է և հինգ դարաշրջանների: Յուրաքանչյուր երկրաբանական ժամանակահատվածի համար բնորոշ են իր բրածո օրգանիզմները, որոնցով կարելի է որոշել տվյալ երկրաբանական նստվածքում գտնվող բրածո օրգանիզմի տարիքը (**նկ. 20**):




Նկ. 20. Երկրաբանական նստվածքների առաջացումը:

Տարբերում են **Արքեյան**, **Պրոտերոզոյան**, **Պալեոզոյան**, **Մեզոզոյան** և **Կայնո-դոյան** դարաշրջաններ:

**Արքեյան դարաշրջան:** Այն կազմավորվել է մոտավորապես 3,5 մլրդ տարի առաջ և տևել է մոտ 900 մլն տարի: Այս դարաշրջանում ի հայտ են եկել առաջին կենդանի օրգանիզմները (բակտերիաները, նախակենդանիները, կապտականազ ջրիմուռները): Դրանք հետերոտրոֆ օրգանիզմներ էին և որպես սնունդ օգտագործում էին պատրաստի օրգանական միացություններ: Արքեյան դարաշրջանի կեսերին ի հայտ եկան ֆոտոսինթեզի ընդունակ օրգանիզմներ: Ֆոտոսինթեզի առաջանալով՝ օրգանական աշխարհը բաժանվեց ավտոտրոֆ՝ բուսական և հետերոտրոֆ՝ կենդանական օրգանիզմների: Ֆոտոսինթեզող օրգանիզմների կենսագործունեության շնորհիվ ջուրը հագեցավ թթվածնով, և օվկիանոսից ազատ թթվածինն անցավ մթնոլորտ: Աստիճանաբար մթնոլորտում ավելացավ թթվածնի քանակությունը, և ստեղծվեցին բոլոր նախադրյաները կենդանի օրգանիզմների ցամաք դուրս գալու համար: Ի հայտ եկան առաջին բազմաթիջ օրգանիզմները: Առաջին բազմաթիջ կենդանիներն, ըստ երեւույթին, նման են եղել սպունգներին և աղեխորշավորներին, որոնց զարգացումը բերել է ցածրակարգ քորդավորների ի հայտ գալուն:

**Պրոտերոզոյան դարաշրջան:** Դա Երկրի պատմական զարգացման ամենաերկարատև դարաշրջանն է եղել: Այն տևել է մոտ 2.000 մլն. տարի: Պրոտերոզոյան դարաշրջանում շարունակվել է կենդանի օրգանիզմների կառուցվածքի բարդացումը, կատարելագործվել են դրանց սննան և բազմացման եղանակները: Պրոտերոզոյում կապտականաց ջրիմուռների գերիշխումը փոխարինվել է եռկարիոտ օրգանիզմներով: Ծովերում առաջացել են բազմաթիվ ջրիմուռների տարբեր ձևեր, որոնք վարում էին հատակին ամրացած կենսակերպ և օժտված էին բազմացման ավելի կատարյալ եղանակով:

Ցամաքում կյանքը դեռևս բացակայում էր, սակայն ծովերի և օվկիանոսների ափերին բակտերիաների և մանր ջրիմուռների գործունեության շնորհիվ սկսվել էր հողագոյացման գործընթացը: Պրոտերոզոյան դարաշրջանի կարևոր արոմորֆոգ կարելի է համարել մարմնի երկկողմանի համաչափությամբ կենդանիների առաջացումը (նկ. 21):



Նկ. 21. Պրոտերոզոյան ծովերում ապրող կենդանիները:

Կենդանական աշխարհի մնացորդները խիստ սակավ են: Ենթադրվում է, որ այդ դարաշրջանում ի հայտ են եկել սպունգները, աղեխորշավորները, որդերը, որոշ հոդվածոտանիներ, ինչպես նաև սկզբնական քորդավորները՝ անգանգների ենթատիպի որոշ ներկայացուցիչներ:

**Պալեոզոյան դարաշրջան:** Պալեոզոյան դարաշրջանը համարվում է հնադարյան կյանքի շրջան: Այն տևել է մոտ 340 մլն տարի և բաժանվում է Կեմբրի, Օրդովիկ, Սիլուրի, Դևոնի, Թարածիսի, Պերմի ժամանակաշրջանների:

Պալեոզոյան դարաշրջանում շարունակվել է անողնաշար կենդանիների կազմավորվածության բարդացումը: Այդ դարաշրջանի սկզբում՝ Կեմբրիի և Օրդովիկի ժամանակաշրջաններում, կենդանի օրգանիզմները հիմնականում հանդիպել են ծովերում: Ցամաքում ապրել են բակտերիաները և կապտականաց ջրիմուռները:

**Սիլուրի ժամանակաշրջանում** սկսվել է ցամաքի բնակեցումը բույսերով և անողնաշար կենդանիներով: Բույսերից էին պսիլոֆիտները, կենդանիներից՝ ցածրակարգ հողվածոտանիները (**նկ. 22**):



Նկ. 22. Սիլուրի ծովերում ապրող բույսերը և կենդանիները:


Ծովերում շարունակվել է քորդավորների էվոլյուցիան, որը հանգեցրեց զրահակիր ձկների երևան գալուն:

**Դևոնի ժամանակաշրջանը** բնորոշվել է ցամաքի գրավմամբ: Այդ ժամանակաշրջանի կեսերից պսիլոֆիտները հետզիտեն պակասել և Դևոնի վերջում բոլորովին անհետացել են՝ իրենց տեղը զիջելով ավելի կատարյալ կառուցվածք ունեցող բույսերին: Սկիզբ են առել կազմավորման բարդությամբ ավելի բարձրակարգ բուսական խմբերի՝ պտերանմանների, ծիածետայինների և գետնամուշկայինների ներկայացուցիչները:

Ցամաքում բույսերի հանդես գալը և զարգացումը կարևորագույն նախադրյալներ ստեղծեցին կենդանիների ցամաք դուրս գալու համար: Դևոնի ժամանակաշրջանում ծովերում բնակվել են երկշունչ և վրձնալողակավոր ձկները: Վրձնալողակավոր ձկները լողափամփուշտի օգնությամբ կարողացել են «օգտագործել» մթնոլորտային օդ՝ դրանց լողակների կմախքը հոմնուզ է եղել ողնաշարավոր կենդանիների հնգամատ վերջույթների կմախքին (**նկ. 23**):

Դրանց օգնությամբ վրձնալողակավոր ձկները ջրից դուրս գալուց հետո կարողացել են սողալ ցամաքում, բայց իիմնականում ապրել են ջրում, որտեղ սննդան և բազմացման պայմանները բարենպաստ էին: Դևոնի ժամանակաշրջանի վերջում այդ ձկների մի խմբի ներկայացուցիչներից սկիզբ առան ցամաքային ողնաշարավոր կենդանիների նախնիները՝ հնադարյան երկենցաղները (**նկ. 24**):

**Թարածխի ժամանակաշրջանի** տարք և խոնավ լլիման բացառիկ նպաստավոր պայմաններ ստեղծեց պտերանմանների հսկայական անտառների տարածման, ինչպես նաև անպոչ երկենցաղների առաջացման համար:



Նկ. 23. Վրձնալողակավոր ձկան (1) և հնադարյան երկկենցաղ ստեգոցեֆալի (2) առջևի վերջույթները:

Քարածիսի ժամանակաշրջանում ցամաքում ապրել են սարդերը, կարիճները, միջատները, որոնք օժտված էին օդային շնչառությամբ: Քարածիսի ժամանակաշրջանի վերջում և հատկապես **Պերմի** սկզբում երկրի մակերևույթին ընթացող լեռնակազմական գործընթացների հետևանքով՝ շատ խոնավ վայրեր վերածվել են անապատների, ինչը լուրջ ազդեցություն է ունեցել շատ բուսական և կենդանական տեսակների վրա: Վերացել են խոշոր փափկամարմինները, տրիլորիտները, խոշոր միջատները: Կլիմայի փոփոխությունը շատ խիստ անդրադարձել է հնադարյան երկկենցաղների վրա: Չունենալով հարմարանքներ չորային պայմաններում բազմանալով՝ շատ երկկենցաղներ ոչնչացել են: Իսկ դրանց փոքր մասը, որոնք կարողացել են թաքնվել ճահիճներում, թափված ծառերի կողմերի տակ, սկզբնավորել են շատ ավելի փոքր չափերի երկկենցաղներին, որոնք թիւ փոփոխություններ կրելով՝ հասան մինչև մեր ժամանակները:



Նկ. 24. Երկկենցաղների նախնիները:

**Պերմի ժամանակաշրջանում** առաջացած փշատերև բույսերը և գազանակերպ սողունները: Ցածր կազմավորված երկենցաղներից առաջացած ավելի բարձր կազմավորված սողունները: Մրանք գլխավորապես խոտակեր կենդանիներ են, բայց որոշ սողուններ անցան կյանքի գիշատիչ կենսակերպին:

**Մեզոզոյան դարաշրջան:** Այն սկսել է ձևավորվել մոտ 240 մլն տարի առաջ և բաժանվում է **Տրիասի, Յուրայի և Կավճի** ժամանակաշրջանների: Կլիմայի և լանդշաֆտների գգալի փոփոխությունների հետևանքով փոխվել է նաև երկրի բուսածածկը: Մինչ այդ գերիշխող հսկա պտերանմանները, գետնամուշերն աստիճանաբար վերացել են, բուռն զարգացում են ապրել մերկասերմերը, սկսել են ի հայտ գալ ծածկասերմ բույսերը (**նկ. 25**):



Նկ. 25. Մեզոզոյան դարաշրջանի լանդշաֆտ:

Կենդանիները ցանաքի վրա ապրելու և բազմանալու հնարավորություն են ստացել: Այդ դարաշրջանում բուռն զարգացում ապրեցին սողունները, որոնց ներկայացուցիչներն այլ կենդանիների կողմից էական նոցակցության բացակայության շնորհիվ հնարավորություն են ստանում գրավել բոլոր միջավայրերը, տիրապետել տեղաշարժման բոլոր ձևերին և օգտագործել կերի բոլոր տեսակները:


Հնադարյան սողուններից առանձնապես հետաքրքիր է գազանատամ սողունների խումբը (**նկ. 26**): Դրանցից հետագայում սկիզբ առան առաջին կաթնասունները:

Հնադարյան սողուններից շատերը հսկաներ են. որոշ տեսակներ ունեին մինչև 50 մ երկարություն և 50 տ քաշ (**Դիպլոդոկեր, բրախիոզավրեր, բրոնտոզավրեր**): Դրանք բուսակեր կենդանիներ են (**նկ. 27**):

**Կայնոզոյան դարաշրջան:** Այն սկսվում է մոտ 67 մլն տարի առաջ և բաժանվում է **Պալեոզոնի, Նեոզոնի և Անտրոպոզոնի** ժամանակաշրջանների: Այս դարաշրջանում աստիճանաբար անհետացել են մեզոզոյում բուռն զարգացում ապրող խոշոր սողունները, մերկասերմ բույսերը: Դրան զուգընթաց աստիճանաբար սկսել են գերիշխել ծածկասերմ բույսերը: Անհետացած խոշոր սողուններն իրենց դիրքերը




Նկ. 26. Գազանատամ սողումներ:



Նկ. 27. Խոտակեր սողումներ:

զիշել են նոր առաջացող, ավելի կատարյալ հատկանիշներ ունեցող թռչունների և կարնասունների դասերի ներկայացուցիչներին: Առաջին բրածո կարնասունը **մելանադրնն** է, որը սկիզբ է տվել մնացած կարնասուններին (**Նկ. 28**):



Նկ. 28. Ամենահին կարնասուն մելանադր:

## ԳԼՈՒԽ 1. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿՅԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԵՐԸ

Կայնողոյան դարաշրջանում կենդանական աշխարհի զարգացումը բնորոշվել է միջատների, թռչունների և կաթնասունների դասերի ներկայացուցիչների բուռն զարգացմամբ: Կաթնասունները գրավել են իշխող դիրք՝ հարմարվելով կյանքի բոլոր միջավայրերին՝ ցանքային, ջրային, օդային և այլն: Ընկերքավոր և պարկավոր կաթնասունների էվոլյուցիան ընթացել է զուգահեռ: Միջատակեր հնադարյան կաթնասունների ինչ-որ խմբից սկիզբ են առել գիշատիչ կաթնասունները և սմբակավորները (նկ. 29):



Նկ. 29. Կայնողոյան դարաշրջանի կաթնասուններ:

Այս դարաշրջանում հանդես եկան մարդու ամենամոտ նախնիները՝ պրիմատների ներկայացուցիչները:



Դարցեր կրկնության համար.

1. Ի՞նչ երկրաբանական ժամանակաշրջանների է բաժանվում Երկրի զարգացման պատմությունը:
2. Ի՞նչ կարևոր արոտորֆոզներ են տեղի ունեցել պրոտերոզոյան դարաշրջանում:
3. Դևոնի ժամանակաշրջանում ի՞նչ փոփոխություններ են կատարվել:
4. Ո՞ր կենդանիներն են համարվում ցանքային ողնաշարավոր կենդանիների նախնիները:
5. Ո՞ր հատկանիշներն են ապահովում սողունների բազմացումը ցանքաքի վրա:
6. Ի՞նչ հնադարյան սողուններ են ապրել Երկրի վրա:
7. Որո՞նք են հնադարյան սողունների անհետացման պատճառները:
8. Ո՞ր կենդանիներն են եղել կաթնասունների նախնիները:

## ԳԼՈՒԽ 2.

### ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

#### 6. ԺԱՌԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԱԿԱՆ ԴԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՄԵՆԴԵԼԻ ԲԱՑԱՐԱՅՏԱԾ ԴԱՏԿԱՆԻԾԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես գիտենք 9-րդ դասարանի կենսաբանության դասընթացից, գենետիկան գիտություն է օրգանիզմներում հատկանիշների ժառանգման օրինաչափությունների մասին: Այն ուսումնասիրում է ժառանգականության և փոփոխականության օրենքները: Դուք արդեն ունեք պատկերացում միահիբրիդային խաչասերման, լրիվ և ոչ լրիվ դոմինանտության մասին: Այս պարագանակում կվերիշենք գենետիկայի հիմնական հասկացությունները և հատկանիշների ժառանգման Մենդելի կողմից կիրառված հիբրիդոլոգիական մեթոդը:

**ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:** Գիտենք, որ ժառանգականությունն ու փոփոխականությունը, լինելով կենդանի օրգանիզմների հիմնարար հատկանիշներ, գենետիկայի հիմնական հասկացություններից են:

**ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՍԵԼՈՎ՝ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԾՆՈՂԱԿԱՆ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՀՐԵԱԾ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ և ՂԱՐԳԱԳՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՁՈՐԻ ՄԵՐՄՈՒՄԻ ՎԻՌԱՋԱՆՑԵԼՈՒ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԾ ՀԻՐԱԿԱՆԱՆՈՒՄ է ԲԱԳՄԱԳՄԱՆ ՄԻՋՈՂՈՎ:**

Ընդ որում, սեռական բազմացման դեպքում ժառանգականությունն ապահովվում է հատուկ սեռական բջիջների՝ գամետների միջոցով, իսկ անսեռ բազմացման ժամանակ՝ մարմնական (սոնատիկ) բջիջների միջոցով: Ժառանգականության շնորհիվ ցանկացած կենդանական կամ բուսական տեսակ սերմնեսերունդ պահպանում է իրեն բնորոշ հատկանիշները՝ ապահովելով դրանց հաջորդայնությունը: Միաժամանակ ակնհայտ է, որ նույն տեսակին պատկանող առանձնյակները տարբերվուն են միմյանցից շատ հատկանիշներով և հատկություններով, ինչը փոփոխականության արդյունք է:


**ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՂԱՐԳԱԳՄԱՆ ԾՆԹԱՑՔՈՒՄ ԱՆԴ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ ՃԵՂՔ ՔԵՐԵԼՈՒ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆ Է:**

Ժառանգականությունն ու փոփոխականությունը, լինելով սերտորեն միմյանց կապված հատկություններ, միաժամանակ, հակադիր ուղղվածություն ունեն: Ժառանգականության շնորհիվ պահպանվում է տեսակի միակերպությունը, իսկ փոփոխականությունը, հակառակը, տեսակը դարձնում է ոչ միակերպ: Անցած դասընթացից

## ԳԼՈՒԽ 2. ՕՐԳԱՆԻՉԱՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍԻՒԹՅՈՒՆԸ

գիտենք նաև, որ **գեները ՂՆԹ-ի մոլեկուլի կամ քրոմոսոմի որոշակի հատվածներ են**, որ որոշում են սպիտակուցային մոլեկուլների սինթեզը կամ տարրական հատկանիշների զարգացման հնարավորությունը: Յիշենք, որ տվյալ օրգանիզմի բոլոր մարմնական (սունատիկ) բջիջներն ունեն քրոմոսոմների **կրկնակի (դիպլոիդ, 2n) հավաք**, այսինքն՝ հոմոլոգ քրոմոսոմների զույգեր. քրոմոսոմների **միակի (հապլոիդ, n) հավաք** առկա է միայն սեռական բջիջներում: Յիշենք նաև, որ տվյալ տեսակին պատկանող օրգանիզմների քրոմոսոմների հապլոիդ հավաքի ՂՆԹ-ի մոլեկուլների ամբողջությունն անվանում են գենոմ, իսկ պոպուլյացիաների գեների լրիվ հավաքակազմն ընդունված է անվանել գենոֆոն: Յետևաբար, գենոֆոնը դրսևորում է գենոմի սահմաններում պոպուլյացիաներին բնորոշ գեների հավաքակազմների առանձնահատկությունները:

Միևնույն տեսակին պատկանող բոլոր օրգանիզմներում յուրաքանչյուր որոշակի գեն գտնվում է որոշակի քրոմոսոմի միևնույն տեղում՝ **լոկուսում**: Ընդ որում, ինչպես գիտենք 9-րդ դասարանի դասընթացից, քրոմոսոմների հապլոիդ հավաքում առկա է տվյալ հատկանիշը պայմանավորող միայն մեկ գեն, իսկ դիպլոիդ հավաքում՝ երկու գեն (**նկ. 30**):



Նկ. 30. Յունույն քրոմոսոմներ և ալելային գեներ:

Այդ զույգ գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների միևնույն լոկուսներում և կոչվում են **ալելային գեներ** կամ **ալելներ**: Որպես կանոն, ալելային գեներն ունենում են նուկլեոտիդների միևնույն հաջորդականությունը, պայմանավորելով տվյալ հատկանիշի նույնատիպ դրսևորումը: Սակայն որոշ դեպքերում այդ ալելներից մեկում (կամ երկուսում էլ) հնարավոր նուտացիաների արդյունքում կարող են տեղի ունենալ նուկլեոտիդների փոխարինումներ, և արդյունքում կառաջանան միմյանցից տարերվող ալելային գեներ: Այն առանձնյակը, որի հոմոլոգ քրոմոսոմները կրում են

տվյալ գենի նույն ալելները, կոչվում է այդ գենով որոշվող հատկանիշի նկատմամբ հոմոզիգոտ, իսկ տվյալ գենի տարրեր ալելներ կրող առանձնյակը կոչվի այդ գենով որոշվող հատկանիշի նկատմամբ հետերոզիգոտ: Հոմոզիգոտ և հետերոզիգոտ առանձնյակների մասին առաջին պատկերացումը տվել է **Գ.Մենդելը** (**Ըկ. 31**) հատկանիշների ժառանգման օրինաչափություններն ուսումնասիրելիս:



Ըկ. 31. Գ.Մենդել  
(1822-1884թթ.):

Գեների միջև փոխներգործությունները տարրեր բնույթի են լինում: Դրանցից ամենատարածվածն ալելային գեների միջև դիտվող այն փոխագրեցություններն են, որոնց արդյունքում դրսարրվում են դոմինանտ կամ ռեցեսիվ հատկանիշները: Յիշենք նաև, որ դոմինանտ է կոչվում այն հատկանիշը, որը ճնշում է մյուս ալելի՝ ռեցեսիվի ազդեցությունը, և սերնդում, որպես կանոն, զարգանում է միայն դոմինանտ ալելի կողմից վերահսկվող հատկանիշը, իսկ ռեցեսիվ հատկանիշը կարող է դրսարրվել այն դեպքում, եթե համապատասխան լոկուսներում առկա են զույգ ալելային ռեցեսիվ գեներ: Գեները նշվում են լատիներեն այբուբենի տառերով: Եթե զույգ ալելային գեները կառուցվածքով լրիվ նույն են, այսինքն ունեն նույլետիդների միևնույն հաջորդականությունը և դոմինանտ են, ապա նշվում են նույն տառի մեծատառերի զույգով, օրինակ՝ **AA**, եթե ռեցեսիվ են՝ փոքրատառերի զույգով՝ **aa**, իսկ եթե մեկը դոմինանտ է, մյուսը՝ ռեցեսիվ՝ մեծատառով և փոքրատառով՝ **Aa**:

Վերիշենք նաև **գենոտիպ** և **ֆենոտիպ** հասկացությունները:

**Տվյալ օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը կոչվում է գենոտիպ, որը գեների մեխանիկական գումար չէ, այլ միմյանց հետ փոխներգործող գեների ամբողջություն:**

**Օրգանիզմների բոլոր հատկանիշների ամբողջությունը կոչվում է ֆենոտիպ:** Այն իր մեջ ներառում է ինչպես արտաքին, տեսանելի հատկանիշների (մաշկի, մազերի գույնը, քրի կամ ականջի ձևը, ծաղիկների գումավորումը և այլն), այնպես էլ ներքին՝ կենսաքիմիական, հյուսվածքաբանական, կազմաբանական հատկանիշների ամբողջությունը: Ֆենոտիպը ձևավորվում է գենոտիպի և միջավայրի պայմանների ազդեցության տակ:

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՉԱՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

**Յատկանիշների ժառանգման ուսումնասիրման հիբրիդոլոգիական մեթոդ:** ժառանգակալից գենետիկայի մեթոդները շատ բազմազան են, սակայն դրանց մեջ կենտրոնական տեղը պատկանում է դեռևս Մենդելի կողմից կիրառված հիբրիդոլոգիական վերլուծության մեթոդին: Կիրառելով այդ մեթոդ՝ Մենդելը հասավ ակնառու հաջողության՝ ձևակերպելով հատկանիշների ժառանգման հիմնական օրենքները: Նման արդյունքների նա հասավ հետևյալ նկատառումներից ելնելով:

1. Մենդելն առաջինը հասկացավ, որ պետք էր սկսել միայն մեկ հատկանիշի ժառանգման ուսումնասիրությունից, և ստանալով հուսադրող արդյունքներ, աստիճանաբար բարդացնել հետազոտվող համակարգը՝ ավելացնելով հատկանիշների թիվը: Ընդ որում, նա ընտրում էր այլընտրանքային (ալտերնատիվային), մեկը մյուսին հակասող գույց հատկանիշներ:

2. Իր հետազոտություններում Մենդելը վերցրեց այդ նպատակի համար շատ հարմար օբյեկտ՝ ոլոռը, որն օժտված է ամբողջ շարք ցայտուն արտահայտված ժառանգական հատկանիշներով (դեղին և կանաչ, հարթ և կնճռոտ մակերևույթ ունեցող սերմեր, կարմիր և սպիտակ գունավորմանք ծաղկիներ և այլն):

3. Խաչասերման համար Մենդելն առանձնացնում էր ոլոռի, այսպես կոչված, մաքուր գծերը, որոնց սերունդները համասեռ էին, այսինքն միատեսակ էին ժառանգվող հատկանիշի առումով:

4. Մենդելը չսահմանափակվեց մեկ սերնդի վերլուծությամբ, այլ հետազոտեց մի քանի սերունդ:

5. Մենդելը սերնդեսերունդ կատարեց յուրաքանչյուր գույց այլընտրանքային հատկանիշների ճշգրիտ քանակական հաշվարկ, որի մաթեմատիկական մշակումը թույլ տվեց հայտնաբերել վիճակագրական օրինաչափություններ:

Դիշենք, որ **միմյանցից մեկ կամ մի քանի հատկանիշներով տարբերվող օրգանիզմների խաչասերումն անվանում են հիբրիդացում**, իսկ նման խաչասերման հետևանքով առաջացած սերունդներին՝ **հիբրիդներ**: Եթե խաչասերվող օրգանիզմները տարբերվում են միմյանցից մեկ գույց հատկանիշով, խաչասերումն անվանում են **միահիբրիդային**, երկու գույց հատկանիշներով՝ **երկիհիբրիդային**, բազմաթիվ գույց հատկանիշներով՝ **բազմահիբրիդային**, իսկ մեթոդն անվանվեց հատկանիշների ժառանգման ուսումնասիրման **հիբրիդոլոգիական մեթոդ**:

Դարձեր կրկնության համար.



1. Ի՞նչ են ժառանգականությունը և փոփոխականությունը:
2. Պարզաբանե՛ք գեն, գենոմ, գենոֆոն՝ և ալելային գեներ հասկացությունները:
3. Որո՞նք են հոմոզիգոտ և հետերոզիգոտ առանձնյակները:
4. Բնութագրե՛ք դոմինանտ և ռեցեսիվ հատկանիշները:
5. Պարզաբանե՛ք գենոտիպ և ֆենոտիպ հասկացությունները:

6. Որո՞նք էին գ.Մենդելի ուսումնասիրությունների հաջողությունը պայմանավորող առանձնահատուկ մոտեցումները:
7. Ի՞նչ է հիբրիդացումը, որո՞նք են հիբրիդները:
8. Պարզաբանե՛ք միահիբրիդային, երկհիբրիդային և բազմահիբրիդային խաչասերումները:

## **7. ՄԵՆԴԵԼԻ ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՕՐԵՆՔՆԵՐԸ**

Իր կողմից մշակված հիբրիդոլոգիական մեթոդի կիրառմաբ Մենդելը փորձարարական արդյունքների և դրանց ճշգրիտ հաշվարկի հիման վրա ձևակերպեց հատկանիշների ժառանգման հիմնական օրինաչափությունները, որոնք կոչվեցին **Մենդելի օրենքներ**:


### **Մենդելի առաջին օրենքը: Առաջին սերմնի հիբրիդների միակերպությունը:**

Մենդելի առաջին օրենքն իրենից ներկայացնում է առաջին սերմնի միակերպության կանոնը: Վերիշենք այն 9-րդ դասարանի դասընթացից: Ինչպես նշվեց, եթե խաչասերվող օրգանիզմները տարբերվում են միմյանցից մեկ հատկանիշով, խաչասերումն անվանում են **միահիբրիդային**: Յետևաբար, նման խաչասերման դեպքում հետազոտվում է միայն մեկ հատկանիշի երկու հակադիր դրսնորումներ ունեցող տարբերակների ժառանգման օրինաչափությունը: Այդ հատկանիշի զարգացումը պայմանավորված է մեկ գույց ալելային գեներով: Օրինակ՝ ոլորի սերմների գունավորումը, որ կարող է դրսնորվել երկու հակադիր, միմյանց բացառող տարբերակներով՝ դեղին կամ կանաչ (նկ. 32): Խաչասերվող օրգանիզմներին բնորոշ մնացած այլ հատկանիշները հաշվի չեն առնվում:

Մենդելի կատարած փորձերը ցույց տվեցին, որ սերմների դեղին և կանաչ գունավորում ունեցող ոլորի մաքուր գծերի խաչասերման արդյունքում, առաջին սերմնում դիտվում է գունավորման միակերպություն՝ բոլոր հիբրիդներն ունենում են սերմների դեղին գույց, այսինքն դոմինանտ հատկանիշը (դեղին գունավորումը) քողարկում է ռեցեսիվ հատկանիշի (կանաչ գունավորման) դրսնորումը: Այս օրինաչափությունը կոչվում է **Մենդելի առաջին օրենք**: Այն պնդում է, որ մեկ գույց այլընտրանքային հատկանիշներով տարբերվող մաքուր գծերի երկու օրգանիզմների խաչասերման արդյունքում առաջին սերմնի բոլոր հիբրիդները լինում են միակերպ և կրում են ծնողական ծեսերից մեկի՝ դոմինանտի հատկանիշը: Յետագայում պարզվեց, որ դոմինանտության երևույթը լայն տարածում ունի բոլոր օրգանիզմների տարբեր հատկանիշների ժառանգման ժամանակ:

### **Մենդելի երկրորդ օրենքը: Յատկանիշների ճեղքավորումը երկրորդ սերմնում:**

Առաջին սերմնի հիբրիդների հատկանիշների հետազոտման համար Մենդելը խաչած փոշոտում չկիրառեց, այլ ինքնափոշոտմանք փորձեց պարզել երկրորդ սերմնում ստացված յուրաքանչյուր առանձնյակի հատկանիշը: 9-րդ դասարանի



Նկ. 32. Հիբրիդների առաջին սերմերի միակերպության օրենքի գծապատկերը:


դասընթացից գիտեք, որ երկրորդ սերմում հիբրիդների մոտ 3/4-ի սերմերի գույնը դեղին էր, իսկ 1/4-ինը՝ կանաչ (նկ. 33):

Երկրորդ սերմում հատկանիշի նման ճեղքավորման հիման վրա Մենդելը ձևակերպեց իր երկրորդ օրենքը՝ բազմացման ժամանակ առաջին սերմերի հիբրիդները ճեղքավորվում են, ընդ որում նրանց սերմում առանձնյակների մեկ քառորդը կրում է ռեցեսիվ, իսկ երեք քառորդը՝ դոմինանտ հատկանիշ: Պարզվում է, որ առաջին սերմում ռեցեսիվ հատկանիշը չի անհետանում, այլ քողարկվում է (ճնշվում է) և կրկին ի հայտ է գալիս երկրորդ սերմում: Սա նշանակում է, որ գոյություն ունի այդ ռեցեսիվ հատկանիշը պայմանավորող նյութական կրողը: Այսպիսով, Մենդելի հայտնաբերած ճեղքավորման օրինաչափություններից հետևում էր շատ կարևոր եղանակներում, որ օրգանիզմներում կան ժառանգական տեղեկատվություն կրող առանձին նյութական կառույցներ: Մենդելը դրանց անվանեց «գործններ» կամ «ակնկալիքներ»: Եթագայում այդ գործններին անվանեցին գեներ:

Հատկանշական է, որ Մենդելը հաստատեց ճեղքավորման այդ օրինաչափությունը, կատարելով քանակական ճշգրիտ հաշվարկներ իր կողմից հետազոտված բոլոր հակադիր գույգ հատկանիշների գծով, ընդ որում երկրորդ սերմում դոմինանտ և ռեցեսիվ հատկանիշներ ունեցող առանձնյակների քանակական հարաբերությունը

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՄԱԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ

այնքան մոտ էր լինում 3:1 հարաբերությանը, որքան մեծ էր ինքնափոշոտվող առանձնյակների թվաքանակը: Սա վկայում է այս օրինաչափության վիճակագրական բնույթի մասին:




**Նկ. 33. ՄԵՆԴԵԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԵՆՔԻՆ  
հԱմապատասխան ԵՐԿՈՒ  
հԵՏԵՐՈՂԳՈՒՄՆԵՐԻ (Aa) ԽԱՉԱՍԵՐՄԱՆ  
գՃԱՎԱՍԼԿԵՐԸ:**

Այսպիսով, վերիիշելով նաև 9-րդ դասարանի դասընթացը, կարող ենք նշել, որ համաձայն Մենդելի հետերողիզոտ առանձնյակների միահիբրիդային խաչասերման արդյունքում դիտվում է 3:1 ճեղքավորում ըստ ֆենոտիպի (յուրաքանչյուր 3 դեղին սերմերով բույսին ընկնում է 1 կանաչ սերմերով բույս) և 1:2:1 ճեղքավորում (1AA : 2Aa : 1aa) ըստ գենոտիպի (**Ակ.** 33): Քետևաբար, երկրորդ սերմնում ի հայտ են գալիս երկու ֆենոտիպ և երեք գենոտիպ:

Միահիբրիդային խաչասերման արդյունքում ֆենոտիպի 3:1 ճեղքավորման պատճառը **լրիվ դոմինանտությունն** է, այսինքն երբ դոմինանտ հատկանիշը լրիվորեն է քողարկում ռեցեսիվի գոյությունը: Սակայն ավելի հաճախ դրսևորվում է **ոչ լրիվ դոմինանտություն**, երբ դոմինանտ հատկանիշը ոչ լրիվ է քողարկում ռեցեսիվին և ռեցեսիվն էլ, կարծես թե, մասամբ դրսևորվում է: Այդ դեպքում երկրորդ սերմնի Aa գենոտիպ ունեցող հետերողիզոտ առանձնյակները նման չեն լինում ծնողական ձևերին և դրսևորում են **ժառանգման միջանկյալ բնույթ**: Այս երևույթին դուք ծանոթ եք


## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՉԱՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս 9-րդ դասարանի դասընթացից, գիշերային գեղեցկուիի բույսի ծաղիկների գունավորման օրինակով, երբ դոմինանտ ( $AA$ , կարմիր) և ռեցեսիվ ( $aa$ , սպիտակ) ծաղիկներով բույսերի խաչասերման արդյունքում առաջացած հետերոզիգոտ ձևերն ( $Aa$ ) ունենում են վարդագույն ծաղիկներ (**նկ. 34**):



**Նկ. 34. Կարմիր և սպիտակ ծաղիկներ  
ունեցող գիշերային գեղեցկուիի  
բույսի խաչասերման գժապատկերը:**


Դոմինանտ և ռեցեսիվ հատկանիշներն ի հայտ են գալիս երկրորդ սերնդում, ընդ որում հոմոզիգոտ առանձնյակների կեսն ունենում է կարմիր ( $AA$ ), կեսը՝ սպիտակ ( $aa$ ) ծաղիկներ, իսկ հետերոզիգոտներն, ինչպես առաջին սերնդում, վարդագույն են լինում (**նկ. 35**):



**Նկ. 35. Երկու հետերոզիգոտ,  
վարդագույն ծաղիկներ ունեցող  
գիշերային գեղեցկուիի բույսի  
խաչասերման գժապատկերը:**

**ՄԵՆԴԵԼԻ ԵՐՐՈՐԴ՝ ՀԱՏԼԱՆԻՇՆԵՐԻ ԱՆԼԱԽ ԲԱՉԽՄԱՆ ՕՐԵՆՔԸ:** Միահիբրիդային խաչասերման դեպքում Մենդելը դիտարկում էր միայն մեկ հատկանիշ, թեև հայտնի է, որ սովորաբար բույսերն իրարից տարբերվում են մեծ թվով հատկանիշներով։ Զևսկերպելով մեկ գույգ հատկանիշի ժառանգման օրինաչափությունները՝ Մենդելը ձեռնամուխ եղավ երկու գույգ հատկանիշների ժառանգման ուսումնասիրություններին։ Ինչպես նշեցինք նախորդ պարագրաֆում, եթե ծնողական ծևերը միմյանցից տարբերվում են երկու գույգ հատկանիշներով, խաչասերումն անվանում են երկիրբիդային։

Մենդելն իր փորձերում դիտարկեց ոլորի այն սկզբնական (ծնողական) ձևերը, որոնք տարբերվում էին միմյանցից երկու գույգ այլընտրանքային հատկանիշներով։ Ընդ որում, դոմինանտ հատկանիշներն էին սերմերի դեղին գույնը (AA) և հարթ մակերևույթը (BB), իսկ ռեցեսիվ հատկանիշները՝ էմ՝ սերմերի կանաչ գույնը (aa) և կնճռոտ մակերևույթը (bb)։ Խաչասերման արդյունքում առաջին սերնդի առանձնյակների ամբողջությունը դրսկորեց հատկանիշների միակերպություն (սերմերի դեղին գույն և հարթ մակերևույթ, AaBb)՝ համաձայն Մենդելի առաջին օրենքի, քանի որ ծնողական ձևերն երկու հատկանիշներով ել հոմոզիգոտներ էին (AABB և aaBB) (նկ. 36)։




Նկ. 36. Դոմինանտ դեղին հարթ և կանաչ կնճռոտ ոլորների երկիրբիդային խաչասերման գծապատկերը։

Երկրորդ սերնդում Մենդելը խաչասերեց միմյանց հետ առաջին սերնդի հետերոզիգոտներին (AaBb x AaBb) և ստացավ հատկանիշների ճեղքավորում, ընդ որում սերնդում ի հայտ եկան չորս ֆենոտիպային խմբեր (նկ. 37)։ Կատարած մանրակրկիտ հաշվարկը ցույց տվեց, որ յուրաքանչյուր 9 դեղին գույնավորում և հարթ մակերևույթ ունեցող սերմերով բույսերին համապատասխանում էին 3 դեղին գույնավորմանք և կնճռոտ մակերևույթով, 3 կանաչ գույնավորմանք և հարթ մակերևույթով և 1 կանաչ գույնավորմանք և կնճռոտ մակերևույթով բույսեր, այսինքն՝ ճեղքավորում 9 : 3 : 3 : 1 հարաբերությամբ։ Նմանատիպ արդյունքներ ստացվեցին նաև այլ գույգ

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՉԱՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ

հատկանիշներով բույսերի խաչասերման դեպքում, որոնք ի մի բերելով, Մենդելը հանգեց իր **երրորդ՝ հատկանիշների անկախ բաշխման օրենքին**: Ո՞րն է  $9 : 3 : 1$  ճեղքավորման պատճառը: Նկար 37-ում բերված աղյուսակը, որն, ի դեպ, կոչվում է Պեննետի աղյուսակ և իր մեջ ներառում է խաչասերվող երկինտերոզիգոտ առանձնյակների գամետների բոլոր հնարավոր գուգորդությունները, ցույց է տալիս, որ առաջացած չորս ֆենոտիպային խմբերին համապատասխանում են ինը տարրեր գենոտիպեր:



Նկ. 37. Առաջին սերնդի հիբրիդների խաչասերման գծապատկերը:

Այսինքն, միևնույն ֆենոտիպով առանձնյակները կարող են ունենալ մեկից ավելի տեսակի գենոտիպեր: Դրա պատճառը լրիվ դոմինանտությունն է, համաձայն որի, օրինակ, AABB, AaBB, AABb և AaBb գենոտիպեր ունեցող բոլոր առանձնյակներն ունենում են դոմինանտ հատկանիշներ (սերմերի դեղին գունավորում և հարք մակերևույթ): Դժվար չէ համոզվել, որ ոչ լրիվ դոմինանտության դեպքում ֆենոտիպերի քանակը հավասարվում է գենոտիպերի թվին, քանի որ գենոտիպի ցանկացած փոփոխությունը բերում է ֆենոտիպի համապատասխան դրսևորման: Նմանատիպ արդյունքներ են ստացվում նաև այլ այլընտրանքային գույց հատկանիշներով օրգանիզմների խաչասերման դեպքում:

Ծանոթանալով նկար 38-ում բերված աղյուսակին՝ համոզվում ենք, որ դեղին և կանաչ գունավորմանը սերմերով առանձնյակների հարաբերությունը հավասար է  $12:4 = 3:1$ . նույնն է նաև հարք և կնճռոտ մակերևույթ ունեցող բույսերի հարաբերությունը, այսինքն, այնպիսին է, ինչպես միահիբրիդային խաչասերման դեպքում: Ընդ որում, սերմերի մակերևույթը կարող է լինել հարք կամ կնճռոտ՝ անկախ գունավորումից, և հակառակ՝ գունավորումը կարող է լինել դեղին կամ կանաչ՝ անկախ

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՌԱԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

մակերնույթի ծևկից: Հետևաբար, նշված հատկանիշների ժառանգումն ընթանում է մեկը մյուսից անկախ: Մենդելի երրորդ օրենքը պնդում է, որ **հատկանիշների յուրաքանչյուր զույգի ճեղքավորումը կատարվում է այլ զույգ հատկանիշներից անկախ:** Քանի որ խաչասերվող երկիետերոգիգոտ (AaBb) առանձնյակներից յուրաքանչյուրն առաջացնում է հավասար թվով չորս տեսակի գամետներ (AB, Ab, aB, ab), ունենում ենք նշված 9:3:3:1 հարաբերությունը (**նկ. 37**): Այս հարաբերությունը հիշելու պարզ կանոն գոյություն ունի՝  $(3+1) \times (3+1) = 9+3+3+1$ : Այսինքն, երկիիբրիդային խաչասերման դեպքում ճեղքավորումը կատարվում է  $(3+1)^2$  երկանդամի քառակուսու քանածով: Եռահիբրիդային խաչասերման դեպքում ճեղքավորումը տեղի կունենա  $(3+1)^3$ , իսկ բազմահիբրիդային խաչասերումների դեպքում կիրականացվի  $(3+1)^n$  քանածով, որտեղ ո-ը մինյանցից անկախ գործող զույգ հատկանիշների թիվն է:

Անհրաժեշտ է նշել, որ **Մենդելի երրորդ օրենքը, որ կոչվում է նաև անկախ բաշխման օրենքը, վերաբերում է միայն այն հատկանիշների ժառանգմանը, որոնց պայմանավորող զույգ ալելային գեները գտնվում են տարրեր զույգ հոմոլոգ քրոմոսոմներում:**

**Դարցեր կրկնության համար.**



1. Ո՞րն է միահիբրիդային խաչասերումը:
2. Ո՞րն է Մենդելի առաջին օրենքը. ինչպես են այն այլ կերպ անվանում:
3. Ո՞րն է Մենդելի երկրորդ օրենքը. ինչու՞ է այն կոչվում ճեղքավորման օրենք:
4. Ո՞րն է Մենդելի երրորդ օրենքը. ինչու՞ է այն կոչվում անկախ բաշխման օրենք:
5. Ո՞ր հատկանիշների ժառանգմանն է վերաբերում Մենդելի երրորդ օրենքը:

## 8. ՄԱՐԴՈՒ ԺԱՌԱԳԱԿԱՍ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ:

### ԴԱՍԱԿՑԱԿԱՍ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Դայտնի է, որ սերունդների գենոտիպը ծնողներից ստացված գեների համակցությունն է: Օրգանիզմների մեջ մասի մոտ գեների թվաքանակը տասնյակ հազարից ավելի է. ահա թե ինչու սեռական բազմացման ժամանակ գեների համակցումը բերում է նոր, եզակի գենոտիպի և ֆենոտիպի առաջացմանը: Ցանկացած երեխայի մոտ կարելի է հայտնաբերել մայրական և հայրական հատկանիշներ (**նկ. 38**), բայց նույնիսկ մոտ ազգակցական կապի մեջ գտնվող անձինք բացարձակ միևնույն հատկանիշները չունեն: Որոշ չափով բացառություն են կազմում միաձվանի երկվորյակները, ում հատկանիշների իդենտիկության (միակերպության) աստիճանը շատ մեծ է:

Դամակցական փոփոխականությունը ծնողական գեների վերազուգակցման հետևանքով սերունդների գենոտիպերի փոփոխությունն է:



Նկ. 38. Ցանկացած երեխայի մոտ կարելի է հայտնաբերել մայրական և հայրական հատկանիշներ:

Այն կենդանի օրգանիզմներում դիտվող ժառանգական անչափ մեծ բազմազանության կարևորագույն աղբյուրն է:

Այսպիսով, համակցական փոփոխականության հիմքում ոչ թե գեների կառուցվածքային փոփոխություններն են ընկած, այլ բազմացման արդյունքում դիտվող գեների նոր զուգակցությունների, համակցությունների առաջացումը, որն էլ հանգեցնում է նոր ֆենոտիպով օրգանիզմների ձևավորման:

Հարց է առաջանում, թե որո՞նք են այն հիմնական գործընթացները, որոնք բերում են համակցական փոփոխականության: Դրանք երեքն են, որոնց դուք ծանոթ եք 9-րդ դասարանի դասընթացից՝

- մեյոզի առաջին բաժանման անաֆազի ընթացքում հոմոլոզ քրոմոսոմների միմյանցից անկախ, պատահական տարամիտումը,
- մեյոզի առաջին բաժանման պրոֆազում դիտվող քրոմոսոմների հնարավոր տրամախաչումը,
- բեղմնավորման ժամանակ գամետների պատահական զուգակցումը:

Գամետների ձևավորման ընթացքում, մեյոզի առաջին բաժանման անաֆազում, հոմոլոզ քրոմոսոմների պատահական տարամիտումը համակցական փոփոխականության կարևորագույն պատճառն է: Հոմոլոզ քրոմոսոմների պատահական տարամիտումը պայմանավորում է գամետների մեծ բազմազանությունը և բացառում լրիվ նույնատիպ գամետների առաջացումը: Այն փաստորեն Մենդելի երրորդ՝ հատկանիշների անկախ բաշխման օրենքի հիմքն է: Գամետների տեսակների մեծ բազմազա-

նությունը հեշտ է ապացուցել: Եթե հոմոլոգ քրոմոսոմների միջև տրամախաչումը հաշվի չառնենք, ապա գամետների տեսակների թիվը կլինի հավասար 2<sup>n</sup>, որտեղ ո-ը՝ հոմոլոգ քրոմոսոմներում այլընտրանքային հատկանիշներ պայմանավորող գոնե մեկ զույգ ալելային գեներ պարունակող շղթայակցման խմբերի թիվն է: Զանի որ, գրեթե միշտ, հոմոլոգ քրոմոսոմները պարունակում են գոնե մեկ զույգ այլընտրանքային հատկանիշներ պայմանավորող ալելային գեներ, ապա տվյալ տեսակի առանձնյակներից ստացվող գամետների տեսակները հաշվելիս ո-ը հավասար է լինում այդ տեսակի քրոմոսոմների հապլոիդ հավաքին: Դետաքարար, նկատի ունենալով, որ մարդու քրոմոսոմների հապլոիդ հավաքում կա 23 քրոմոսոմ և ընդունելով, որ 23 զույգ հոմոլոգ քրոմոսոմներից յուրաքանչյուրում առկա են գոնե մեկ զույգ այլընտրանքային հատկանիշներ պայմանավորող ալելային գեներ, ապա առաջացող գամետների տեսակների թվաքանակը կլինի հավասար 2<sup>23</sup>: Իրականում, իհարկե այլընտրանքային հատկանիշներով ալելային գեների քանակը, այսինքն հետերոդիգոտ վիճակում գտնվող գեների քանակը շատ ավելի մեծ է, և ուրեմն, գամետների տեսակների բերված քանակն էլ ավելի մեծ կլինի: Իսկ ինչպիսի՞ն կլինի հավանականությունն այն բանի, որ գամետը կրի միայն մեկ ծնողի (նայրական կամ հայրական) քրոմոսոմները: Բերված օրինակի համար այն կլինի հավասար 1/2<sup>23</sup>, և եթե նկատի ունենանք, որ իրականում հետերոդիգոտ վիճակում գտնվող գեների քանակը շատ ավելի մեծ է, միայն մեկ ծնողի քրոմոսոմներ պարունակող գամետի առաջացումը կլինի ուղղակի անհավանական:

Համակցական փոփոխականության մեջ մեծ է նաև մեյոզի առաջին բաժանման պրոֆազում դիստվող քրոմոսոմների տրամախաչման դերը, քանի որ այս դեպքում մինչ պատահական տարամիտումը հոմոլոգ քրոմոսոմների մի մասն արդեն փոխանակած են լինում որոշակի հատվածներ և ուրեմն արդեն իսկ կրում են ծնողական հավաքից տարբերվող ալելային գեներ: Տրամախաչումը զգալիորեն մեծացնում է գամետների բազմազանությունը: Այդպիսի գամետների հետագա բեղմնավորման արդյունքում սերնդում ի հայտ են գալիս ծնողական հատկանիշներից եապես տարբերվող հատկանիշներով առանձնյակներ:

Համակցական փոփոխականության է հանգեցնում նաև բեղմնավորման ժամանակ գամետների պատահական զուգակցումը: Մենքելի օրենքներին ծանոթանալիս համոզվեցինք, որ միահիբրիդային խաչաերման դեպքում հնարավոր է գենոտիպի ձևակորման 4 տարբերակ (AA, Aa, aa, aa), այսինքն՝ 4<sup>1</sup>=4, երկիրիդայինի դեպքում՝ 4<sup>2</sup>=16 տարբերակ, եռհիբրիդայինի դեպքում՝ 4<sup>3</sup>=64, բազմահիբրիդայինի դեպքում՝ 4<sup>n</sup>, որտեղ ո-ը հավասար է քրոմոսոմների հապլոիդ հավաքին, եթե հոմոլոգ քրոմոսոմները տարբերվում են գոնե մեկ զույգ այլընտրանքային հատկանիշներ որոշող գեներով: Դժվար չէ համոզվել, որ նման բազմահիբրիդային խաչաերման դեպքում մարդկանց մոտ հնարավոր զուգակցությունների նվազագույն քանակը կլինի հավասար 4<sup>23</sup>=2<sup>46</sup>≈10<sup>14</sup>: Սա, իհարկե, բոլոր հնարավոր տարբերակների նվազագույնն է:

Համակցական փոփոխականությունը պայմանավորող վերը նշված երեք գործնքացները գործում են միաժամանակ և մեկը մյուսից անկախ, դրանով իսկ ապահովությունը կատարվում է:

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻ ԶՄԱՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Վելով գենոտիպերի ահռելի բազմազանություն: Համակցական փոփոխականությանն էապես նպաստում է նաև բազմակի ալելների առկայությունը:



### Դարցեր կրկնության համար.

1. Ի՞նչն է ընկած համակցական փոփոխականության հիմքում:
2. Որո՞նք են այն հիմնական գործընթացները, որոնք բերում են համակցական փոփոխականության:
3. Պարզաբանեք հոմոլոգ քրոմոսոմների միմյանցից անկախ և պատահական տարամտման հետևանքով դիտվող գամետների մեջ բազմազանությունը:
4. Պարզաբանեք տրամախաչման դերը համակցական փոփոխականության դրսնորման մեջ:
5. Պարզաբանեք բեղմնավորման ժամանակ գամետների պատահական գործակցման դերը համակցական փոփոխականության դրսնորման մեջ:

## 9. ՄԱՐԴՈՒ ԺԱՌԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ: ՍՈՒՏԱՑԻՈՆ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ:

Մուտացիոն փոփոխականությունը կապված է մուտացիաների առաջացման գործընթացի հետ: **Մուտացիաները** գենոտիպում հանկարծակի տեղի ունեցող թրիչքածն և կայուն փոփոխություններն են: Մուտացիաների մասին տեսությունը 1901-1903 թթ. տվել է **Գուգոն դե Ֆրիզը** (**նկ. 39**): Տեսության հիմնական դրույթներն անփոփոխ են մինչ օրս՝ մուտացիաները ժառանգականության դիսկրետ փոփոխություններ են, բնության մեջ սպոնտան (ինքնաբերաբար) են տեղի ունենում, փոփոխացվում են ժառանգաբար, բավական հազվադեպ են հանդիպում, կարող են լինել վնասակար, օգտակար և չեղոք և այլն:

**Մուտացիաների դասակարգումը:** Կախված այն բանից, թե ինչ հատկանիշ է դրված դասակարգման հիմքում, ներկայումս հայտնի են մուտացիաների դասակարգման տարրեր եղանակներ:

Մուտացիայի ծագման եղանակից կախված տարրերում ենք սպոնտան ընթացող և ինդուկցված (մակածված) մուտացիաներ: Սպոնտան մուտացիաները բնության մեջ տեղի են ունենում չափազանց հազվադեպ՝ տվյալ գենի միլիոն տարրերակին ընկնող 1-ից մինչև 100 հաճախությամբ: Հայտնի է, որ սպոնտան ընթացող մուտացիոն գործընթացը կախված է ինչպես ներքին, այնպես էլ միջավայրի արտաքին գործոններից՝ միջավայրի, այսպես կոչված, **մուտացիոն ճնշումից**: Ինդուկցված մուտացիաներն առաջանում են մարդու օրգանիզմի վրա մուտածին գործոնների ներգործության արդյունքում:



Նկ. 39. Գ. Ռե Ֆրիդ  
(1848-1935թթ.):

Մուտացիաները կարող են դասակարգվել նաև համաձայն այն բանի, թե ինչ բջիջներում են դրանք առաջանում՝ սոմատիկ, թե սեռական: Սոմատիկ մուտացիաներն առաջանում են ցանկացած հյուսվածքի մարմնական բջիջներում: Գեներատիվ մուտացիաներն ի հայտ են գալիս սեռական բջիջներում և այդ պատճառով էլ, կարող են դրսնորվել: Գեներատիվ մուտացիայի դրսնորման համար անհրաժեշտ է, որ մուտացիա պարունակող գամետը մասնակից բեղմնավորմանը, ընդ որում, եթե մուտացիան ռեցեսիվ է, ապա բեղմնավորման երկրորդ մասնակից գամետը չպետք է պարունակի այդ մուտանտ գենի դոմինանտ ալելը:

Մուտացիաները կարող են դասակարգվել նաև համաձայն մարդու օրգանիզմի վրա նրանց ներգործության նշանակության: Այսպես, տարբերում ենք դրական, բացասական և չեղոք մուտացիաներ: Նման դասակարգումը կապված է մուտանտի կենսունակության հետ:

Մուտացիայի ենթարկված բջջում մուտացիաները կարող են առաջանալ ցիտոպլազմայում կամ բջջակորիզում: Դամապատճանաբար, տարբերում ենք ցիտոպլազմային և կորիզային մուտացիաներ:

Եվ վերջապես, գենոտիպում առաջացրած փոփոխությունների համաձայն մուտացիաները լինում են գենային, քրոմոսոմային և գենոմային: Գենային մուտացիաները բոլորից շատ են հանդիպում: Դրանք գենի կազմում առկա մեկ կամ մի քանի նույնականացնելի փոփոխությունների արդյունք են: Քրոմոսոմային մուտացիաները քրոմոսոմների որոշակի հատվածների կառուցվածքի փոփոխություններ են, իսկ գենոմային մուտացիաների դեպքում փոփոխության է ենթարկվում քրոմոսոմային ամբողջ հավաքը:

**Սպոնտան և մակածված մուտացիաներ:** Մուտացիաների ինքնաբերաբար առաջացումն օրգանիզմում, որը կոչվում է սպոնտան մուտագենեզ, տեղի է ունենում մուտածին գործոնների ոչ “նպատականոված” բնական ազդեցության հետևանքով: Այն մարդու օրգանիզմի վրա տարբեր գործոնների գումարային ներգործության արդյունք է, որ մարդու կենսագործունեության ընթացքում կարող է բերել գենետիկական կառուցվածքների վնասնան: Այդ գործոնները բաժանվում են երկու խմբի՝ արտաքին և ներքին:

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՉԱՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին գործոնների թվին են դասվում բնական ճառագայթումը, ջերմաստիճանի ծայրահեղ տատանումները և այլն: Կենսագործունեության ընթացքում մարդու օրգանիզմը կլանում է իոնիզացնող ճառագայթների որոշակի էներգիա, որը հետևանք է բնական ճառագայթման (Երկրագնդի ռադիոակտիվ և տիեզերական (կոսմիկական) ճառագայթներ, Երկրի կեղևի և մթնոլորտի ռադիոակտիվ տարրեր և այլն): Այդ էներգիայի մեջությունը կախված է տեղանքի բարձրությունից և աշխարհագրական լայնությունից: ճառագայթումը հատկապես մեծ է այն տարածքներում, որտեղ Երկրի հանքաշերտերն առավել հասանելի են: Մարդու օրգանիզմում բնական ճառագայթմամբ առաջացած այս արտաքին մուտացիաները կազմում են բոլոր սպոնտան մուտացիաների մոտ 25%-ը, մինչդեռ, օրինակ, պտղածանձի օրգանիզմում դրանք սպոնտան մուտացիաների միայն 0,1% են կազմում: Մարդու օրգանիզմում ընթացող նյութափոխանակային գործընթացներում առաջացող քիմիական շատ միացություններ՝ մետաբոլիզմներ կարող են հանդես գալ որպես սպոնտան ներքին մուտածին գործոններ: Դրանք կարող են առաջացնել Ղևթի ինքնակրկնապատկման գործընթացում խանգարումներ, որոնք կարող են բերել կառուցվածքային փոփոխությունների և, հետևաբար, նաև սպիտակուցների կենսասինթեզի խանգարումների և այլն:

**Մակածված մուտացիաներն առաջանում են արիեստական ճանապարհով՝ տարբեր բնույթի մուտածին գործոնների ազդեցությամբ:** Դայտնի են երեք տիպի մուտածին գործոններ՝ **ֆիզիկական, քիմիական և կենսաբանական:** Ֆիզիկական գործոնների թվին են դասվում իոնացնող ճառագայթումը, էլեկտրանազմիսական ճառագայթումը, ճնշումը, ջերմաստիճանը և այլն: Որպես քիմիական գործոններ կարող են հանդես գալ սպիրտները, ֆենոլները, ցիկլիկ արոմատիկ միացությունները, իպրիտը և այլն: Կենսաբանական մուտածիններ կարող են լինել շատ վիրուսներ, բակտերիաներ, որոց մակարույժ օրգանիզմներ և այլն: Մարդու օրգանիզմում տարաբնույթ մուտացիաների հետևանքով առաջացած ժառանգական տեղեկատվության բոլոր տեսակի խանգարումները, որոնք քայլայում են առողջությունը, ընդունված է անվանել «գենետիկական բեռ»: Ներկայում գենետիկական բեռի մակարդակի գնահատումը կարևոր բժշկական և առողջապահական հիմնահարց է:



**Դարցեր կրկնության համար.**

1. Ի՞նչ են մուտացիաները, ի՞նչ է մուտացիոն փոփոխականությունը:

2. Ինչպես են դասակարգվում մուտացիաները:

3. Բնութագրեք սպոնտան մուտագենեզը: Որո՞նք են սպոնտան մուտագենեզ առաջացնող արտաքին և ներքին գործոնները:

4. Ի՞նչ գործոններ են առաջացնում մակածված մուտագենեզ:

5. Ի՞նչ է մուտացիոն ճնշումը:

6. Ի՞նչ է «գենետիկական բեռը»:

## 10. ՄՈՒՏԱՑԻԱՆԵՐ ՄՈՄԱՏԻԿ ԵՎ ՄԵՌԱԿԱՆ ԲՁԻՉՆԵՐՈՒՄ: ԳԵՆԱՅԻՆ ԵՎ ՔՐՈՍՈՍՈՄԱՅԻՆ ՄՈՒՏԱՑԻԱՆԵՐ

**Մուտացիաներ սոմատիկ և սեռական բջիջներում:** Նախորդ պարագրաֆում նշվեց, որ այն մուտացիաները, որոնք առաջանում են օրգանիզմի ցանկացած բջջում, բացառությամբ սեռական բջիջների, կոչվում են սոմատիկ կամ մարմնական մուտացիաներ: Բնական է, որ սեռական եղանակով բազմացող օրգանիզմների, այդ թվում մարդկանց սոմատիկ մուտացիաները սերնդեսերունդ չեն ժառանգվում, քանի որ սեռական բջիջներում նման մուտացիաները բացակայում են: Իսկ եթե մուտացիան առաջացել է առաջնային սեռական բջջում, կամ էլ հասունացած գամետում, ապա այն կփոխանցվի սերնդին և կկոչվի գեներատիվ կամ սեռական: Մոտ ազգակցական խաչասերունդների արդյունքում, ազգակիցների ամուսնության դեպքում ռեցեսիվ վիճակում գտնվող մուտացիաների ենթարկված գեները, որոնք ծնողների մոտ չեն դրսևորվել, սերունդների մոտ կարող են անցնել հոմոզիգոտ վիճակի և դրսևորվել: Եվ եթե դրանց թվում առկա են բացասական մուտացիաներ, ապա սերնդում հիվանդների հավանականությունը մեծ է լինում: Այսպես, վիճակագրական տվյալների համաձայն, Եվրոպայում թուլամիտ երեխաների 27%-ի ծնողները եղել են մոտ ազգականներ, մինդեռ ամբողջությամբ վերցրած Եվրոպական պոպուլյացիայում մոտ ազգականների միջև ամուսնությունները 1%-ից ել քիչ են:

**Գենային մուտացիաներ:** Գենային կամ կետային մուտացիաները, որպես կանոն, մեկ կամ մի քանի նուկլեոտիդների փոփոխությունների արդյունք են: Ընդ որում մեկ նուկլեոտիդը (կամ մի քանի նուկլեոտիդների հաջորդականությունը) կարող է ծնափոխվել մեկ այլ նուկլեոտիդի, կարող է դուրս ընկնել, կորչել, կարող է կրկնապատկվել կամ շրջվել:

Գենային մուտացիայի բնորոշ օրինակ է մարդու օրգանիզմում մանգաղածն բջիջների անեմիա հիվանդության համար պատասխանատու մուտանտ գենը, որը հոմոզիգոտ վիճակում դառնում է մահացու: Դրան համապատասխանող նորմալ գենը պայմանավորում է օրգանիզմում թթվածին փոխադրող հեմոգլոբին սպիտակուցի պոլիպեպտիդային շղթաներից մեկի սինթեզը: Մուտացիայի ենթարկված գենի կառուցվածքում միայն մեկ նուկլեոտիդ է խախտված, որի պատճառով համապատասխան ի-ՈւՍԹ-ի եռյակներից մեկը (ԳԱԱ) փոխարինված է մեկ այլ եռյակով (ԳՈՒ), այսինքն՝ եռյակի երկրորդ դիրքում գտնվող աղենինային նուկլեոտիդը փոխարինված է ուրացիլայինով (**աղյուսակ 1**): Սա բավական է, որ հեմոգլոբինի կառուցվածքում ամինաթթուներից մեկը (գլուտամինաթթուն) փոխարինվի մեկ այլ ամինաթթվով (վալինով): Առաջին հայացքից այս չնչին փոփոխությունը հանգեցնում է ճակատագրական հետևանքների՝ էրիթրոցիտները ձևափոխվում են, տափակում, ընդունում մանգաղածն բջիջների տեսք և կորցնում թթվածին փոխադրելու ընդունակությունը: Հետևանքը՝ մահ երիտասարդ հասակում:

Բերված օրինակում գենի նուկլեոտիդների թվաքանակը չի փոխվում, միայն մեկ նուկլեոտիդի փոխարինում է տեղի ունենում, ուղեմն եռյակների քանակը չի փոխվում

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՉԱՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

(այսինքն՝ գենից հաշվարկը անփոփոխ է մնում) և պոլիպեպտիդային շղթայում էլ միայն մեկ ամինաթթվային մնացորդ է փոխարինվում: Սակայն հնարավոր են գենային մուտացիաներ, որոնք պայմանավորված են գենի կառուցվածքուն մեկ կամ մի քանի նոր նուկլեոտիդների ներդրմամբ, եղած նուկլեոտիդի (կամ նուկլեոտիդների) կրկնապատկնամբ, կամ էլ եղած նուկլեոտիդի դուրս մղմանք, հեռացնամբ: Բնական է, որ նման մուտացիաների դեպքուն գենից հաշվարկը կարող է էապես փոխվել, քանի որ եռյակների թվաքանակն է փոխվում: Սա բերում է կոդավորվող սպիտակուցի պոլիպեպտիդային շղթայի էլ ավելի զգալի փոփոխությունների, քանի որ փոխվում են ամինաթթվային մնացորդները՝ սկսած գենի մուտացիայի ենթարկված հատվածից:

### Այլուսակ 1.

Ամինաթթուները գաղտնագրող եռյակները ի-ՌՆԹ-ի մոլեկուլում:  
Փակագծերում նշված են ԴՆԹ-ի համապատասխան (լրացնող՝ կոմլեմենտար)  
նուկլեոտիդները:

Առաջին հիմք	Երկրորդ հիմք				Երրորդ հիմք
	ՈՒ(Ա)	Ց(Գ)	Ա(Թ)	Գ(Ց)	
ՈՒ(Ա)	ֆեն	սեր	թիր	ցիս	ՈՒ(Ա)
	ֆեն	սեր	թիր	ցիս	Ց(Գ)
	լեյ	սեր	-	-	Ա(Թ)
	լեյ	սեր	-	տրի	Գ(Ց)
Ց(Գ)	լեյ	պրո	հիս	արգ	ՈՒ(Ա)
	լեյ	պրո	հիս	արգ	Ց(Գ)
	լեյ	պրո	գլն	արգ	Ա(Թ)
	լեյ	պրո	գլն	արգ	Գ(Ց)
Ա(Թ)	իլե	տրե	ասն	սեր	ՈՒ(Ա)
	իլե	տրե	ասն	սեր	Ց(Գ)
	իլե	տրե	լիզ	արգ	Ա(Թ)
	մեթ	տրե	լիզ	արգ	Գ(Ց)
Գ(Ց)	վալ	ալա	ասպ	գլի	ՈՒ(Ա)
	վալ	ալա	ասպ	գլի	Ց(Գ)
	վալ	ալա	գլու	գլի	Ա(Թ)
	վալ	ալա	գլու	գլի	Գ(Ց)


Դատկանշական է, որ գենային մուտացիաները կարող են բոլորովին չդրսակրվել, և կոդավորվող (գաղտնագրվող) սպիտակուցների կառուցվածքը կմնա անփոփոխ: Սա հնարավոր է, քանի որ, ինչպես գիտեք, գենետիկական կոդն (գաղտնագիրը) օժտված է ավելցուկությամբ, այսինքն նույն ամինաթթուն կարող է կոդավորվել մեկից ավելի տարբեր եռյակներով (**տե՛ս այլուսակ 1-ը**): Այդպիսի մուտացիաներն անվանում են «լռող մուտացիաներ»: Լռող մուտացիաները, որպես կանոն, պայմանավորված են եռյակների երրորդ նուկլեոտիդի փոփոխություններով: Եթե մուտացիայի հետևանքով խախտվում է գենից հաշվարկը, և մուտացիայի ենթարկված նուկլեոտիդից հետո եռյակները կարող են էապես փոփոխվել, հնարավոր է պոլիպեպտիդային շղթայի ավարտը պայմանավորող և ամինաթթու չկոդավորող երեք հայտնի եռյակ-

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՄԱԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Եթից որևէ մեկի վաղաժամ ի հայտ գալը, որը կրերի պոլիպեպտիդային շղթայի ժամանակից շուտ ավարտնան: Կսինթեզվի սպիտակուցի մոլեկուլի միայն մի մասը, կփոխվի սպիտակուցի կառուցվածքը և, բնականաբար, էապես կխախտվի սպիտակուցի ֆունկցիան: Այսպիսի գենային մուտացիաներն անվանում են անիմաստ մուտացիաներ:

**Քրոմոսոմային մուտացիաներ:** Քրոմոսոմային մուտացիաները քրոմոսոմների կառուցվածքի այնպիսի վերադասավորումներ են, որոնք քրոմոսոմներում նոր հատվածների ներդրման, եղած հատվածների կրկնապատկման, կամ որոշակի հատվածի դուրս մղման, հեռացման և այլ մուտացիոն փոփոխությունների հետևանք են: Դրանք հաճախ անվանվում են նաև քրոմոսոմային աբերացիաներ: Պարզ է, որ քրոմոսոմային մուտացիաները շատ ավելի խոր կառուցվածքային փոփոխություններ են առաջ բերում, քան գենային մուտացիաները և կարող են իրենց մեջ ներառել մեկ գենից ավելի հատվածներ: Տարբերում են ներքրոմոսոմային և միջքրոմոսոմային վերադասավորումներ:

Ներքրոմոսոմային մուտացիաների թվին են դասվում դուբլիկացիաները, դելեցիաները, և ինվերսիաները (**նկ. 40**): Դուբլիկացիան քրոմոսոմի որևէ հատվածի կրկնապատկումն է, դելեցիան՝ քրոմոսոմի որևէ միջին հատվածի դուրս մղումը, հեռացումը, իսկ ինվերսիան՝ որևէ հատվածի  $180^{\circ}$  շրջումը:



Նկ. 40. Քրոմոսոմային մուտացիաների առաջացման դժապատկերը:

Միջքրոմոսոմային վերադասավորումները, որոնք կոչվում են տրանսլոկացիաներ (**նկ. 40**), քրոմոսոմների միջև ընթացող կառուցվածքային փոփոխություններն են,

## **ԳԼՈՒԽ 2. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Երբ տվյալ քրոմոսոմի որևէ հատված տեղափոխվում է իրեն ոչ հոմոլոգ քրոմոսոմի վրա, բնականաբար, հայտնվելով շղթայակցման այլ խմբում: Տրանսլոկացիաները լինում են տարբեր տեսակի՝ կախված նրանից, թե որ հոմոլոգ քրոմոսոմների ո՞ր հատվածներն են միմյանց հետ փոխանակվում:

Քրոմոսոմային մոլուստացիաներն ունենում են տարբեր ֆենոտիպային դրսևորումներ: Այսպես, երեխաների մոտ հայտնի է «կատվի ճիչ» սինդրոմը (համախտանիշը), որի դեպքում երեխայի լացը հիշեցնում է կատվի մլավոց: Սա ոչ միայն երեխայի ձայնային ապարատի հիվանդություն է, այլ նաև կենտրոնական նյարդային համակարգի խանգարման հետևանք: Քրոմոսոմային մոլուստացիայի մեկ այլ ֆենոտիպային դրսևորում է **սինդրակտիլիան՝ մատների սերտաճումը**:



**Դարցեր կրկնության համար.**

1. Ո՞րն է սոմատիկ և սեռական բջիջներում ընթացող մոլուստացիաների սկզբունքային տարբերությունը:
2. Ինչո՞ւ են վտանգավոր մոտ ազգակցական ամուսնությունները:
3. Որո՞նք են գենային մոլուստացիաները: Նկարագրեք մանգաղաձև բջիջների անեմիա հիվանդություն առաջացնող մոլուստացիան:
4. Որո՞նք են “լոռող” մոլուստացիաները, ո՞րն է դրանց առաջացման պատճառը:
5. Որո՞նք են անիմաստ մոլուստացիաները:
6. Որո՞նք են քրոմոսոմային մոլուստացիաները: Ի՞նչ խմբերի են դրանք բաժանվում:
7. Նկարագրեք ներքրոմոսոմային մոլուստացիաների երեք տիպերը: Որո՞նք են տրանսլոկացիաները:
8. Բերեք քրոմոսոմային մոլուստացիաների ֆենոտիպային դրսևորման երկու օրինակ:

## **11. ԳԵՆՈՍԱՅԻՆ ՍՈՒՏԱՑԻԱՆԵՐ: ՑԻՑՈՊԼԱԶՄԱՅԻՆ ՍՈՒՏԱՑԻԱՆԵՐ: ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆԻԶՄՈՒՄ ԱՌԱՎԵԼ ՀԱՅԱԽ ՀԱՍԴԻՊՈՂ ՍՈՒՏԱՑԻԱՆԵՐ**

**ԳԵՆՈՄԱՅԻՆ ՄՈԼՈՒՍՏԱՑԻԱՆԵՐ:** Գենոմային մոլուստացիաների առաջացման մեխանիզմը կապված է մեյօդի ժամանակ՝ առաջին և երկրորդ բաժանումների անաֆազի փուլերում, քրոմոսոմների տարամիտման բնականոն գործընթացի խախտման հետ: Վերջինիս հետևանքով առաջանում են քրոմոսոմների թվաքանակի առումով ոչ նորմալ գամետներ, որոնց բեղմնավորումից ծևավորվում են հետերոպլիտիդային զիգոտներ: Հետևաբար, գենոմային մոլուստացիաները կապված են գենոմում քրոմոսոմների թվաքանակի փոփոխությունների հետ: Դրանք լինում են երկու տիպի՝ պոլիպլոիդիա և հետերոպլիտիդիա: Պոլիպլոիդիան և հետերոպլիտիդիան քրոմոսոմների հավաքակազմի քանակական և որակական չափազանց խոր փոփոխություններ են և, հետևաբար,

մարդու կյանքի համար շատ դեպքերում անհամատեղելի են: Վերջինս հատկապես վերաբերում է պոլիալիդիային:

Պոլիալիդիան գենոմում քրոմոսոմների թվաքանակի շատացումն է՝ հապլոիդ հավաքին բազմապատիկ անգամ: Այն տարածված է բույսերում, կենդանիների մոտ շատ հազվադեպ է հանդիպում: Եթե մարդու սաղմնային քիզօներում հաշվվում է 69 քրոմոսոմ, այն համարում են տրիպլոիդիա, 92 քրոմոսոմի առկայության դեպքում՝ տետրապլոիդիա: Տրիպլոիդիան մարդու սաղմնային զարգացման ընթացքում առավել հաճախ հանդիպող քրոմոսոմների հավաքի սպոնտան անոնալիա է, որը բերում է սաղմի վախճանի սկսած սաղմնային զարգացման երկրորդ ամսից: Որպես կանոն սաղմնային զարգացման 6-7-րդ ամիսների ընթացքում գրեթե բոլոր տրիպլոիդ սաղմերը մահանում են (եզակի են դեպքերը, երբ երեխան ծնվում է, բայց կարող է գոյատևել միայն մի քանի օր): Մահվան պատճառ են լինում ամբողջ շարք օրգանների՝ գլխուղեղի, սրտի, աղեստամոքսային համակարգի և այլ օրգանների արատները, կենսագործունեության կորուստը: Տետրապլոիդիան մարդու սաղմնային զարգացման ընթացքում էլ ավելի հազվադեպ է հանդիպում:

Դետերոպլոիդիան գենոմում քրոմոսոմների թվաքանակի փոփոխությունն է հապլոիդ հավաքին ոչ բազմապատիկ անգամ: Եթե պոլիալիդիան մարդու համար բացարձակ մահացու է, ինչպես հետերոպլոիդիայի դրսևորումների մեջ մասը, ապա հետերոպլոիդիայի որոշ տեսակներ մարդկանց շրջանում ունեն սահմանափակ տարածվածություն և իմբր են մեծաթիվ լուրջ, անբուժելի հիվանդությունների առաջացման: Դետերոպլոիդիաների թվին են դասվում մարդու քրոմոսոմների հավաքակազմում հանդիպող տրիսոմիաները, այսինքն՝ տարբեր հոմոլոգ քրոմոսոմների զուգերում երրորդ քրոմոսոմի առկայությունը: Կախված նրանից, թե հապլոիդ քրոմոսումների ո՞ր զույգում է դիտվում տրիսոմիա, վերջինս կարող է բերել մահվան երեխայի ծնվելուց անմիջապես հետո, կամ՝ ծանր ժառանգական հիվանդության զարգացման: Դետերոպլոիդիային մուտացիաներից առավել ծանր են մոնոսոմիաները, երբ քրոմոսումներից մեկը դուրս է մղվում քրոմոսոմների հոմոլոգ զույգից: Մոնոսոմիաների 20%-ը մահացու է սաղմնային զարգացման առաջին խև օրերից, քանի որ բերում է մեծարիվ գենների կորստի, մնացած դեպքերում զարգանում են ծանրագույն շեղումներ, որոնք հանգեցնում են մահվան շատ վաղ հասակում:

**Ցիտոպլազմային մուտացիաներ:** Այս մուտացիաներն առաջանում են, այսպես կոչված, պլազմագեներում (ոչ կորիզային ՊՆԹ-ում), մարդու քիզօների ՊՆԹ պարունակող օրգանոիդներում՝ միտոքոնդրիումներում: Կան տվյալներ, որ տղամարդկանց անպտղության բերող հիվանդությունները կապված են ցիտոպլազմայի պլազմոգենների մուտացիաների հետ: Կարծում են նաև, որ երկվորյակության որոշ ձևեր նույնպես պայմանավորված են ցիտոպլազմային մուտացիաներով, ընդ որում դրանք ժառանգվում են գերազանցապես իգական գծով:

**Մարդու օրգանիզմում առավել հաճախ հանդիպող մուտացիաներ:** Մարդկանց մոտ առավել հաճախ հանդիպող մուտացիաների մի մասը լետալ (մահացու) մուտացիաներն են, որոնք կյանքի հետ անհամատեղելի են: Դրանք իմանականում այն

## ԳԼՈՒԽ 2. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

գենոմային և քրոմոսոմային մուտացիաներն են, որոնց հետևանքով մուտացիայի ենթարկված սաղմի զարգացումն ընդհատվում է, կամ էլ երեխան նահանում է ծնվելուց անմիջապես մի քանի օր հետո: Այդ մուտացիաների բվին են դասվում մոնոպլոիդային, տրիպլոիդային և տետրապլոիդային մուտացիաները: Դամենատար հաճախ հանդիպող մուտացիաների մյուս խումբը՝ կիսալետալ մուտացիաներն են, որոնք օրգանիզմում ծնշում են կենսական գործընթացները, և սովորաբար, էապես կրծատում են կյանքի տևողությունը: Դրանց տիպիկ օրինակներից են այն մուտացիաները, որոնք բերում են անբողջ շարք ժանր ժառանգական հիվանդությունների՝ Դառնի համախտանիշի (Ակ. 5, 46), եղվարդսի համախտանիշի, հեմոֆիլիայի, ֆենիլկետոնուրիայի առաջացման և այլն: Մուտացիաների հաջորդ խումբը պայմանական լետալ մուտացիաներն են, որոնց դրսևորման համար անհրաժեշտ են միջավայրի որոշակի, նպաստավոր պայմաններ: Նմանատիպ մուտացիաների դրսևորման համար կարևոր է նաև նախահակվածության առկայությունը: Այդ մուտացիաների դրսևորման հետևանք են պողագրան, ստամոքսի խոցային հիվանդությունը, չարորակ ուռուցքների շատ տեսակները և այլն:

Նշված մուտացիաների առաջացրած հիվանդությունների մասին հակիրճ տեղեկատվությունը բերվում է դասագրքի հաջորդ պարագրաֆներում:



**Դարցեր կրկնության համար.**

1. Որո՞նք են գենոմային մուտացիաները: Ինչո՞վ է տարբերվում պոլիպլոիդիան հետերոպլոիդիայից:
2. Որո՞նք են ցիտոպլազմային մուտացիաները:
3. Նշե՛ք մարդու օրգանիզմում հաճախ հանդիպող լետալ, կիսալետալ և պայմանական լետալ մուտացիաները:

## 12. ԱՆԴԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳԵՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օրգանիզմների անհատական զարգացումն ուղեկցվում է բջիջների բազմացման, տարբեր ֆունկցիաներ իրականացնող հյուսվածքների և օրգանների ձևավորման, օրգանիզմի աճման բարդ և բազմապիսի գործընթացներով: Դրանք ընթանում են անհատական զարգացման տարբեր փուլերում և ունեն խիստ որոշակի ուղղվածություն՝ ի վերջո ձևավորելով տվյալ տեսակին բնորոշ հատկություններով օժտված հասուն օրգանիզմ: Բնական է, որ անհատական զարգացման գործընթացներուն կենտրոնական դերակատարումը վերապահված է գեներին, որոնց գործունեության արդյունքում է ձևավորվում հասուն օրգանիզմը:

Անհատական զարգացման ընթացքում բջիջները ձեռք են բերում յուրահատուկ հատկանիշներ և հատկություններ, այսինքն ենթարկվում են տարրերակնան՝ դիֆերենցիացման: Դիֆերենցիացման գլխավոր պատճառն այն է, որ գեների միևնույն հավաքածու ունեցող տարրեր բջիջներում գործում են տարրեր գեներ, մնացած գեները, կարծեք թե, «անջատվում են» և չեն գործում, այսինքն տարրեր բջիջներում իրականացվում է գենոտիպում առկա ժառանգական տեղեկատվության միայն մի մասը, ընդ որում տարրեր բջիջներում՝ տարրեր: Նման տարրերակնան սկզբնական փուլը նախնական բջիջների ընտրությունն է, որոնք ունենալու են զարգացման տարրեր ուղղություններ: Այդ գործընթացն անվանում են դետերմինացում: Այսինքն այն սկզբնական բջիջների ընտրությունն է, որոնք դեռևս միմյանցից արտաքնապես չեն տարրերվում, բայց արդեն վերակառուցման են ենթարկվել՝ որոշելով այն գեների կազմը, որոնք գործելու են այս կամ այն բջջում: Դետերմինացման գործընթացներն արագ են ընթանում և վերաբերում են ինչպես ամբողջ օրգանիզմի, այնպես էլ որոշակի հյուսվածքների նախորդ հանդիսացող բջիջներին:


Որոշ ընդհանրական հատկանիշներ բնորոշ են նույնիսկ դեռևս չբեղմնավորված ձվաբջիջներին (օրինակ՝ որոշակի են ապագա սաղմի մեջքի և փորի կողմերը, առջևի և հետևի ծայրերը): Դրա պատճառը ձվաբջիջ ձևավորման ընթացքում նրա ցիտոպլազմայում որոշակի սպիտակուցների և ի-ՈՆԹ-ի անհավասարաշափ տեղաբաշխումն է: Ինչպես գիտեք 9-րդ դասարանի դասընթացից, սաղմնային զարգացման սկզբնական փուլում՝ տրոհման ժամանակ, երբ սաղմը ենթարկվում է մեծ թվով բաժանումների, բայց ծավալով չի աճում, իիմնականում ՂՆԹ-ի մոլեկուլներ են սինթեզվում: Այդ ընթացքում սինթեզվող սպիտակուցների քանակը շատ սահմանափակ է: Դրանք միայն բջիջների բաժանման համար անհրաժեշտ սպիտակուցներն են: Հատկանշական է, որ սաղմնային զարգացման սկզբնական փուլում ընթացող գործընթացներում որոշիչ դեր ունի մայրական գենոմը:

Դետերմինացման գործընթացների ավարտին հետևում է բջիջների տարրերակումը, երբ տարրեր հյուսվածքների նախորդ հանդիսացող սկզբնական բջիջներուն սկսում են գործել տարրեր խումբ գեներ՝ պայմանավորելով այս կամ այն հյուսվածքին բնորոշ յուրահատուկ հատկանիշներ: Բազմաբջիջ օրգանիզմներում չկա գոնե մեկ բջիջ, որում դրսերիվում է բջիջներում առկա ամբողջ ժառանգական տեղեկատվությունը, այսինքն ցանկացած բջջում առկա գեների մեծ մասը չի գործում: Հետևաբար, սինթեզվում են միայն տվյալ հյուսվածքի հատկություններին և հատկանիշներին բնորոշ սպիտակուցները:

Այսպիսով, տրոհման սկզբնական մի քանի բաժանումների ընթացքում հայրական գենոմը ակտիվ չէ, այն սկսում է ակտիվանալ միայն անհատական զարգացման բլաստոլի փուլում (**ԾԱ. 41**), երբ սկսվում են սինթեզվել ի-ՈՆԹ-ի նոր մոլեկուլներ, սինթեզվում են սպիտակուցներ: Առաջինն ակտիվանում են այն գեները, որոնք պատասխանատու են բջիջի իիմնական նյութափոխանակային գործընթացների կայացման համար, այնուհետև՝ հետզհետև ակտիվանում են տվյալ հյուսվածքին բնորոշ գործառույթների համար պատասխանատու գեները, և ի հայտ են գալիս բնային


## ԳԼՈՒԽ 2. ՕՐԳԱՆԻՉԱՄՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

բջիջները, որոնցից հետագայում զարգանում են հյուսվածքներ և օրգաններ ձևավորող բջիջների միմյանցից տարբերվող խնճեր:



Նկ. 41. Զիգոտի տրոհումը և բլաստուլի առաջացումը:

Անհատական զարգացման գաստրուլի փուլում (**նկ. 42**) շարունակվում է ՈՆԹ-ների հիմնական երեք տեսակների, սպիտակուցների սինթեզը, սաղմնային թերթիկ-ների ձևավորումն ու միմյանցից առանձնացումը:



Նկ. 42. Բլաստուլից գաստրուլի առաջացումը:

Բջիջների տարբերակումն ընթանում է այնքան ժամանակ, քանի դեռ չեն ձևավորվել կարևորագույն օրգանները, հյուսվածքները, բջիջների տիպերը: Այնուհետև,

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՄԱԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ձեսպորված բջիջների կլոնները (այսինքն՝ նույնատիպ բջիջները) շարունակում են բազմանալ գենետիկորեն ծրագրավորված մեխանիզմներով, ընդ որում դրանց մի մասի զարգացումը դանդաղում, կամ նույնիսկ ընդհատվում է, իսկ մյուսներն ակտիվ բազմանում են:

Գեների գործունեության կարգավորման գործընթացներում բացառիկ կարևոր նշանակություն ունեն հորմոնները և որոշ այլ կենսաբանորեն ակտիվ միացություններ: Ապացուցված է, որ հորմոնները կատարում են գենետիկական ինդուկտորների դեր, այսինքն ի վիճակի են «միացնել» կամ «անջատել» տարբեր գեներ, դրանով ի հսկ խթանելով կամ ճնշելով այս կամ այն սպիտակուցի սինթեզը: Հորմոններն ընտրողաբար են ազդում, ներգործելով միայն այն տիպի բջիջների վրա, որոնք պարունակում են յուրահատուկ ընկալիչ սպիտակուցներ: Ընդ որում, հորմոնների մեջ մասի յուրահատուկ ընկալիչները գտնվում են բջջաբաղանքում, որոնց հետ փոխազդելով հորմոնը, առանց ներթափանցելու բջջից, գործի է դնում բջջում կենսաքիմիական բարդ ռեակցիաների ամբողջությունը: Որոշ հորմոններ էլ, լինելով ճարպալուծ, ընդունակ են ներթափանցել բջջի և փոխազդել ցիտոպլազմում առկա ընկալիչ սպիտակուցի հետ: Առաջացած հորմոն-ընկալիչ համալիրներն անցնում են բջջակորիզ և փոխազդում կորիզային կառույցների հետ: Գործընթացն ավարտվում է համապատասխան գենի գործունեության ակտիվացմամբ, տրանսկրիպցիայի, այնուհետև նաև տրանսլյացիայի գործընթացների խթանմամբ: Սինթեզված սպիտակուցի կամ ֆերմենտի շնորհիվ բջիջն ի վիճակի է լինում որոշակի աշխատանք կատարել կամ փոխել իր կառուցվածքը:

**Դարցեր կրկնության համար.**




1. Ի՞նչ է տարբերակումը՝ դիֆերենցումը: Ո՞րն է դրա գլխավոր պատճառը:
2. Բնութագրեք դետերմինացումը, ե՞րբ է այն իրականանում:
3. Որո՞նք են բնային բջիջները:
4. Սաղմնային զարգացման ընթացքում ե՞րբ են սկսում ակտիվանալ հայրական գենները:
5. Ինչու՞ են հորմոններին անվանում «գենետիկական ինդուկտորներ»: Որտե՞ղ են գտնվում հորմոնների ընկալիչ սպիտակուցները:

## 13. ՄԱՐԴՈՒ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԻՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հիմնական գենետիկական օրինաչափություններն ունեն համապարփակ բնույթ և կիրառելի են նաև մարդկանց նկատմամբ: Միաժամանակ պարզ է, որ մարդը, որպես գենետիկական հետազոտությունների առարկա, ումի իր առանձնահատկությունները, որոնք էլ առանձնացնում են նրան մնացած օրգանիզմներից և պայմանավորում հետազոտությունների ընթացքում առաջացող եական դժվարությունների մի ամբողջ շարք:

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻ ԶՄԱՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍԻՒԹՅՈՒՆԸ

**Մարդու գենոմի առանձնահատկությունները:** Մարդու գենոմի (այսինքն՝ մարդու օրգանիզմի գեների անբողջության) հետազոտման դժվարություններից առաջինը պետք է նշել դրա անհամեմատ բարդությունը, ի տարբերություն մնացած բոլոր կենդանի օրգանիզմների գենոմների: Դեռևս 9-րդ դասարանի կենսաբանության դասընթացից գիտեք, որ ցանկացած օրգանիզմի մարմնական բջիջների կորիզում կան զույգ քանակով հինորոգ (այսինքն՝ միևնույն հատկանիշները որոշող) քրոմոսոմներ: Մարդու մարմնական բջիջներում առկա են այդպիսի քրոմոսոմների 23 զույգ (**նկ. 43**): Քրոմոսոմների այդ մեջ թվաքանակը, հատկանիշների բազմազանությունն արդեն իսկ վկայում են գործող գեների ահռելի քանակի, դրանց մեծաթիվ և բազմազան փոխներգործությունների մասին: Սակայն քրոմոսոմների թվաքանակը չէր կարող որոշիչ լինել գենոմի բարդության առումով, քանի որ հայտնի էր, որ քրոմոսոմների էլ ավելի մեծ թվաքանակ ունեին մի շարք այլ կենդանիներ (օրինակ՝ հավերը՝ 78, այժերը՝ 60, ոչխարները՝ 54 և այլն): Հետևաբար, որոշիչը գենոմում առկա գեների թվաքանակն էր, և այդ գեների փոխներգործությունների բազմազանությունը:



Նկ. 43. Մարդու քրոմոսոմները:

Մարդու գենոմում գործող գեների թվաքանակը վերջնականապես հաստատվեց 1988-2002թթ., գիտության պատմության մեջ իրականացված թերևս առավել հանդուրգն, թանկարժեք և կարևորագույն հետազոտություններից մեկի՝ «Մարդու գենոմ» Միջազգային գիտական ծրագրի արդյունքում: Ծրագրի իրականացումը հնարավոր եղավ գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացի, հատկապես տեղեկատվա-

## **ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՄԱԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ**

կան տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ: Արձանագրված արդյունքները բավական անսպասելի էին, քանի որ մինչ այդ կատարված տարրեր գիտական ուսումնախրություններից ենթադրվող 80-120 հազ. գեների փոխարեն, պարզվեց, որ մարդու օրգանիզմում առկա գեների թվաքանակը մոտ է 35-38 հազարին: Հետևաբար, մարդու գենոմի բարդությունն արդյունք է ոչ միայն քրոնոսունների կամ գեների մեջ թվաքանակի, այլև հետևանք գեների և դրանց գործունեության արդյունք հանդիսացող տարաբնույթ սպիտակուցների բազմազան փոխներօրծությունների:

Մարդու ժառանգականության ուսումնասիրնան մյուս դժվարությունները կապված են մարդկանց շրջանում ուղղորդված խաչասերումների իրականացման, տարբեր ամուսնությունների սերունդների համար խստ միանման պայմանների ապահովման և մարդկանց վրա անմիջական փորձեր կատարելու անհնարինության, ինչպես նաև մարդկանց սահմանափակ բեղունության և սեռական ուշ հասունացման հետ: Նշված պատճառները, մարդկանց գենոմի գործունեության անչափ բարդության հետ միասին, նախանշեցին այն հիմնական մեթոդները, որոնց կիրառումն ընդունելի է մարդու ժառանգականության ուսումնասիրնան համար: Դրանք հիմնականում հինգն են՝ **տոհմարանական, երկվորյակային, բջջագենետիկական, կենսաքիմիական և պոպուլյացիոն-վիճակագրական** մեթոդներ:

**Տոհմարանական մեթոդ:** Տոհմարանական մեթոդի կիրառման դեպքում հետազոտվում են ազգակցական կապերի մեջ գտնվող մի շարք ընտանիքների անդամները և նրանց սերունդները՝ նրանց մոտ տարբեր հատկանիշների առկայության առումով: Այս մեթոդը թույլ է տալիս որոշել այս կամ այն հատկանիշի ժառանգման տիպը՝ դրոմինանտային է, թե՞ ռեցեսիվ, սեռի հետ շղթայակցված հատկանիշ է, թե՞ առտոսնային, մերդեյա՞ն օրինաչափություններով է ընթանում ժառանգումը, թե՞ ոչ և այլն: Մեթոդի հիմնական բերությունը կայանում է շատ դեպքերում ճիշտ կազմված և լիարժեք տոհմարանական տեղեկատվության բացակայության մեջ: Տոհմարանական տեղեկատվության հավաստի աղբյուր են անցյալի թագավորական դինաստիաների, կառավարող վերնախավի մասին մեզ հասած տեղեկությունները՝ այս կամ այն տոհմի ընտանիքների ներկայացուցիչների մոտ տարբեր (որոշ դեպքերում՝ արտառող) հատկանիշների առկայության և ժառանգման մասին: Ներկայումս որևէ ընտանիքի տոհմարանական ուսումնասիրություն սկսվում է այսպես կոչված **պրոբանդի**՝ անսովոր հատկանիշի կրողի հայտնաբերումով:

Տոհմարանական մեթոդով են հաստատվել մարդկանց երաժշտական, մաթեմատիկական և այլ ընդունակությունների ժառանգումը: Օրինակ՝ երաժշտական ընդունակություններով օժտված է եղել Բախերի հայտնի տոհմը, որի շատ սերունդներ անվանի երաժիշտներ են եղել, դրանց թվում՝ հանճարեղ Ինհան Սեբաստիան Բախը: Տոհմարանական մեթոդով է ապացուցվել նաև շատ հիվանդությունների ժառանգական բնույթը: Այսպես, արյան անմակարդելիության՝ հեմոնֆիլիա հիվանդության ժառանգման բնույթը որոշվել է այդ հիվանդության կրող՝ Անգլիայի թագուհի Վիկտորիայի տոհմի ուսումնասիրությունից: Տոհմարանական մեթոդով է հաստատվել շաքարախտի, բնածին խլության, հոգեկան ծանր խանգարման՝ շիզոֆրենիայի և մի շարք այլ հիվանդությունների ժառանգական բնույթը:

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻ ԶՄԱՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

**Երկվորյակային մեթոդ:** Երկվորյակները լինում են երկու տիպի՝ բազմաձվանի և միաձվանի: Բազմաձվանի երկվորյակներ ծնվում են, երբ որոշ դեպքերում միաժամանակ տեղի է ունենում մեկից ավելի ծվաբջիջների բեղմնավորում նույն քանակի սպերմատոզոդներով. ծևավորվում են նույն քանակի զիգոտներ, որոնցից էլ զարգանում են երկվորյակները: Այդպիսի երկվորյակները, բնականաբար ունենում են տարբեր գենոտիպեր և միմյանցից տարբերվում են ինչպես սովորական եղբայրներն ու քույրերը: Բազմաձվանի երկվորյակները կարող են լինել ինչպես նույն, այնպես էլ տարբեր սեռերի: Միաձվանի երկվորյակներն էլ ավելի հազվադեպ են հանդիպում: Երբեմն մարդու բեղմնավորված ծվաբջջը սկզբնավորում է ոչ թե մեկ, այլ երկու (շատ հազվադեպ՝ ավելի) սաղմ: Սա տեղի է ունենում սաղմի զարգացման շատ վաղ փուլերում: Արդյունքում՝ զարգանում են երկու (շատ հազվադեպ՝ ավելի) նույն գենոտիպը ունեցող երկվորյակներ (**նկ. 44**):



Նկ. 44. Միաձվանի երկվորյակներ: Այս նկարում պատկերված են Հիմաստամում ապրող 105 տարեկան միաձվանի երկվորյակ-քույրեր:

Այդպիսի երկվորյակներն անպայմանորեն նույն սեռի են, քանի որ առաջացել են մեկ ծվաբջիջի մեկ սպերմատոզոդով բեղմնավորման հետևանքով: Նրանք արտաքնապես, ինչպես նաև ներքին կառուցվածքով, միմյանց շատ նման են, կարծես թե, միմյանց «գենետիկական պատճեններն են»:

Բնական է, որ նրանց միջև ապագայում դիտվող բոլոր տարբերությունները պայմանավորված կլինեն բացառապես արտաքին միջավայրի ազդեցությամբ: Դետևաբար, երկվորյակային մեթոդի օգնությամբ հնարավոր է միաձվանի երկվորյակների միջև դրսևորվող հատկանիշների տարբերությունները վերագրել միմիայն արտաքին միջավայրի ազդեցությանը, իսկ որքան տարբեր լինեն այդ պայմանները, այնքան ցայտուն կարտահայտվեն հատկանիշների տարբերությունները (**նկ. 45**):

Այսպիսով, մարդու ժառանգականության ուսումնասիրման երկվորյակային մեթոդը հնարավորություն է տալիս որոշել արտաքին միջավայրի գործոնների դերը հատկանիշների ծևավորման գործում: Պարզվել է, որ շատ ժառանգական հիվանդությունների համար արտաքին միջավայրի գործոնների դերը բավական մեծ է: Այսպես, եթե միաձվանի երկվորյակներից մեկը հիվանդացել է պալարախտով, շիզոֆրենիայով կամ շաքարախտով, ապա նյոււի հիվանդանալու հավանականությունը համապատասխանաբար 67, 69 և 65 տոկոս է:




Նկ. 45. Տարբեր պայմաններում մեծացած միաձվանի երկվորյակներ:

**Բջջագենետիկական մեթոդ:** Այս մեթոդը հնարավորություն է տալիս ի հայտ բերել քրոմոսոմների թվաքանակի և կառուցվածքի փոփոխություններով պայմանավորված շատ հիվանդություններ և զարգացման արատներ: Դեռևս 1956 թվականին հաստատվեց մարդկանց քրոմոսոմների ճշգրիտ թվաքանակը՝ 46, որի փոփոխությունը, ինչպես նաև քրոմոսոմների կառուցվածքում դիտվող փոփոխությունները, այսպես կոչված «քրոմոսոմային հիվանդությունների» պատճառ են հանդիսանում: Բջջագենետիկական մեթոդի օգնությամբ մարդու ցանկացած հյուսվածքի բաժանվող բջիջներից կարելի է տեղեկատվություն ստանալ քրոմոսոմների թվաքանակի և կառուցվածքի մասին նույնիսկ լուսային մանրադիտակի տակ, քանի որ բջիջների բաժաննան ժամանակ, միտոզի մետաֆազա փուլում, քրոմոսոմները կարճանում, հաստանում են և, ներկվելով, լավ տեսանելի դարձնում: 20-րդ դարի վերջերին մոլեկուլային կենսաբանության մեթոդների բուռն առաջընթացը, համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը լուրջ խթան հանդիսացան բջջագենետիկական մեթոդի հնարավորությունների մեծացման առունությունը: Ներկայումս մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս ի հայտ բերել քրոմոսոմների նույն կառուցվածքային փոփոխությունները, նուտացիաների արդյունքում դիտվող քրոմոսոմների նույնիսկ աննշան հատվածների տեղաշարժը:

Ինչպես նշեցինք, բջջագենետիկական մեթոդի օգնությամբ հետազոտվել են մեծ թվով քրոմոսոմային հիվանդություններ, որոնք քրոմոսոմների մուտացիաների հետեւանք են: Որպես կանոն, քրոմոսոմային մուտացիաներն առաջացնում են օրգանիզմի բնականոն օրգագույն շատ ծանր խանգարումներ, որոնք հաճախ անհամատեղելի են կյանքի հետ, այսինքն՝ մահացու են: Սակայն դրանցից մի քանիսի դեպքում մարդը պահպանում է իր գոյությունը՝ տառապելով ծանր քրոմոսոմային հիվանդությամբ: Այդ հիվանդությունների դեպքում ի հայտ են գալիս մի ամբողջ շարք ծանր ախտանիշներ (սիմպտոմներ), որոնց ամբողջությունը պայմանավորում է տվյալ հիվանդության համախտանիշը՝ սիմորումը: Դրանցից առաջինը հայտնաբերվեց Դաունի համախ-

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻ ԶՄԱՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

տաճիշը, որի ախտանիշներն են աչքերի նեղ բացվածքը, անհամաչափ փոքր գլուխը, տափակ դեմքը, ներքին շատ օրգանների ոչ նորմալ զարգացումը, խիստ արտահայտված մտավոր հետամնացությունը և այլն: Այս բոլորի պատճառը մարդու քրոմոսմների համալիրում մեկ ավելորդ փոքր քրոմոսոմի ի հայտ գալն է և դիպլոիդ հավաքակազմում քրոմոսմների ոչ նորմալ թվաքանակը՝ 47 (նկ. 46):



Նկ. 46. Դառնի համախտանիշի առաջացման պատճառը մարդու քրոմոսմների համալիրում մեկ ավելորդ փոքր քրոմոսոմի ի հայտ գալն է և դիպլոիդ հավաքակազմում քրոմոսմների ոչ նորմալ թվաքանակը՝ 47:

Բացի Դառնի համախտանիշից կան շատ այլ քրոմոսմային հիվանդություններ, որոնց կանդրադառնանք հաջորդիվ:


**ԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ մեթոդ:** Շատ դեպքերում, այս կամ այն ժառանգական հիվանդության ժամանակ, կենսաքիմիական ցուցանիշների փոփոխությունները հանդիսանում են հիվանդության հաստատում, երբեմն նաև միակ հատկանիշը, դրանով իսկ կենսաքիմիական ցուցանիշները դարձնելով առավել տեղեկատվական: Կենսաքիմիական ախտորոշման առարկա կարող են լինել օրգանական և անօրգանական նյութերի տարրեր խմբերը (ամինաթրուներ, լիպիդներ, ածխաջրեր, մետաղական իոններ և այլն), ինչպես նաև դրանց մետաբոլիտները և ֆերմենտների կոնցենտրացիայի ու ակտիվության փոփոխությունները: Կենսաքիմիական ախտորոշման առավելությունն այն է, որ այն համապարփակ (ունիվերսալ) բնույթ ունի, այսինքն կենսաքիմիական մեթոդներով կարելի է հետազոտել ցանկացած հյուսվածք կամ օրգանիզմից արտազատված հեղուկ (արյուն, մեզ, քրտինք, թուք և այլն): Սա պայմանավորում է կենսաքիմիական մեթոդների բազմազանությունը և դրանց անընդհատ կատարելագործման անհրաժեշտությունը: Անկասկած, կենսաքիմիական մեթոդները հատկապես առաջնահերթ նշանակություն ունեն նյութափոխանակային գործնթացների խանգարումներ հարուցող ժառանգական հիվանդությունների ախտորոշման

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՄԱԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ

գործում: Ներկայումս հայտնաբերված են ավելի քան 500 այդպիսի հիվանդություններ: Շատ դեպքերում հիվանդի մոտ կարելի է ի հայտ բերել ժառանգական նախահակածություն տվյալ հիվանդության նկատմամբ, ինչը հնարավոր է դարձնում հիվանդության կանխարգելումը:

**Պոպուլյացիոն-վիճակագրական մեթոդ:** Պոպուլյացիոն-վիճակագրական մեթոդներն օգտագործվում են պոպուլյացիաներում գեների և գենոտիպերի հաճախությունների որոշման համար և ցույց են տալիս միջավայրի գործուների ազդեցության տակ այդ հաճախությունների փոփոխությունների բնույթը: Մարդկանց տարբեր խմբերում այս կամ այն հատկանիշների տարածվածության վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջացած մուտացիաները կարող են սերնդեսերունդ փոխանցվել դարեր շարունակ: Հետևաբար, առաջանում է տարբեր ազգությունների և երկրների մարդկանց գենետիկական անհամասեռության բարդ պատկեր: Այդ մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել տվյալ պոպուլյացիայում այս կամ այն հատկանիշ ունեցող երեխայի ծնվելու հավանականությունը:

Պոպուլյացիոն-վիճակագրական մեթոդներն՝ օգտագործելով նյութի մաթեմատիկական մշակումը, որոշում են մարդկանց այս կամ այն գեների տարածվածությունը որոշակի տարածքներում: Այդ տեսակետից, ժառանգական հիվանդությունների պատճառ հանդիսացող գեները բաժանվում են երկու խմբի՝ համապարփակ տարածվածություն ունեցող գեներ և լոկալ՝ որոշակի աշխարհագրական տարածքներում հանդիպող գեներ: Առաջին խմբի մեջ է մտնում, օրինակ՝ դալտոնիզմ հիվանդության գենը, որ հանդիպում է ամենուր, տղամարդկանց մոտավորապես 7%-ի, կանանց՝ 0,5%-ի մոտ (կանանց մոտավորապես 13%-ն ունեն այդ գենը հետերոզիգոն վիճակում): Որպես երկրորդ խմբի գեն կարելի է նշել մանգաղաձև բջիջների անեմիա հիվանդություն առաջացնող գենը, որի գործունեության հետևանքով սինթեզվում է փոփոխված կառուցվածքով հեմոգլոբին սպիտակուցք, ինչն էլ հանգեցնում է անեմիա հիվանդության (**Ակ. 47**): Այս գենն ունի սահմանափակ տարածվածություն (Աֆրիկայի և Միջերկրական ծովի որոշ երկրներ):



Ակ. 47. Առողջ մարդու և մանգաղաձև բջիջների անեմիայով հիվանդի երիթրոցիտները:



Դարցեր կրկնության համար.

1. Որո՞նք են մարդու գենոմի առանձնահատկությունները:
2. Ի՞նչ գիտեք “Սարդու գենոմ” ծրագրի մասին:
3. Ո՞րն է տոհնաբանական մեթոդի էռլերը:
4. Ո՞րն է Մենդելի օրենքների վիճակագրական բնույթը:
5. Նկարագրեք մարդու գենետիկայի ուսումնասիրման երկվորյակային մեթոդը:
6. Նկարագրեք մարդու ժառանգականության ուսումնասիրման բջջագենետիկական մեթոդը:
7. Ո՞րն է կենսաքիմիական մեթոդի էռլերը:
8. Նկարագրեք պոպուլյացիոն-վիճակագրական մեթոդը:

## 14. ՍԱՐԴՈՒ ՍԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱ

**Սեռական քրոմոսոմներ, հոմոզամետ և հետերոզամետ սեռեր:** 9-րդ դասարանի դասընթացից գիտենք, որ օրգանիզմների սեռը որոշվում է բեղմնավորման պահին և կախված է զիգոտի քրոմոսոնային հավաքակազմից: Օրգանիզմների սեռի որոշումը, սեռերի որոշակի հարաբերության պահպանումը, սեռական տարրերությունների ուսումնասիրումը վաղուց հետաքրքրել են մարդուն: Հայտնի է, որ բաժանասեռ օրգանիզմների, այդ թվում և մարդու սեռերի հարաբերությունն ընդհանուր առմանք կազմում է 1:1: Նկարում (**նկ. 48**) բերված է մարդկանց երկու սեռերի քրոմոսոմների պատկերը: 9-րդ դասարանի դասընթացից գիտեք նաև, որ մարդու բջիջների կորիզում առկա 23 զույգ քրոմոսոմներից 22 զույգը միանման են տղամարդկանց և կանանց մոտ, իսկ տարրերությունն առկա է 23-րդ զույգում:


Եթե կանանց քրոմոսոմների 23-րդ զույգը ներկայացված է միանման, այսինքն՝ հոմոլոզ քրոմոսոմներով, ապա տղամարդկանց մոտ դրանք հոմոլոզ չեն: Դրանցից մեկը նաև է կանանց հոմոլոզ քրոմոսոմներին, իսկ մյուսը՝ չափսերով ավելի փոքր է և երկթև (**նկ. 49**):

Այն 22 զույգ քրոմոսոմները, որոնք կանանց և տղամարդկանց մոտ միմյանց նման են, կոչվում են **առլատոսոմներ**, իսկ այն քրոմոսոմները, որոնցով տղամարդիկ և կանայք միմյանցից տարրերում են, կոչվում են **սեռական քրոմոսոմներ**: Հետևաբար, մարդու բջիջների քրոմոսոնային հավաքակազմը կազմված է 22 զույգ առլատոսոմներից և 1 զույգ սեռական քրոմոսոմներից: Կանանց միանման սեռական քրոմոսոմներն անվանում են X-քրոմոսոմներ. տղամարդիկ ունեն 1 X և 1 Y քրոմոսոմ:

Գիտենք, որ սեռական բջիջների հասունացման ժամանակ ձվաբջիջներն ու սպերմատոզուիդներն ունենում են հապլոիդ հավաքակազմ, այսինքն 22 առլատոսոմ և

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՄԱԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ


1 սեռական քրոմոսոմ պարունակող հիվաքակազմ: Կանանց մոտ բոլոր ձվաբջիջները միաննան են, քանի որ ունեն 22 առևտոսում և 1 X քրոմոսոմ, իսկ տղամարդկանց սպերմատոզոդները լինում են երկու տիպի. մեկը՝ 22 առևտոսում և 1 X քրոմոսոմ պարունակող, մյուսը՝ 22 առևտոսում և 1 Y քրոմոսոմ պարունակող: Եթե X քրոմոսոմ պարունակող սպերմատոզոդն է բեղմնավորում ձվաբջիջը, ապա զիգոտի դիպլոիդ հիվաքում քրոմոսոմների 23-րդ զույգը ներկայացված է լինում XX, և այդ սեռը անվանում են **հոմոգամետ**, իսկ եթե Y քրոմոսոմ պարունակող սպերմատոզոդն է բեղմնավորում ձվաբջիջը, ապա դիպլոիդ հիվաքում քրոմոսոմների 23-րդ զույգը լինում է XY, և այդ սեռն անվանում են **հետերոգամետ**: Դետևաբար, մարդկանց մոտ հոմոգամետ է իգական սեռը, հետերոգամետ՝ արականը:



Նկ. 48. Մարդու առևտոսումները և սեռական քրոմոսումները  
(նշված են սլաքներով):

**Սեռի հետ շղթայակցված հատկանիշներ:** Սեռական քրոմոսումներում կան ամբողջ շարք գեներ, որոնք ոչ մի առնչություն չունեն սեռական հատկանիշների դրսելորման հետ: Այն ոչ սեռական հատկանիշները, որոնք որոշվում են սեռական քրոմոսումներում գտնվող գեներով, կոչվում են **սեռի հետ շղթայակցված հատկանիշներ**: Այդ հատկանիշների ժառանգումը կախված է սեռի գենետիկական որոշման սկզբունքից:

Մարդու մոտ Y քրոմոսումը երկը է և փոքր: Դանաձայն վերջին տվյալների, այն պարունակում է ընդամենը 90-92 գեն, բայց դրանց թվում բացի արական սեռական հատկանիշները որոշող գեներից առկա են նաև այլ գեներ, օրինակ՝ ատամների չափսերը որոշող գենը, կամ ականջի մազակալունը (**իիպերտրիխոզ**) պայմանավորող գենը:



Նկ. 49. Մարդկանց սեռական՝ X և Y քրոմոտիզմները:


X քրոմոսոմը պարունակում է 200-ից ավելի գեներ: Կանանց մարմնական բջիջներում կա երկու X քրոմոսոմ, հետևաբար, յուրաքանչյուր հատկանիշի որոշման համար պատասխանատու է երկու գեն, իսկ տղամարդու բջիջներում՝ մեկ X քրոմոսոմ կա և նրանում եղած բոլոր գենները (ինչպես դոմինանտ, այնպես էլ ռեցեսիվ) անպայմանորեն ֆենոտիպորեն դրսևորվում են: Ենթադրենք, թե տղայի օրգանիզմ է անցնում երկու X քրոմոսոմներից այն մեկը, որ պարունակում է հիվանդություն պայմանավորող մուտանտ գեն: Քանի որ տղան հետերոգամետ է և նրա բջիջներում երկրորդ X քրոմոսոմը բացակայում է, ապա այդ հիվանդությունն իսկույն կդրսևորվի: Իսկ եթե հիվանդություն հարուցող, մուտանտ գեն պարունակող այդ X քրոմոսոմն ընկնի ձվաբջիջի մեջ, կզարգանա աղջկա օրգանիզմ, որը հոմոգամետ է, և աղջիկը չի հիվանդանա, քանի որ նա ունի երկրորդ, ոչ մուտանտ գեն պարունակող X քրոմոսոմը: Այդ քրոմոսոմի ոչ մուտանտ գենը կարող է ճնշել մուտանտ գենին, հիվանդությունը չի դրսևորվի, և աղջիկը կլինի առողջ:

Մարդկանց մոտ նկարագրված ձևով է ժառանգվում **հեմոֆիլիա** հիվանդությունը, որի ժամանակ օրգանիզմում պակասում է արյան բնականոն մակարդելիությունն ապահովող նյութերից մեկը: Այս հիվանդության դեպքում մարդը կարող է անվերջ արյունահոսել՝ նույնիսկ չնշին վնասվածքների դեպքում: Նույն կերպ է ժառանգվում նաև **դալտոնիզմ** (կարմիր և կանաչ գույները միմյանցից տարբերելու անկարողություն) հիվանդությունը (Նկ. 50):

Այս հիվանդությունները փոխանցվում են տղային առողջ մորից այն դեպքում, եթե մայրը հանդիսանում է այդ հիվանդածին գենի կրող իր X քրոմոսոմներից մեկում, իսկ մյուս X քրոմոսոմը պարունակում է այդ մուտանտ գենը ճնշող նորմալ գեն: Այս դեպքում տղայի հիվանդ ծնվելու հավանականությունը 1/2- է: Աղջիկները հեմոֆիլիայով կամ դալտոնիզմով շատ հազվադեպ են հիվանդանում, քանի որ դրա

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ

համար պետք է որ հենոֆիլիայի կամ դալտոնիզմի գեն կրող առողջ կինն ամուսնանա հենո-ֆիլիայով կամ դալտոնիզմով հիվանդ տղանարդու հետ, որի հավանականությունը չնշին է: Եվ նույնիսկ այդ դեպքում աղջկա հիվանդ ծնվելու հավանականությունը միայն 1/2 - է:



Նկ. 50. Մարդու գունային տեսողության ստուգման թեսուտ: Եթե դուք տեսնում եք միայն 42 թիվը, ապա ձեր գունային տեսողությունը նորմալ է: Այն մարդիկ, որոնք տեսնում են միայն 4 կամ 2 թիվը՝ հիվանդ են դալտոնիզմով:

Դարցեր կրկնության համար.



1. Որո՞նք են մարդու սեռական քրոմոսոմները. պարզաբանեք հոմոգամետություն և հետերօգամետություն հասկացությունները:
2. Որո՞նք են սեռի հետ շղթայակցված հատկանիշները:
3. Ի՞նչ ոչ սեռական հատկանիշներ որոշող գեններ կան Յ քրոմոսոմում:
4. Ինչպե՞ս են ժառանգվում հենոֆիլիա և դալտոնիզմ հիվանդությունները:

## 15. ՄԱՐԴՈՒ ԺԱՌԱՎԱԿԱՆ ԴԻՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդկանց ժառանգական հիվանդությունները բազմաբնույթ դրսերումներ ունեն: Ներկայումս այդ հիվանդությունների լիարժեք դասակարգում չկա, քանի որ դժվար է որոշել այս կամ այն ժառանգական ախտաբանության հիմքում ընկած չափանիշների շրջանակը, որոնցով հնարավոր է դրանք տարբերակել:

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻ ԶՄԱՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն շատ գիտնականների կողմից ընդունված դասակարգման, մարդու բոլոր ժառանգական հիվանդությունները բաժանվում են չորս խմբի.

ա) հիվանդություններ, որոնք պայմանավորված են մեկ գենում առկա

մուտացիայով: Այդ հիվանդությունների ժառանգումն իրականանում է:

մենդելյան օրինաչափությունների համաձայն, ուստի դրանց անվանում են

նաև **միագենային մենդելյան հիվանդություններ,**

բ) **քրոմոսոմային համախտանիշներ՝** հիվանդություններ, որոնք քրոմոսոմների կառուցվածքային կամ քանակական վերակառուցումների հետևանք են,

զ) **բազմագործոնային հիվանդություններ,** որոնց առաջացման համար անհրաժեշտ է ժառանգական և միջավայրի համապատասխան գործոնների գուգակցում:

Դրանց թվում են նաև որոշ ուռուցքային, ինչպես նաև օրգանիզմի ծերացման հետ կապված հիվանդություններ,

դ) **ժառանգման ոչ ավանդական տիպ ունեցող միագենային հիվանդություններ,**

որոնց սերնդեսերունդ ժառանգումը պայմանավորված չէ մենդելյան

օրինաչափություններով:

Ժառանգական հիվանդությունների մեջ մասի հիմքում ընկած է որոշակի գենի մուտացիան: Մուտացիայի ենթարկված գենի գործունեության արդյունքում սինթեզվում է փոփոխական կառուցվածքով սպիտակուց (ֆերմենտ), որն էլ հանգեցնում է նյութափոխանակային գործընթացների շղթայի համապատասխան փուլի խանգարումների: Այդպիսի փոփոխություններն անվանում են **նյութափոխանակության բնածին խանգարումներ:** Ներկայումս հայտնի են մարդու ավելի քան 2.000 ժառանգական հիվանդություններ: Դրանց մի մասը որոշվում են այնպիսի գեններով, որոնց գործունեությունը կախված չէ միջավայրի պայմաններից: Դրանք առավելապես միագենային մենդելյան տիպով ժառանգվող հիվանդություններն են. օրինակ՝ **ֆենիլկետոնուրիան** (ֆենիլկետոնամիզություն), **հեմոֆիլիան** (արյան ոչ բնականոն մակարդելիություն) և այլն: Կան հիվանդություններ, որոնց պայմանավորող գենների ազդեցությունն այս կամ այն չափով կախված է շրջակա միջավայրի անբարենպաստ պայմաններից: Օրինակ՝ **պոլդագրա** (հոդատապ) հիվանդությունը, որը ոչ ճիշտ սննան հետևանք է: Բազմագործոնային ժառանգական հիվանդությունների դեպքում ևս միջավայրի գործոնները որոշակի դեր են խաղում, սակայն կարևոր է նաև դրանց նկատմամբ նարդկանց ունեցած ժառանգական նախահակվածությունը: Այդպիսի հիվանդությունների շարքին են դասվում **ստամոքսի խոցային** հիվանդությունը, **չարորակ ուռուցմերի շատ տեսակներ** և այլն: Քննարկենք ժառանգական հիվանդությունների մի քանի օրինակներ:

**Ալկապտոնուրիա** հիվանդությունը պայմանավորված է օրգանիզմում որոշակի օքսիդաց ֆերմենտի ոչ բավարար քանակով: Այդ հիվանդությամբ տառապող նորածնի մեզը լույսի տակ սևանում է: Նորածնի բարուրի վրա սև թերեն խսկույն նկատելի են դառնում: Ալկապտոնուրիան կարող է բերել արտրիտ հիվանդության առաջացմանը: Այս հիվանդությունը օրգանիզմում որոշակի արգասիքների ավելցուկային կուտակմամբ պայմանավորված գենետիկական խանգարումների օրինակ է:

**Ֆենիկսոնուրիան,** ինչպես **ալկապոնուրիան** և **ալքինիզմը**, կապված է արո-նատիկ ամինաթրուներից մեկի՝ ֆենիլալանինի նյութափոխանակության գենետիկապես պայմանավորված խանգարման հետ: Այս հիվանդությամբ տառապղող մարդկանց մոտ խաթարված է ֆենիլալանինի ձևափոխունը մեկ այլ ամինաթրվի՝ թիրոզինի: Գունակի անբավարար քանակի պատճառով՝ հիվանդի մազերը և մաշկը սովորաբար բավական բաց գունավորում են ունենում, բայց ոչ այն աստիճան, ինչպես ալքինիզմի դեպքում է, քանի որ թիրոզինի որոշակի քանակ միշտ անցնում է օրգանիզմ սննդի հետ: Այս հիվանդության ցայտուն ախտանիշներից է մտավոր զարգացման խստ դանդաղումը, որը, հավանաբար, ֆենիլալանինի արգասիքների գլխուղեղի վրա ունեցած ազդեցության հետևանք է: Ֆենիլալանինի որոշ արգասիքներ մեզի հետ հեռացվում են, ինչն էլ հնարավոր է դարձնում հիվանդության ախտորոշումը:

**Գալակտոզեմիան** գալակտոզ ածխածուրը ձևափոխունը ֆերմենտներից մեկի ոչ բավարար ակտիվությամբ է պայմանավորված: Դիվանդների օրգանիզմում այդ ֆերմենտի ակտիվությունը կտրուկ ընկնում է: Դիվանդությունը դրսնորվում է միայն հոմոզիգոտ վիճակում, իսկ հետերոզիգոտների ֆերմենտի ակտիվությունը բավական բարձր է: Դիվանդության դեպքում խանգարվում է գալակտոզից գլուկոզի առաջացումը մարդու աղիներում: Քանի որ գալակտոզը մտնում է մայրական կաթի պարունակության մեջ, հետևաբար գալակտոզեմիայի դեպքում դիտվում է գալակտոզով օրգանիզմի թունավորում, սա էլ իր հերթին առաջացնում է ածխաջրերի և ամինաթրուների փոխանակության խանգարումներ: Գալակտոզեմիայով հիվանդ երեխայի մոտ զարգանում են **դեղնախտ, մարսողական** խանգարումներ, յարոդի և փայծաղի վնասվածքներ և, որ ամենակարևորն է՝ թուլամտություն: Դիվանդությունը հանդիպում է 50.000 նորածիններից մեկի մոտ: Սննդառեժինում կարնաշաքարի բացակայությունը կանխարգելում է նշված ախտանիշների զարգացումը: Դիվանդությունը ժառանգվում է ռեցեսիվ տիպով:

**Հաքարախտող** ինսուլինի հորմոնի անբավարության հետ է կապված: Բուժումն իրականացվում է սովորաբար խոշոր եղթերավոր անասունի ենթաստամոքսագեղձից անջատված հորմոնի օրգանիզմ ներարկելով: Սակայն սա հիվանդի օրգանիզմում կարող է առաջացնել անցանկալի, ալերգիկ ռեակցիաներ, որոնցից կարելի է խուսափել՝ ստանալով հորմոն այն բակտերիաներից, որոնցում ներմուծվել է մարդու ինսուլինային գեն: Ինսուլինի այդ պրեպարատները (պատրաստուկները) օժտված են հակագենային բնութագրերով, որոնք լիովին համապատասխանում են մարդու ինսուլինին:

**Դառնի համախտանիշը** դասվում է այսպես կոչված քրոմոսոմային հիվանդությունների թվին, որոնք, որպես կանոն, չեն ժառանգվում, այլ առաջանում են ծնողների օրգանիզմում ընթացած գամետոզենեզի հետևանքով քրոմոսոմների նորմալ թվաքանակի խախտան պատճառով: Քանի որ այս հիվանդությունները գենետիկական ապարատի խանգարումներ են, դրանք նույնապես դասվում են ժառանգական հիվանդությունների թվին: Դառնի համախտանիշի դեպքում հիվանդի քրոմոսոմների թվաքանակը մեկով ավելանում է, դառնալով 47 (քրոմոսոմների 21-րդ զույգը ներ-

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՉԱՆԵՐԻ ԺԱՌԱՋԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

կայացված է լինում 3 քրոմոսոմով՝ **տրիսոմիա**): Յիշանդությունը հանդիպում է 750 նորածիններից մեկի մոտ, սեռերի հավասար հավանականությամբ: Յիմնական հատկանիշներից են՝ դեմքի մոնղոլիդ կազմվածքը և թուլամտությունը: Դառնի համախտանիշն ուղեկցվում է սրտի արատներով, խոշոր անոթների կառուցվածքի, մարսողական համակարգի խանգարումներով, չարորակ ուռուցքների առաջացնամբ և, որպես հետևանք, կյանքի կարճատևությամբ:

**Եղվարդսի համախտանիշը** նույնաբես քրոմոսոմային հիվանդություն է, միայն այն տարբերությամբ, որ տրիսոմիա է դիտվում քրոմոսոմների 18-րդ զույգում: Յիշանդությունը հանդիպում է 7000 նորածիններից մեկի մոտ, իգական և արական սեռերի հարաբերությունը 3:1 է: Եղվարդսի համախտանիշի ֆենոտիպային դրսևորումները բազմազան են: Ամենաբնորոշ դրսևորումներն են՝ հոգեշարժական զարգացման դանդաղումը և նույնիսկ դադարումը, սրտի բնածին արատները, կմախքի մկանումքի և ճարպային հյուսվածքի թերզարգացումը, դեմքի և գանգի կառուցվածքի խախտումները և այլն: Կյանքի տևողությունը խիստ կարծ է, երեխանների 90%-ը մահանում է մեկ տարին չըրլորած զարգացման ծանր արատների և վարակիչ հիվանդությունների հետևանքով:

**Պատառի համախտանիշը** քրոմոսոմների 13-րդ զույգում տրիսոմիայի հետևանք է: Յիշանդությունը հանդիպում է 6.000 նորածիններից մեկի մոտ, սեռերի հավասար հավանականությամբ: Յիշանդ նորածինները նույնաբես ունենում են մեծ թվով տեսանելի խախտումներ, որոնք արագորեն դրսևորվում են նաև գլխուղեղային, սրտային, երիկամային և այլ արատների ձևով: Զարգացման ննան ծանր արատները հանգեցնում են մահվան մեկ, հազվադեպ՝ մինչև 2-3 տարեկան հասակում:



Դարցեր կրկնության համար.

1. Ո՞րն է մարդու ժառանգական հիվանդությունների ժամանակակից դասակարգումը:
2. Բերեք միագենային մենդեյյան տիպով ժառանգվող հիվանդությունների օրինակներ:
3. Բերեք բազմագործոնային ժառանգական հիվանդությունների օրինակներ:
4. Նկարագրեք ալկապտոնուրիա, ֆենիլկետոնուրիա, գալակտոզեմիա հիվանդությունները:
5. Բերեք տրիսոմիա առաջացնող քրոմոսոմային հիվանդությունների օրինակներ:

## 16. ՄԱՐԴՈՒ ՈՐՈՇ ԺԱՌԱՋԱԿԱՍ ՅԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԲՈՒԺՈՒՄԸ

ժառանգական հիվանդությունների կանխարգելումը մարդու գենետիկայի կարեվորագույն հիմնահարցերից է: Վերջին տարիներին՝ էկոլոգիական իրադրության վատքարացման և արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների ազդեցության մեջացումը մարդու օրգանիզմի վրա, խիստ կարևորում է կանխարգելիչ մի-

---

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՄԱԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

ջոցառումների կիրառումը: Հայտնի են կանխարգելիչ միջոցառումների երկու հիմնական խնդեր:

- 1) **առաջնային կանխարգելում**, այսինքն՝ ժառանգական ախտաբանական խանգարումներ ունեցող երեխաների ծնվելու կանխում,
  - 2) **երկրորդային կանխարգելում**, այսինքն՝ գենոտիպի ախտաբանական փոփոխություններով մարդկանց հիվանդության զարգացման ռիսկի իջեցում:
- Առաջնային կանխարգելում:** Ներկայումս զգալի հաջողություններ են արձանագրվում առաջնային կանխարգելիչ միջոցառումների իրականացմամբ, որոնց հիմքում ընկած է **բժշկագենետիկական խորհրդատվությունը**:

Բժշկագենետիկական խորհրդատվությունը նաև առաջարկում է բուժության ժամանակական ժամանակական հիվանդություն ունեցող երեխայի ծնունդը: Գրեթե բոլոր երկրներում, առկա է բժշկագենետիկական խորհրդատվություն իրականացնող կազմակերպությունների լայն ցանց, որոնց հիմնական ֆունկցիան է ընտանիքում ժառանգական հիվանդությունների առաջացման կանխատեսումը և կանխարգելումը:

Որպես կանոն, բժիշկ-գենետիկին դիմում են ապագա երեխայի առողջության կանխագուշակման նպատակով, ընդ որում հաճախ հետադարձ խորհրդատվություն ստանալու համար, քանի որ ընտանիքն արդեն ունեցած է լինում հիվանդ երեխա: Այս դեպքում խորհրդատվության հիմնական նպատակն ապագայում հիվանդ երեխա ծնվելու հավանականության որոշումն է, կանխարգելիչ միջոցառումների նախատեսումը: Ավելի հազվադեպ են դեպքերը, երբ դիմում են հիվանդ երեխա չունեցող, բայց այդպիսի ռիսկի հավանականություն ունեցող, ընտանիքի զույգերը **ապագայի խորհրդատվություն** ստանալու համար: Դրանք հիմնականում ազգակցության մեջ գտնվող զույգերն են, կամ էլ այն ընտանիքները, որոնց անուսինը կամ կինը ունեն ժառանգական հիվանդություններով տառապող ազգականներ: Անկասկած, պրոսպեկտիվ խորհրդատվությունը ժառանգական հիվանդությունների կանխարգելման առավել արդյունավետ միջոց է, հատկապես ժամանակակից մեթոդների, այդ թվում՝ ՊՆԹ-ի հետազոտման (ՊՆԹ-անալիզ) կիրառմանը:

Բժշկագենետիկական խորհրդատվությունն ունի մի քանի փուլ: **Առաջին փուլը** ամենակարևորն է, քանի որ այս փուլում է իրականացվում ժառանգական հիվանդության կանխագուշակումը և նրա ժառանգման տիպը: **Երկրորդ փուլում** որոշվում են խորհրդատվություն ստացողների և նրանց ընտանիքների գենոտիպերը՝ հիվանդության առաջացման հավանական ռիսկի հաշվարկով: **Երրորդ փուլում** հետազոտվում է կանխարգելիչ միջոցառումների հնարավորությունը և որոշվում են դրանց կիրառման առավել արդյունավետ եղանակները: Այս հիմնական խնդիրներից բացի, կարևոր է նաև խորհրդատվության ժամանակ առաջարկվող հոգեբանական և իրավագիտական օգնությունը:

**Առաջնային կանխարգելման միջոցառումներից է նաև մինչժմնային ախտորոշաբնությունը:** Բջջագենետիկայի, կենսաքիմիայի և մոլեկուլարյան կենսաբանության զարգացումը հնարավորություն տվեց մարդկանց քրոնոսումային և գենային

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՉԱԾՆԵՐԻ ԺԱՌԱՎԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

մուտացիաները հայտնաբերել ոչ միայն ծնվելուց հետո, այլև մինչծննդային զարգացման տարրեր փուլերուն: Մինչծննդային ախտորոշաբանությունը հանալիք միջոցառումների կիրաօման օգնությամբ հնարավորություն է տալիս կանխել ընտանիքներում հիվանդ երեխայի ծնունդը: Այս ուղղությամբ առավել հաջողություններ են արձանագրվել քրոնոսունային սինդրոմների և միագենային հիվանդությունների առումով, մինչդեռ բազմագենային ժառանգմամբ ախտաբանությունների ախտորոշումը բավական դժվար է:

**Երկրորդային կանխարգելում:** Երկրորդային կանխարգելիչ միջոցառումների հիմնական մեթոդը, որի նպատակն է գենոտիպի ախտաբանական փոփոխություններ ունեցող մարդկանց մոտ կլինիկական դրսևորումների կանխումը. **Կենսաքիմիական սկրինինգը** է (մաղումը): Ներկայում կիրառվում են կենսաքիմիական սկրինինգի երկու՝ **զանգվածային** և **ընտրողական** սկրինինգային ժրագրեր: Զանգվածային սկրինինգը կատարվում է որոշակի պոպուլյացիայում առանց որևէ ընտրության:

Առավել հաճախ զանգվածային սկրինինգ կիրառվում է նորածինների շրջանում առոտոսունային-ռեցեսիվ հիվանդությունների հայտնաբերման համար: Մեծ նաև առաջնային ստուգվում են ֆենիլկետոնուրիա և բնածին հիպոթրեոզ (վահանագեղձի հիվանդություն) հիվանդությունների գծով, թեև հիվանդությունների կազմը տարբեր պոպուլյացիաներում կարող է տարբեր լինել:

**Ընտրողական սկրինինգի** ժրագրերը կազմվում են նկատի ունենալով որոշակի ախտաբանությամբ հիվանդներին:

Մինչև վերջերս ժառանգական հիվանդությունների բուժումը համարվում էր անհեռանկարային և, գործնականորեն, չէր իրականացվում: Ցանկացած հիվանդության ժառանգական բնույթի հաստատումը ենթադրում էր դրա անկասելի խորացումը և բուժման անհնարինությունը, ինչպես դեղամիջոցների կամ թերապիայի այլ մեթոդների կիրառմամբ, այնպես էլ վիրահատական մեթոդների միջոցով: Վերջին տարիներին միագենային և բազմագործոնային մի շարք ժառանգական հիվանդությունների երիտրոգիհական (պատճառագիտական) և պարոգենետիկական (ախտաբանական-գենետիկական) մեխանիզմների վերծանումը հնարավորություն տվեց մշակելու և կատարելագործելու դրանց արդյունավետ բուժման եղանակները:

Բուժման մարտավարությունը որոշվում է հաշվի առնելով տվյալ հիվանդության բնույթի և նրա զարգացման ախտաբանագենետիկական մեխանիզմների մասին առկա տեղեկատվությունը:

**Ժառանգական հիվանդությունների բուժման մոտեցումներից է գենաբերապիան:** Ժառանգական հիվանդությունը կարելի է բուժել հիվանդի օրգանիզմ ներմուծելով մուտացիայի հետևանքով վնասված գենի նորմալ պատճենը, որը կպայմանավորի պակասող սպիտակուցի սինթեզը: Նման գործընթացը հնարավոր դարձավ գենային ճարտարագիտության զարգացման շնորհիվ: Գիտնականները ԴՆԹ-ից անջատում են անհրաժեշտ գենը, բազմացնում այն և ստեղծում այնպիսի կառույց, որն աշխատում է մարդու օրգանիզմում՝ փոխարինելով վնասված մուտանտ գենը: Այսպիսով, փոփում է հիվանդի գենոտիպը և այդ փոփոխության հիմքում ընկած է գեների տեղափոխումը՝ **տրամագենեզը**:

1990 թվականին ԱՄՆ-ում փորձ արվեց գենաթերապիայի միջոցով բուժել հազվադեպ հանդիպող ժառանգական հիվանդություն՝ բնածին **իմունային անքավարությունը**: Քանի որ հիվանդության պատճառը որոշակի ֆերմենտի բացակայությունն էր, հիվանդ երեխայի օրգանիզմ ներմուծեցին այդ ֆերմենտի սինթեզը որոշող գենի պատճենը: Փորձը պսակվեց հաջողությամբ, սակայն հիվանդության լիարժեք բուժում չարձանագրվեց: Գենի պատճենը հիվանդի գենոմի մեջ չէր ներդրվում, այլ գործում էր որպես ԴՆԹ-ի առանձին հատված, այն էլ ոչ բոլոր բջիջներում:

Մարդու օրգանիզմում գեների փոխարինումը մեկը մյուսով, փաստորեն, գենոֆոնի փոփոխություն է նշանակում: Այն կարող է բերել անկանխատեսելի հետևանքների, եթե նկատի ունենանք գեների գործունեության կարգավորման և նրանց փոխներգործության գործընթացների բարդությունը: Գենոֆոնի փոփոխությունները կարող են ճակատագրական լինել մարդու որպես տեսակի գոյության համար, և այդ պատճառով շատ երկներում արգելված են նման հետազոտությունները:

Ժառանգական հիվանդության բուժման համար անպայման չէ, որ հիվանդի բոլոր բջիջներում գենոտիպը փոխվի. չէ որ գեների մեջ մասը բոլոր բջիջներում չի գործում: Մարդու օրգանիզմից կարելի է վերցնել որոշ քանակի բջիջներ, օրինակ՝ ոսկրածուծի բջիջներ, ներմուծել դրանց մեջ անհրաժեշտ գենը: Այնուհետև այդ գենը պարունակող բջիջները կրկին ներարկել հիվանդի օրգանիզմ: Որպեսզի գեները ներդրվեն մարդու գենոմի մեջ, օգտագործում են գեների հատուկ փոխադրիչներ՝ **գենետիկական վեկտորներ**: Դրանք վիրուսի ԴՆԹ-ի մոլեկուլներ են, որոնցից հեռացվում են իրենց մի շարք գեները, փոխարինելով դրանք մարդու գենով: Այնուհետև մարդու գեն պարունակող վիրուսի ԴՆԹ-ն ներդրվում է մարդու բջիջների գենոմի մեջ, և այդ բջիջներն ել ներարկվում են հիվանդի օրգանիզմ:

Գենաթերապիայի միջոցով հնարավոր է բուժել ոչ միայն ժառանգական, այլ նաև չարորակ մի շարք հիվանդություններ:



### Յարցեր կրկնության համար.

1. Որո՞նք են կանխարգելիչ միջոցառումների երկու հիմնական խմբերը:
2. Ի՞նչն է զնկած առաջնային կանխարգելիչ միջոցառումների իրականացման հիմքում:
3. Պարզաբներ հետադարձ և ապագայի խորհրդատվություններ հասկացությունները:
4. Ո՞րն է երկրորդային կանխարգելման հիմնական մեթոդը:
5. Ի՞նչ է գենաթերապիան:
6. Ի՞նչ է գենետիկական վեկտորը, որտե՞ղ է այն օգտագործվում:

## 17. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Շրջակա միջավայր ասելով հասկանում ենք մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրը: Այն իր մեջ ներառում է մարդու աշխատանքային, կենցաղային, հաճախական պայմանները և, իհարկե, սնունդը: «Շրջակա միջավայր» հասկացությունն ավելի լայն է, քան «արտաքին միջավայր» կամ «արտադրական միջավայր» հասկացությունները, որոնք շրջակա միջավայրի բաղադրամասերն են: Բնական է, որ մարդն իր կյանքի ընթացքում մշտապես գտնվում է շրջակա միջավայրի հետ բարդ փոխհարաբերությունների մեջ՝ ներգործելով նրա վրա և, միաժամանակ, կրելով նրա բազմաբնույթ ազդեցությունը: Եթե արտադրական միջավայրը սահմանափակված է մարդու աշխատանքային գործունեության պայմաններին բնորոշ արտադրական գործուների ազդեցությամբ, ապա մարդու առողջության վրա ազդող արտաքին միջավայրի գործուները շատ բազմազան են՝ ֆիզիկական, քիմիական, կենսաբանական բնույթի:

Շրջակա միջավայրի գործուներն, ընդհանուր առնամբ, կարելի է բաժանել երկու խմբի՝ բնական և արհեստական գործուներ: Մարդու օրգանիզմի վրա ազդող բնական գործուների թվին են դասվում օդի գազային բաղադրությունը, մթնոլորտային ճնշումը, ջերմաստիճանը, խոնավությունը, իոնացման աստիճանը, ջրի մակոր- և միկրոտարերի բաղադրությունը, ջրի գոռ- և ֆիտոպլանկտոնը, ջրում և հողում առկա միկրոօրգանիզմները, տիեզերական և արեգակնային ճառագայթումը, բնական ռադիոակտիվ ճառագայթումը և այլն: Արհեստական գործուներն ի հայտ են գալիս մարդու տնտեսական գործունեության ընթացքում: Դրանք նախ և առաջ օդը, ջուրը, հողը և սննդամբերը ներառյալ քիմիական և կենսաբանական նյութերն են, աղմուկն է, ինչպես նաև հաճախության տարրեր միջակայքերի էլեկտրամագնիսական ալիքներն են:

Մարդու իր բազմադարյան գարգացման ընթացքում հարմարվել է բնական գործուների ազդեցությանը, մինչդեռ արհեստական գործուների հանդեպ մարդու օրգանիզմը հարմարված չէ, և նրա պատասխան ռեակցիան, որ կախված է գործոնի բնույթից և ներգործության տևողությունից, կարող է անկանխատեսելի լինել: Այն կարող է բերել առողջության ինչպես աննշան շեղումների, այնպես էլ լուրջ հիվանդագին երևույթների, ընդհուպ՝ մահվան:

Հատկանշական է, որ միջավայրի արհեստական գործուների բացասական ներգործությունը մարդու առողջության վրա ուժգնանում և առավել ցայտուն դրսնորումներ է ստանում գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում, եթե մարդու ներգործությունը շրջակա միջավայրի վրա դառնում է առավել ազդեցիկ:

Մարդու գարգացման ընթացքում շրջակա միջավայրի բնական բաղադրիչները ենթարկվել են էական փոփոխությունների, որոնք մարդու կողմից կենդանիների ընտելացման, մշակովի բույսերի առաջացման, կենդանիների և բույսերի ամբողջական կենսացենոզների ոչնչացման, երկրի անտառածածկ տարածքների կրծատման և բնությանը պատճառած այլ բացասական գործընթացների արդյունք են: Հայտնի է, որ մարդու կողմից նույնիսկ մեկ բնական բաղադրիչի ոչնչացումը կարող է բերել

## ԳԼՈՒԽ 2. ՕՐՎԱՆԻՑՄԵՐԻ ԺԱՄԱԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ

բնության մեջ հաստատված հավասարակշռության խախտման, բնական բաղադրիչների միջև եղած փոխհարաբերությունների խանգարման, բնական տարածքային համալիրների կառուցվածքի վերափոխման, որոնք իրենց բացասական (նոյնիսկ՝ կործանարար) ազդեցությունը կարող են թողնել մարդու բնականոն զարգացման, նրա առողջության վրա:

Մարդու առողջության վրա յուրահատուկ բացասական ազդեցություն է թողնուն համընդիանուր ուրբանացումը՝ տնտեսական և մշակութային կյանքի կենտրոնացումը մեծ քաղաքներում: Երկրագնդի բնակչության կեսից ավելին ապրում է քաղաքներում, իսկ զարգացած երկրներում քաղաքային բնակչության տոկոսը շատ ավելի մեծ է, այդտեղ շատ են բազմամիլիոնանոց քաղաքների կուտակումները: Ուրբանացումը ծնունդ է սոցիալական-հիգիենիկ, սանիտարա-տեխնիկական, համաձարակային բնույթի բազմապիսի հիմնախնդիրները: Այն նպաստում է նյարդային, հոգեկան հիվանդությունների, փոխադրամիջոցների պատճառած վթարների հետեւանքով վնասվածքների տարածմանը: Միաժամանակ, ուրբանացումն ունի նաև դրական նշանակություն: այն նոր հնարավորություններ է ընծեռում բժշկական օգնության կատարելագործման, խոշոր բժշկական հաստատությունների ստեղծման, բնակչության կենսապայմանների բարելավման առումով և այլն:

Երկրագնդի շատ տարածքների սանիտարային վիճակի զգալի բարելավման, վարակիչ հիվանդությունների բվաքանակի էական կրծատնան հետ մեկտեղ ի հայտ են գալիս նորանոր հիվանդածին գործոններ, որոնց դեմ մշտապես պետք է ընթանա անհաշտ պայքար: Ահա թե ինչու շրջակա միջավայրը մշտապես կարիք ունի պահպանման և առողջացման՝ հանուն բնության և մարդկանց առողջության պահպանման: Բոլոր երկրներում շրջակա միջավայրի պահպանությունն ունի պետական նշանակություն:

### Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչ է շրջակա միջավայրը, ի՞նչ է ներառում այն իր մեջ:
2. Պարզաբանեք «արտաքին միջավայր» և «արտադրական միջավայր» հասկացությունները:
3. Շրջակա միջավայրի ի՞նչ գործոններ գիտեք:
4. Ի՞նչ է ուրբանացումը, ի՞նչ հիմնախնդիրներ է այն առաջացնում:

### ԳԼՈՒԽ 3.

## ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՆՈՐԱԳՈՒՅՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ

### 18. ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

**Սելեկցիան և նրա հիմնական մեթոդները:** Բույսերը և կենդանիները վաղուց, անհիշելի ժամանակներից իրենց կարևոր տեղն ունեն մարդու կյանքում: Մարդու օգտագործում է շատ բույսեր և կենդանիներ, մշակում և ընտելացնում դրանցից շատերին: Դարերի ընթացքում վայրի բույսերի մշակման և վայրի կենդանիների ընտելացման և հետագա բուծման արդյունքում ստեղծվել են բույսերի բազմաթիվ սորտեր և կենդանիների մեծաքանակ ցեղատեսակներ: Դրանք օժտված են մարդու համար այտանի և տնտեսապես կարևոր հատկանիշներով: Սելեկցիայում կարևոր են բույսերի և կենդանիների ձևաբանական և ֆիզիոլոգիական, ինչպես նաև ժառանգական որոշ առանձնահատկությունները: Դրանց թվում՝ բույսերի բարձր և կայուն բերքատվությունը կամ կենդանիների մեջ արտադրողականությունը, բեղունությունը, բերքի կամ արտադրանքի որակը, դրանցում սպիտակուցի, ամինաթրուների, շաքարների կամ ճարպերի, վիտամինների պարունակությունը, միջավայրի որոշակի գործոնների, օրինակ, ցածր ջերմաստիճանի կամ չոր պայմանների, ինչպես նաև վնասատուների կամ բակտերիալ և վիրուսային տարբեր հիվանդությունների նկատմամբ բույսերի կամ կենդանիների կայունությունը և այլն: Այդ հատկանիշները հաճախ փոխկապակցված են, դրանց դրսևնորումը պայմանավորված է կենդանի օրգանիզմներում, ինչպես նաև դրանց և շրջակա միջավայրի միջև բարդ կապերի ու փոխագդեցությունների առանձնահատկություններով: Այս ամենի համար կարևոր է կենդանի օրգանիզմների կենսաբանության, առաջին հերթին՝ նրանց բազմացման, բույսերի փոշոտման և բեղմնավորման, կենդանիների անհատական զարգացման ինացությունը, ժառանգականության և փոփոխականության օրինաչափությունների տիրապետումը, կենսաբանության նվաճումների ճիշտ և արդյունավետ կիրառումը:

Այս բոլորը գիտության մի կարևոր կիրառական ճյուղի՝ սելեկցիայի հիմնական խնդիրն է: Այն, ինչպես գիտեք, **ուսումնասիրում է բույսերի նոր սորտերի, կենդանիների նոր ցեղատեսակների և միկրոօրգանիզմների նոր շտամերի կենսաբանական հիմունքները և ստացման մեթոդները: Սելեկցիան մշակում է նաև գոյություն ունեցող սորտերի, ցեղատեսակների և շտամների բարելավման ուղիները:**

Սելեկցիայի խնդիրների ձևավորման և նրա զարգացման գործում մեջ դեր են ունեցել անգլիացի գիտնականներ **Պ.Շիֆերը, Ֆ.Գալլերը, կենդանաբույներ Ո.Բեկուելը և Կոլլինգ Եղբայրները**, գերմանացի բուսաբույներ **Ֆ.Ախարդը, Վ.Ռիմպաուն:** Առանձնահատուկ է ռուս բուսաբույնը, գենետիկ և սելեկցիոններ Նիկոլայ Իվանովիչ Վավիլովի (նկ. 51) ավանդը: Նա հաստատեց մշակովի բույսերի ծագման և տեսա-

կային բազմազանության հիմնական կենտրոնները, բացահայտեց ազգակից՝ գենետիկորեն մինյանց մոտ տեսակների և ցեղերի բույսերում միևնույն հատկանիշների զարմանալի կրկնությունը և ձևակերպեց օրգանիզմների այդպիսի տեսակների և ցեղերի **ժառանգական փոփոխականության հոմոլոգիական շարքերի օրենքը**: Օրինակ, եթե փափուկ ցորենի տեսակում հանդիպում են սպիտակ, կարմիր, սև, մոխրագույն հասկերով ծևեր, ապա նման ծևեր կան նաև ազգակից տեսակներում: Դա օգնում է որոնել սելեկցիայի համար բույսերի և կենդանիների տնտեսապես կարևոր հատկանիշները, գուշակել ազգակից տեսակի կամ ցեղի ննանապիա ժառանգական փոփոխականությունը:



Նկ. 51. Նիկոլայ Իվանովիչ  
Վավիլով (1887-1943թ.):

Բույսերի և կենդանիների սելեկցիայի **հիմնական մեթոդներն են ընտրությունը և հիբրիդացումը**: Նախ, ծանոթանանք ընտրությանը:

**Ընտրություն:** Սելեկցիոն ընտրության հիմքում ընկած է մարդու կողմից կատարվող **արհեստական ընտրությունը**: Բույսերի կենսաբանության առանձնահատկություններից սելեկցիայում կարևոր են սեռական և անսեռ տարբեր եղանակներով, այդ թվում վեգետատիվ օրգանների միջոցով բույսերի բազմացումը և մեծ քանակի սերնդի ստացումը: Ի տարբերություն բույսերի, կենդանիների դեպքում կիրառվում է միայն սեռական եղանակով բազմացումը և փոքր քանակի սերնդի ստացումը ու հետևաբար մեծ է կենդանու ամեն մի առանձնյակի արժեքը:

Տարբերում են արհեստական ընտրության երկու հիմնական ձևեր՝ **զանգվածային** կամ **տարերային** և **անհատական** կամ **մեթոդական**: Արհեստական ընտրության տեսության հիմքերը դրվել են 19-րդ դարում անգլիացի մեծ կենսաբան Չարլզ Դարվինի կողմից: Նա, ուսումնասիրելով ընտանի կենդանիների բազմաթիվ ցեղատեսակների ծագումը, եղանակացրել է, որ նրանք և մշակովի բույսերի սորտերը ստեղծվել են արհեստականորեն՝ մարդու կողմից վայրի տեսակների նախնիների ժառանգական փոփոխությունների ընտրության ճանապարհով: Չ. Դարվինը պարզաբանել է նաև այդ ընտրության նշանակությունը:

**Զանգվածային ընտրությունը**՝ առանձնյակների խմբի առանձնացումն է ըստ ցանկալի արտաքին, հիմնականում, ձևաբանական հատկանիշների. փաստորեն

### ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

առանձնացվում են մեծ թվով առանձնյակներ ըստ ֆենոտիպի՝ առանց ստուգելու նրանց գենոտիպը (**նկ. 52**): Ընդ որում, այդպիսի ընտրությունը կատարվում է բույսերի և կենդանիների հատկանիշների ֆենոտիպային դրսնորմանը նպաստող որոշակի պայմաններում: Այդ առանձնյակներից ստանում են սերունդներ: Այսպես՝ զանգվածային ընտրությունը հաճախ կիրառվում է խաչածն փոշոտվող հացազգիների, օրինակ՝ աշորայի, և այլ բույսերի դեպքում, եթե ընտրվում են բարձր բերքատու կամ շրջակա միջավայրի որոշակի պայմաններում առավել դիմացկուն առանձնյակները: Կենդանիներից, օրինակ, հավերի ընտրության ժամանակ թողնում են միայն ձվատու, որոշակի գունավորում և քաշ ունեցող, թուխս նստելու բնագդից զուրկ հավերին: Ընդ որում, յուրաքանչյուր հավի և աքաղաղի սերունդ գնահատվում է միայն ըստ ֆենոտիպի:



Նկ. 52. Զանգվածային ընտրություն:

Զանգվածային ընտրությունն առանձնահատուկ է նրանով, որ այդ ընտրության արդյունքում չի հաջողվում ստանալ գենետիկորեն հիմողիկոտ առանձնյակների պոտույացիա: Այն սովորաբար կիրառվում է բազմապատիկ անգամ, կրկնվում է: Զանգվածային ընտրությունն առավել արդյունավետ է մեկ կամ մի քանի գեներով կարգավորվող որակական հատկանիշների նկատմամբ:

Զանգվածային ընտրությունը հաճախ զուգորդվում է անհատական ընտրության հետ:

**Անհատական ընտրության** ժամանակ ևս առանձնացվում են որոշակի ֆենոտիպային հատկանիշներով առանձնյակներ, սակայն այս ընտրությունը հիմնվում է բույսի կամ կենդանու գենոտիպի գնահատման վրա: Դրա համար ուսումնասիրվում է ընտրված օրգանիզմի սերունդը, և գնահատվում են նրա ցուցանիշները՝ հետաքրքրող հատկանիշների պարտադիր ստուգմանը զուգընթաց: Ընտրության հետագա փուլերում օգտագործվում են միայն այն առանձնյակները, որոնք տվել են բարձր ցուցանիշներ ունեցող առավել մեծ քանակով սերունդ:


Անհատական ընտրությունն առավելապես կիրառվում է ինքնափոշոտվող բույսերի, օրինակ՝ ցորենի կամ գարու, ինչպես նաև տարբեր կենդանիների նկատմամբ: Ինքնափոշոտումը տանում է սերմունք մեծ թվով հիմողիկոտ առանձնյակների ստացմանը, որոնք հետագայում կարող են կազմել բույսերի նոր սորտ:

Նոր ցեղատեսակներ ստանալու նպատակով կենդանիների ընտրության գործընթացում կարևոր է նկատի ունենալ արտադրողների արտակազմվածքային (էքս-

տերիեր) հատկանիշները և մթերատվությունը: Նշենք, որ կենդանու օրգանիզմի տարբեր հատկանիշները միմյանց հետ կապված են, և հաջողության հասնելու համար հաճախ անհրաժեշտ է հաշվի առնել այդ կապերը: Արտադրողների ընտրության համար օգտավետ հատկանիշները հաշվառվում են մի քանի սերնդի ընթացքում, վարելով տոհմագրական նայուաններ: Դա հնարավոր է դարձնում գնահատել խաչաերնանը մասնակցող առանձնյակների գենոտիպը:

Առանձինատուկ է կենդանիների արումների ընտրությունը: Այս դեպքում հաշվի է առնվում նրանց ժառանգական որակը, որը որոշվում է փորձարկման միջոցով սերնդում ցանկալի հատկանիշների դրսուրման հիման վրա:

Անհատական ընտրությունը նպաստում է մաքուր գծեր ստանալուն: Դրանք հոմոգիզուտ առանձնյակների սերումներ են: Այդ ընտրության արդյունքում ստացվում են մեկ կամ մի քանի հոմոզիզուտ **մաքուր գծերից** բաղկացած բույսերի սորտեր կամ կենդանիների ցեղատեսակներ (**նկ. 53**): Իհարկե, մաքուր գծերում էլ մուտացիաների հաշվին կարող են ի հայտ գալ հետերոզիզուտ առանձնյակներ:



**Նկ. 53. Բույսերի և կենդանիների մաքուր գծեր:**


Մաքուր գծերի ստացումը հնարավորություն է տալիս ամրապնդել բույսի այս կամ այն սորտի կամ կենդանու ցեղատեսակի մարդու համար ցանկալի հատկանիշները:

Վեգետատիվ եղանակով բազմացվող բույսերի ցանկացած հետերոզիզուտ ձև, որն ունի արդյունավետ և տնտեսական կարևոր հատկանիշներ, կարելի է որպես սորտ պահել և բազմացնել: Սակայն սեռական բազմացման ժամանակ բույսերի այս հետերոզիզուտ սորտերի հատկությունները չեն պահպանվում և տեղի է ունենում նրանց ճեղքավորում:

Ընտրության արդյունավետությունը պայմանավորված է ելանյութի բազմազանությամբ, որը հաճախ ժառանգական փոփոխականության՝ մուտացիաների արդյունք է: Այն դեպքերում, երբ ժառանգական բազմազանությունը մեծ չէ, ընտրությունն էլ արդյունավետ չի լինում: Այստեղ հիշատակենք գեների բազմապատիկ հավաքակազմ ունեցող բույսերի և կենդանիների **պոլիպլոիդ ձևերը** (**նկ. 54**): Պոլիպլոիդ ձևեր կարող են ստացվել նաև փորձարարական ճանապարհով՝ տարբեր

### ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ֆիզիկական գործոնների (ռենտգենյան և այլ իոնացնող ճառագայթում, բարձր ջերմաստիճան) կամ տարրեր քիմիական նյութերի օգնությամբ: Այդպիսիններից են, օրինակ, ցորենը, աշորան կամ կարտոֆիլը: Դրանք ավելի խոշոր են և կենսունակ, առավել կայուն շրջակա միջավայրի տարրեր գործոնների, ինչպես նաև տարրեր վնասատուների և հիվանդությունների նկատմամբ, օժտված են ավելի բարձր բերքատվությամբ, սպիտակուցների, շաքարների, այդ թվում՝ օսլայի պարունակությամբ: Վերջին տարիներին ստացվել են նույնիսկ կաղնու, բարդու և այլ ծառատեսակների նոր պոլիպլոիդ ձևեր, որոնք ունեն տնտեսապես արժեքավոր հատկություններ: Կենդանիներից հայտնի են թթենու շերամի, ձկների, թռչունների պոլիպլոիդ ձևերը:



Նկ. 54. Բույսերի և կենդանիների պոլիպլոիդ ձևեր.  
1-դդում, 2-թթենու շերամ,  
3-լճածածան:

Ռենտգենյան և այլ իոնացնող ճառագայթման, բարձր և ցածր ջերմաստիճանի, ուլտրամանուշակագույն ճառագայթման կամ տարրեր քիմիական նյութերի օգնությամբ ստացվում են բույսերի մոլուստ ձևեր, որոնցից ընտրվում են օգտակար հատկանիշներով առանձնյակներ՝ նոր սորտեր ստանալու նպատակով: Դա **արհեստական մոլուսգենեզն** է: Այդպիսի եղանակով ստացված են ցորենի, գարու, եգիպտացորենի, բրնձի, ոլոռի, լոբու, բազմամյա խոտաբույսերի և այլ բույսերի արժեքավոր մոլուստներ, որոնց հետագա ընտրության ճանապարհով ստացվում են բույսերի նոր սորտեր: Նշենք հատիկում սպիտակուցների բարձր պարունակությամբ ցորենի, որոշ ճարպաթրուների մի քանի անգամ բարձր պարունակությամբ արևածաղկի սորտերը: Գարնանացան ցորենի Նովոսիրիուսկի-67 սորտը ստացվել է այլ սորտի սերմերի ռենտգենյան ճառագայթման արդյունքում: Այդ սորտի բույսերն ունեն կարճացած և հաս-

տացած ցողուն, որի հաշվին նրանք կայուն են և չեն պառկում:

Ներկայում էլ մշակվում և կատարելագործվում են բույսերի և կենդանիների ընտրության նոր մոտեցումներ՝ ուղղված նրանցում ցանկալի հատկանիշների ամրապնդանը և զարգացնանը:

Բույսերի նոր սորտերի և կենդանիների նոր ցեղատեսակների ստացմանը ուղղված արհեստական ընտրությունը գործում է բնական ընտրության հետ միասին, իսկ դա բերում է առանձնյակների հարմարվածության բարձրացմանը:

**Դարցեր կրկնության համար.**



1. Ինչո՞ւ են ստանում բույսերի նոր սորտեր և կենդանիների նոր ցեղատեսակներ:

Ո՞ր հատկանիշներն են կարևորվում բույսերի սորտերի և կենդանիների ցեղատեսակների մոտ:

2. Ի՞նչ է ուսումնասիրում սելեկցիան:

3. Ի՞նչ ավանդ է ներմուծել Ն.Ի.Վավիլովը սելեկցիայում:

4. Որո՞նք են բույսերի և կենդանիների սելեկցիայի հիմնական մեթոդները:

5. Արհեստական ընտրության ի՞նչ ձևեր կան: Որո՞նք են դրանց հիմնական առանձնահատկությունները:

6. Ո՞րն է ֆենոտիպի և գենոտիպի միջև կապը: Կարո՞՞ղ են մաքուր գծերում ի հայտ գալ հետերոզիգոտ առանձնյակներ:

7. Ի՞նչ գիտեք բույսերի և կենդանիների պոլիպլոид ձևերի մասին: Ինչպե՞ս են դրանք օգտագործվում սելեկցիայում:

8. Ի՞նչ է արհեստական մուտագենեզը: Բերեք այդ եղանակով ստացված բույսերի նոր սորտերի օրինակներ:

9. Ինչպիսի՞ն է արհեստական և բնական ընտրության միջև կապը:

## 19. ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԴԻՔՐԻԴԱՑՈՒՄ

Ինչպես նշվեց, սելեկցիայի հիմնական մեթոդներից է հիբրիդացումը: Ծանոթանանք հիբրիդացման հետ:

**Հիբրիդացում:** Հիբրիդացումը տարբեր հատկանիշների, առնվազն մեկ զույգով տարբերվող ծնողական առանձնյակների, խաչասերման միջոցով հիբրիդային սերունդ ստանալը է: Այնուհետև ստացված հիբրիդային սերներում արդեն նշված ընտրության միջոցով առանձնացվում է պիտանի և տնտեսապես կարևոր հատկանիշներով մի առանձնյակ, որն օգտագործվում է հետագա սերունդներ ստանալու նպատակով:

Արդեն նշվել է մաքուր գծերի ստացումը, որը հնարավորություն է տալիս ամրապնդել բույսի այս կամ այն սորտի կամ կենդանու ցեղատեսակի մարդու համար ցանկալի հատկանիշները: Սակայն այնուհետև միջգծային խաչասերման արդյունքուն

### ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

զգալիորեն ուժեղանում է ստացված հիբրիդային սերնդի կենսունակությունը, բերքատվությունը կամ արտադրողականությունը, աճը և զարգացումը, շրջակա միջավայրի պայմաններին հարմարվելու ունակությունը: Այդ երևույթն անվանվում է **հետերոզիս:** Բայց հետերոզիզոտ բույսերին կամ կենդանիներին մինյանց հետ խաչասերելու ժամանակ, հետագա սերունդներում առանձնյակները կորցնում են այդ հատկանիշները, հետերոզիսի երևույթն աստիճանաբար մարում է: Չնայած դրան, հետերոզիսի երևույթը փորձում են օգտագործել արդյունավետ և տնտեսական բարձր ցուցանիշներ ստանալու նպատակով:

Բույսերի նոր սորտերի ստացման նպատակով հիբրիդացման համար նշանակություն ունի **աշխարհագրական առումով իրարից հեռու առանձնյակների խաչասերումը:** Այստեղ հայտնի են ուս սելեկցիոներ ակադեմիկոս Ի.Վ.Միջուրինի (նկ. 51) բազմաբնույթ աշխատանքները, երբ պտղատու բույսերի, հատկապես խնձորենու և տանձենու սելեկցիայում նա կատարում էր տեղական ցրտադիմացկուն և հիվանդությունների նկատմամբ կայուն ու հարավային հիանալի համով և լավագույն այլ հատկանիշներով սորտերի հիդրիբացում: Այսպես, Միջուրի չինական և ամերիկյան բելֆյոր խնձորենու սորտերի խաչասերման արդյունքում նա ստացավ խնձորենու բելֆյոր կիտայկա ընտիր սորտը՝ պսուղների արտակարգ համով (նկ. 51): Նման ձևով նա ստացավ նաև խնձորենու Սլավյանկա և տանձենու ձմեռային բերե առաջնակարգ սորտերը (նկ. 55): Միջուրինի հաջողությունները պայմանավորված էին հիբրիդների հետագա խիստ ընտրության և նրանց զարգացման վրա միջավայրի պայմանների ներգործության համակցությամբ:



Նկ. 55. Ի.Վ.Միջուրինը (1855-1935թթ.) և նրա կողմից ստացված խնձորենու և տանձենու նոր սորտերը:

Բույսերից առավել կարևոր են հացագիները, որոնք ունեն սննդային մեծ նշանակություն: Նրանցից ամեկակարևորը ցորենն է, որի մշակվող սորտերը, ինչպես գիտենք, պետք է տան բարձր բերք, միջավայրի գործոնների նկատմամբ լինեն դիմացկուն և հիվանդությունների նկատմամբ կայուն: Սակայն անհրաժեշտ են նաև

ծաղիկների և հասկերի թեփուկներից հատիկների անջատման առանձնահատկությունները և տեխնոլոգիական լավ հատկությունները: Տարբերում են ցորենի փափուկ և կարծր սորտերը: Վերջիններս ավելի պահանջկուտ են ջերմության նկատմամբ և այդ պատճառով մշակվում են հարավային տարածքներում: Այստեղ նշենք ռուս բուսաբույծ ակադեմիկոս **Պ.Պ.Լուկյանենկոյի** ստեղծած աշնանացան փափուկ ցորենի միջահասակ, միջին ցրտադիմացկուն և երաշտակայուն, բարձր բերքատու (1 հեկտարից մինչև 85-90 ցենտներ) և ստացվող այսուի և հացաթման տեխնոլոգիական լավ հատկություններով Բեզոստայա-1 սորտը (**նկ. 56**): Այդ սորտը ստացվել է Լյուտեսցենս-17 և Սկորոսապելկա-2 տարբեր սորտերի հիբրիդացման և հիբրիդների հետագա ընտրության միջոցով: Դայտնի են ցորենի նաև այլ սորտեր, ռուս բջջաբան և գենետիկ **Գ.Դ.Կարպեչենկոյի** ստեղծած գարու և հացազգիների բազմաթիվ նոր սորտեր:



**Նկ. 56. Աշնանացան ցորենի  
Բեզոստայա-1 սորտը:**

Բույսերի նոր ձևերի ստացման նպատակով օգտագործվում է **հեռավոր հիբրիդացումը**, երբ խաչասերում են միևնույն ցեղին և նույնիսկ տարբեր ցեղերին պատկանող առանձնյակներ: Դայտնի են աշորայի և ցորենի (կոչվում է տրիտիկալե), ցորենի և վայրի հացազգի բույս այծակնի, **Ն.Վ.Ցիցինի** կողմից ստացված ցորենի և բազմամյա մոլախոտ սեզի, **Գ.Դ.Կարպեչենկոյի** ստեղծած բողկի և կաղամբի, ինչպես նաև **Ի.Վ.Միջուրինի** ստացած մոշենու և մորենու, սալորենու և մամխենու, արռսենու և սզնու և այլ միջտեսակային և միջցեղային հիբրիդները (**նկ. 57**): Այդ հիբրիդները տալիս են բարձր բերք և կայուն են անբարենպաստ գործոնների նկատմամբ: Դիբրիդներից շատերն ունեն մեծ արժեք և հեռանկարային են:

Միջտեսակային և միջցեղային հիբրիդներից շատերը բարդ հետերոզիգոտներ են: Սակայն այդպիսի հիբրիդները սովորաբար անպոտուղ են: Դրանց ցանկալի հատկությունները պահպանելու համար հիբրիդների նոր առանձնյակներ ստացվում են վեգետատիվ բազմացման օգնությամբ: Նշենք, որ հեռավոր հիբրիդների անպատությունը կարող է պայմանավորվել արական բջջի բջջակորիզի և մայրական բջջի ցիտոպլազմայի անհամատեղիկությամբ, բայց առավելապես քրոնոսումների քանակի տարբերությամբ և սեռական բջիջների հասունացման գործընթացների խախտում-

### ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՆՈՐԱԳՈՒՅՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Աերով: Գիտնականների ջանքերով հնարավոր է դառնում դրանց հաղթահարումը, պահպանության վերականգնումը և նոր սերնդի ստացումը:



Նկ. 57. Բույսերի միջտեսակային և միջցեղային հիբրիդներ:

Կենդանիների նոր ցեղատեսակների ստացման համար հիբրիդացման ժամանակ օգտագործվում է երկու տեսակի **խաչասերում՝ ոչ ազգակցական և ազգակցական**: Վերջինս դեպքում, որը կոչվում է **ինքրիդինգ**, միմյանց հետ խաչասերում են արյունակից առանձնյակներին՝ եղբայրներին և քույրերին, ծնողներին և սերունդը: Դա բերում է կենդանու հատկանիշները որոշող գեների հոմոզիգոտության: Ազգակցական խաչասերման արդյունքում հաճախ դրսորվում են կենդանու հատկանիշների բացասական փոփոխություններ՝ դիտվում է կենդանիների կենսունակության բուլացում, շրջակա միջավայրի գործոնների և տարբեր հիվանդությունների նկատմամբ կայունության նվազում: Այդպիսի փոփոխություններից պետք է խուսափել հետագայում տարբեր գծերի խաչասերումներ կատարելով:

Անգլիական սպիտակ խոշոր և ուկրաինական տեղական ոչ ցեղական խոզերի միջցեղատեսակային և հետագա մոտ ազգակցական խաչասերման արդյունքում ռուս կենդանաբույծ **Ս.Ֆ.Իվանովը** ստեղծել է խոզերի բարձր մթերատու և տեղական միջավայրին լավ հարմարված մի նոր ցեղատեսակ **Ասկանի-1-ը** (**Ակ. 58**): Այդ ցեղատեսակի խոզերն ավելի արագ են աճում, խոշոր են և ունեն ամուր մարմնակառուցվածք, արուների քաշը հասնում է մինչև 322-338 կգ, իսկ մերուններինը՝ մինչև 238-243 կգ, վերջիններս նաև բազմապտուի են: Այս ցեղատեսակն առանձնահատուկ է մասի բարձր որակով: Նման աշխատանքները բերել են խոզերի մեկ այլ՝ Սիբիրի Շյուսիսային սպիտակ ցեղատեսակի ստեղծմանը:



Նկ. 58. Խոզերի բարձր մթերատու Ասկանի-1 ցեղատեսակը:

Ոչ ազգակցական խաչասերման արդյունքում ստացված հիբրիդներից են թթենու շերամի միջտեսակային, ստերլերի կամ չուրայի և թառափի միջցեղային հիբրիդները։ Զանբիկի և արու ավանակի հիբրիդը՝ ջորին, որը շատ դիմացկուն է, օժտված է ֆիզիկական մեծ ուժով և կյանքի մեջ տևողությամբ, սակայն այն անպտուղ է։ Դայտնի են նաև գերբի ու ձիու հիբրիդները (**նկ. 59**):



**Նկ. 59. Զանբիկի ու արու ավանակի հիբրիդը՝ ջորին և գերբի ու ձիու հիբրիդը։**

Կենդանիների խաչասերման արդյունքում, ինչպես և բույսերում, դիտվում է հետերոզիսի երևոյթը, որը կիրառվում է հիբրիդների առաջին սերնդի անմիջական օգտագործման դեպքում։

Կենդանիների սելեկցիայում լայնորեն օգտագործվում է **արհեստական սերմնավորումը**։

Վերջին տարիներին բույսերի և կենդանիների սելեկցիան զուգորդվում է գենային և բջջային ճարտարագիտության հետ։

**Դարցեր կրկնության համար.**



1. Ի՞նչ է հիբրիդացումը։ Ո՞ր սերունդն է կոչվում հիբրիդային։ Դիբրիդացման ի՞նչ ձևեր գիտեք։
2. Ի՞նչ է հետերոզիսը։ Ո՞ր դեպքում է այն կիրառվում։
3. Բերեք բույսերի և կենդանիների միջտեսակային և միջցեղային հիբրիդների օրինակներ։ Ինչպես է հաղթահարվում այդպիսի հիբրիդների անպտղությունը։
4. Դիբրիդացման ձևերից ո՞րն է օգտագործել Ի.Վ.Միջուրինը։ Բույսերի ի՞նչ սորտեր է նա ստացել։
5. Ի՞նչ տեսակի խաչասերում է օգտագործվում կենդանիների սելեկցիայում։ Բերեք կենդանիների ցեղատեսակների օրինակներ, նշեք դրանց առաձնահատկությունները։

## 20. ՄԻԿՐՈՐԳԱՍԻԶՄԱՆ ՍԵԼԵԿՑԻԱ

Միկրորգանիզմները՝ բակտերիաները և խմորասնկերը, ինչպես նաև մանրադիտակային այլ սնկեր, ջրիմուռները և նախակենդանիները շատ մեծ դեր են խաղում մարդու կյանքում, նրանք տարբեր նպատակներով լայնորեն օգտագործվում են գյուղատնտեսության և արդյունաբերության բազմաթիվ ճյուղերում, էներգետիկայում, անասնաբուժության և բժշկության մեջ և այլ բնագավառներում: Կենսաբանության դպրոցական դասընթացի նախորդ բաժիններում նրանց հետ ծանոթանալիս բազմից նշվել է դրա մասին, բերվել են շատ օրինակներ:

Բույսերի և կենդանիների նման, միկրորգանիզմների առավել արդյունավետ օգտագործման համար իրականացվում է նրանց սելեկցիան: **Նպատակն է ստանալ այնպիսի բջիջներ, որոնք օժտված են այս կամ այն պիտանի նյութի կենսասինթեզի առավել ակտիվությամբ, որոնք կայուն են շրջակա միջավայրի անբարենպաստ գործնների, ինչպես նաև տարրեր քիմիական նյութերի, այդ թվում՝ հակարիոտիկների նկատմամբ:** Կարևորվում են նրանց կայունության պահպանման ընթացքում կենսագանգվածի արագ առաջացումը, և այդ գործընթացների քիչ ծախսատար լինելը: Դրանից ելելով, միկրորգանիզմների սելեկցիայում տարրերում են հետևյալ ուղղությունները. տարբեր բույսերի և հակարիոտիկների նկատմամբ կայունության մեծացումը, սննդամիջավայրերի կազմի պահանջնունքի նվազումը, միջավայրում պիտանի նյութերի կուտակման բարձրացումը:


Արդյունավետ ձևերի անջատման համար միկրորգանիզմների սելեկցիան օգտագործում է բույսերի և կենդանիների սելեկցիային բնորոշ ընտրության տարբեր մեթոդներ: Միկրորգանիզմների սելեկցիայում ևս կարևոր է ելանյութը՝ նանրի բջիջը գտնվում և մեկուսացվում է բնությունից կամ ընտրվում հայտնի հավաքածուներից: Այդ բջիջը պետք է արագ բազմանա հարաբերականորեն պարզ սննդամիջավայրերում և ունենա մարդու նպատակներին առավել համապատասխանող հատկանիշներ:

Միկրորգանիզմների սելեկցիայում լայն տարածում է ստացել աստիճանական ընտրությունը:

Միկրորգանիզմների բարձր արդյունավետ ձևերը հաճախ ժառանգական փոփոխությունների՝ նուտացիաների արդյունք են: Դրանք դրսևորվում են առաջին իսկ սերնդում: Մուտացիաների մակածման համար լայնորեն օգտագործվում են շրջակա միջավայրի ֆիզիկական գործոններ և քիմիական նյութեր: Դրանցից են ռենտգենյան և ուլտրամանուշակագույն ճառագայթումը, տարբեր լազերները, քիմիական տարբեր նյութերը, օրինակ՝ ազոտական իպրիտը, երկերիլուլֆատը, որոնք ունակ են միկրորգանիզմների ԴՆԹ-ում առաջացնելու փոփոխություններ: Բջիջների ձևափոխմանը կարող է հանգեցնել նաև քաղցր: Կարևոր է այն, որ ձևափոխված ժառանգական հատկանիշները լինեն հաստատուն և կայուն ձևով դրսևորվեն մինյանց հաջորդող սերունդներում:

Միկրորգանիզմների նյութափոխանակությունն այդքան էլ պարզ չէ, հայտնի են նրա ճյուղավորված կամ կարճեցված ուղիները: Ուստի սելեկցիայում կարևոր է գիտենալ միկրորգանիզմներում նյութափոխանակության և դրա կարգավորման բազում ճանապարհների մասին հստակ ցուցիչները:

Միկրոօրգանիզմների սելեկցիայի հիմնական ուղղություններից է հակաբիոտիկների, ամինաքրուների, վիտամինների և նպատակային այլ նյութերի մեջ քանակ արտադրող շտամների ստացումը: Արդեն կան ծներ, որոնք արտադրում են մի քանի տասնյակ անգամ շատ ելքով հակաբիոտիկներ, քան նրանց ելակետային քիչները (**նկ. 60**): Հետաքրքիր է, որ դեղագործական արտադրանքում հակաբիոտիկները գրավում են առաջին տեղերից մեկը և նրանց արտադրության աճը կազմում է տարեկան 10-20%: Հակաբիոտիկների արտադրության նման ծավալները հնարավոր են միկրոօրգանիզմների արդյունավետ շտամների օգտագործմանը:



**Նկ. 60. Հակաբիոտիկների բարձր արտադրությամբ բակտերիաների և խմորասնկերի տարրեր շտամների:**

Արդյունաբերության մեջ օգտագործման համար շտամները պետք է լինեն կայուն բարձր ջերմաստիճանի, թթվայնության, ֆագերի և միջավայրի այլ գործոնների նկատմամբ, ինչպես նաև ոչ վնասակար մարդու և կենդանիների համար:

Վերջին տարիներին միկրոօրգանիզմների սելեկցիայում հաջողություններ են արձանագրվել գենային ճարտարագիտության և այլ նորագույն մեթոդների օգնությամբ: Դրանց մասին հիմնական տեղեկությունները բերվում են հաջորդ պարագաներում:

**Հարցեր կրկնության համար.**



1. Ի՞նչ գիտեք միկրոօրգանիզմների սելեկցիայի մասին: Ո՞րն է դրա նպատակը:
2. Ի՞նչ մեթոդներ է այն օգտագործում:
3. Նպատակային նյութեր արտադրող միկրոօրգանիզմների ի՞նչ շտամներ գիտեք:

### Առաջադրանք:

Պատրաստե՛ք տեղեկատվություն հակարիտիկմերի և դրանց դերի մասին, նշելով միկրոօրգանիզմների նոր շտամների օգնությամբ նրանց արտադրության ծավալի աճի հնարավորությունները։ Կարո՞՞ղ եք վերլուծել մեծ քանակի հակարիտիկմերի երկարատև օգտագործման հետևանքները և առաջարկել դրանք հաղթահարելու ուղիներ։

## 21. ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ

**Կենսատեխնոլոգիան և նրա նշանակությունը:** Կենսաբանության մեր օրերի կարևոր առանձնահատկությունն այն է, որ կյանքի մասին այս համալիր գիտությունը դրաբեկ է կենդանի օրգանիզմների և դրանց կենսագործունեության տարրեր դրսևորումների օգտագործմանք պայմանավորված **տեխնոլոգիական** շատ կարևոր ուղղություն։ Դա իրականացվել է կենսաբանության և դրա առանձին բնագավառների, հատկապես մոլեկուլային կենսաբանության, գենետիկայի, կենսաքիմիայի, կենսաֆիզիկայի վերջին տասնամյակների այն վիթխարի հաջողությունների շնորհիվ, որոնք բացահայտեցին կենդանի օրգանիզմներում ընթացող հիմնական գործընթացների առանձնահատկությունները և հնարավոր դարձեցին դրանց վերարտադրումը կառավարվող պայմաններում՝ մարդու համար կարևոր նպատակներով։ Բնականաբար, կա սննդամբերքի արտադրության մեծացման, էներգիայի նոր աղբյուրների ստացման, հանքային պաշարների արդյունավետ օգտագործման, կենդանի օրգանիզմների հիվանդությունների և շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքարի նոր տեխնոլոգիաների պահանջարկ։ Կենդանի օրգանիզմների և դրանց կենսագործունեության տարրեր դրսևորումների արդյունավետ և նպատակային օգտագործումն արդեն իսկ հանգեցրել է կենսատեխնոլոգիաների մշակմանը և գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ նրանց կիրառմանը։

**Կենսատեխնոլոգիան** ապահովում է արդյունաբերական մասշտաբներով տարբեր օրգանական նյութերի արտադրումը, սննդանյութերի, դեղորայքի կամ հակամարմինների ստացումը, կենսավառելիքի անջատումը կամ նրա նոր տեսակների կենսաբանական (կենդանի օրգանիզմների միջոցով) ստացումը և օգտագործումը և այլն (**նկ. 61**)։ Հայտնի է տարբեր մետաղների կուտակումը բակտերիաներում, որն արդեն կիրավում է մետաղահանման արդյունաբերության մեջ։ Կենսատեխնոլոգիական մեթոդներն օգտագործվում են շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքարում, վնասատումներից և հիվանդությունների տարածումից բույսերի պաշտպանության համար։

Կենսատեխնոլոգիան զարգացում է ապրում մեր օրերում, սակայն կենդանի օրգանիզմները և դրանց կենսագործունեության դրսևորումները վաղուց են օգտագործվում մարդու կյանքում (**նկ. 62**)։ Նշենք խմորասնկերի միջոցով հացի թխման համար խմորի, մանրէներով մերանի օգնությամբ մածունի և տարբեր այլ կարնամբերքների, ինչպես նաև խաղողի հյութից գինու ստացումը։



Նկ. 61. Ժամանակակից կենսատեխնոլոգիական արտադրությունում:

Գարեջրի պատրաստման մասին տեղեկությունները, օրինակ, հայտնի են մի քանի հազարամյակ մ.թ. առաջ: Գինու պատրաստումը նույնպես հազարամյակների պատմություն ունի: Ավանդական այդ գործընթացների հիման վրա կենսատեխնոլոգիան մշակել է այդ և այլ մթերքների ստացման նոր, առավել արդյունավետ եղանակներ:



Նկ. 62. Սննդամբերքերի ստացման ավանդական տեխնոլոգիաները:

Հայաստանը հայտնի է իր պանրագործությամբ: Պանիրների ստացման ընթացքում օգտագործում են տարբեր միկրոօրգանիզմներ և ֆերմենտներ, որոնց տեսականին ապահովում է նաև պանրի համն ու հոտը:

**Կենսատեխնոլոգիայի ուղղություններ:** Նախորդ պարագագում բերված **գենային և բջջային ճարտարագիտությունը** կենսատեխնոլոգիայի հիմնական ուղղություններն են: Արդյունաբերության մեջ օգտագործվող կենսատեխնոլոգիայի հիմնական

### ուղղություններից են նաև մանրէաբանական սինթեզը, խմորումը և ֆերմենտային ճարտարագիտությունը:

Մանրէաբանական սինթեզը միկրոօրգանիզմների նյութափոխանակության շնորհիվ այս կամ այն քիմիական նյութի՝ սպիտակուցի, ամինաթթվի, ածխաջրի, հակարիոտիկի, վիտամինի, սպիրտի, օրգանական թթվի կամ այլ նպատակային արգասիքի մեջ ելքով ստացումն է արդյունաբերական եղանակով: Դրա համար ձևափոխության են ենթարկում միկրոօրգանիզմները, ստանում նոր շտամներ, ընտրում նրանց աճի և կենսագործունեության առավել նպաստավոր պայմաններ, սնուցման նոր աղբյուրներ: Դա հնարավորություն է տալիս էապես, նույնիսկ հազարավոր անգամ մեծացնել ստացվող նպատակային արգասիքի քանակը: Միաժամանակ ընտրում են այնպիսի սննդամիջավայրեր և շրջակա միջավայրի պայմաններ, սարքերի այնպիսի տարրերակներ և կառուցվածքներ, որոնք այդ գործընթացի իրականացումը դարձնում են արագ, ինչպես նաև տնտեսապես արդյունավետ:

Մանրէաբանական սինթեզի գործընթացները շատ բազմազան են: Այդ գործընթացների արդյունքում ստացվում են, տարաբնույթ նպատակային նյութեր: Օրինակ՝ մանրէաբանական սինթեզի միջոցով նավթի յուրահատուկ մշակման արդյունքում արտադրվում է սպիտակուց, միաժամանակ բարձրանում է մնացած նավթի որակը:

Բացի արդեն նշված նպատակային նյութերից, դիտարկվում են նաև գործընթացներ, որոնց արդյունքում կարևորվում է ընդհանրապես մանրէների՝ խմորասնկերի, մանրադիտակային ջրիմուների կամ այլ օրգանիզմների կենսագանգվածի ստացումը:

Մանրէաբանական սինթեզի վերահսկումը և կառավարումը հնարավորություններ է ընձեռում այդ գործընթացների հետագա կատարելագործման համար: Մշակվում է այդ գործընթացների մաթեմատիկական մոդելավորումը:

Խմորման կենսատեխնոլոգիան ընդգրկում է տարբեր միկրոօրգանիզմների օգտագործմանը անթրվածին պայմաններում օրգանական թթվածնի: Խմորման բազմաթիվ տեսակներ են հայտնի: Դրանք տարբերակվում են օգտագործվող միկրոօրգանիզմներով, տարբեր նյութերի փոխակերպման արդյունքում առաջացող վերջնային նյութով: Այդպիսի նյութեր կարող են ստացվել նաև քիմիական եղանակներով առանց միկրոօրգանիզմների օգտագործման: Կենսատեխնոլոգիայի կիրառությունը արդյունաբերության մեջ հնարավորություն է տալիս օգտագործել արտադրական և կենցաղային թափոնները որպես հումք, խառնուրդներից արդյունավետ անջատել նպատակային վերջնանյութերը: Այստեղ կարևոր են նաև ճարտարագիտական լուծումները, որոնց հաշվին ստեղծվել և կատարելագործվել են գործընթացի իրականացման սարքերը, օրինակ, հսկա կենսառեակտորները (նկ. 64):

Խմորման կենսատեխնոլոգիայի միջոցով արտադրվող օրգանական թթվուներից առաջինը եղել է կաթնաթթուն: Այս թթուն որպես օքսիդիչ լայն կիրառություն ունի

սննդի արդունաբերության մեջ: Կաթնաթուն, օրինակ որոշում է յոգուրտի համը: Կաթնաթուն օգտագործվում է նաև տեքստիլ, պլաստիկ նյութերի արտադրությունում: ԱՄՆ-ում և Եվրոպայում կաթնաթթվի տարեկան արտադրությունը մի քանի տասնյակ հազ. տոննա է:



Նկ. 63. Լուի Պաստյոր (1822-1895թթ.):

Խմորման կենսատեխնոլոգիայի միջոցով այսօր ստանում են կենսագազ, որի հիմնական բաղադրիչը մեթանն է ( $\text{CH}_4$ ), և մոլեկուլային ջրածին ( $\text{H}_2$ ), որոնք լավ վառելիք են: Մեթանային խմորումը բացահայտել է խտալացի գիտնական Ա. Վոլտան դեռևս 18-րդ դարում: Մեթանը ստացվում է պարզ ռեակցիայում  $\text{CO}_2 + 4\text{H}_2 = \text{CH}_4 + 2\text{H}_2\text{O}$ :



Նկ. 64. Խմորման կենսատեխնոլոգիական սարք՝ հսկա կենսառեակտոր:

Մեթանի և մոլեկուլային ջրածնի ստացման համար ընտրվել են տարբեր տեսակների արդյունավետ բակտերիաներ և ստացվել են նոր շտամներ, որոնք հաջողությամբ յուրացնում են տարբեր օրգանական թափոններ (գոմաղը և թռչնաղը,

### ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

արդյունաբերական, գյուղատնտեսական և կենցաղային մնացորդներ, հոսքային ջրեր և այլն): Մշակվել են նաև տեխնոլոգիական ռեժիմներ, ստեղծվել են տեխնիկական սարքավորումներ, գտնվել են տեխնիկական նոր լուծումներ: Դրանք էապես նպաստել են միկրոօրգանիզմների միջոցով մեթանի և մոլեկուլային ջրածնի ստացման արդյունավետության բարձրացմանը: Կենսագազի արտադրությունը սկսվել է Հնդկաստանում, որտեղ այսօր գործում են միջինավոր կենսառեակտորներ: ԱՄՆ-ում արդեն գործում են այնպիսի կենսառեակտորներ, որոնցում թափոնների մեկ տոննայից օրվա ընթացքում արտադրվում է մինչև մի քանի հարյուր մ<sup>3</sup> մեթան: Մեծ քանակի կենսառեակտորներ են գործում նաև Եվրոպական երկրներում, Չինաստանում, ճապոնիայում և այլուր: Մեթանի և մոլեկուլային ջրածնի արտադրության մեջ ընդլայնվում է նաև միկրոօրգանիզմներից անջատված ֆերմենտների օգտագործումը, մշակվում են սովորական ջերմաստիճանում և բնականոն ճնշման պայմաններում այդ ֆերմենտների բարձր ակտիվությունը պահպանելու մեթոդներ: Մոլեկուլային ջրածնի արդյունավետ ստացման համար խնդրող միկրոօրգանիզմների հետ համատեղ, ուսումնասիրվում են նաև ֆոտոսինթեզող ծիրանագույն բակտերիաները և կապտականազ ջրինութեները: Հետզիեւտ մեծանում է խնդրում գործընթացների նշանակությունը և տարբեր միկրոօրգանիզմների կիրառումը, իսկ մոլեկուլային ջրածնը, որի օգտագործման դեպքում չի առաջանում ածխաթրու գազ, դառնում է էկոլոգիապես մաքուր կարևորագույն վառելիք: ԱՄՆ-ում և Բրազիլիայում, օրինակ, ջրածնի այրման օգտագործմանը ավտոմեքենաների շահագործման փորձեր են իրականացվում: ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ստեղծվել է ջրածնի էներգիայի միջազգային համագործակցություն, որը մեծապես նպաստում է այդ վառելիքի արտադրության զարգացմանը: Հետաքրքիր է, որ վերջերս ծիրանագույն բակտերիաներ անջատվել են նաև Հայաստանում հանքային ջրերի աղբյուրներից (**նկ. 65**). այդ բակտերիաները որոշակի պայմաններում արտադրում են մոլեկուլային ջրածն:



Նկ. 65. Հայաստանում հանքային ջրերի աղբյուրներից մեկը և դրանցից անջատված ծիրանագույն բակտերիան:

Հայաստանում տարիներ առաջ հիմնադրվել է բակտերիաների միջոցով անփոխարինելի ամինաթթուներից մեկի՝ լիզինի արտադրությունը (նկ. 66): Լիզինը բակտերիաներում ճյուղավորված նյութափոխանակային ուղու վերջնանյութն է, որպես հումք օգտագործվում է քացախաթթուն կամ ճակնդեղամաթը (մելաս): Լիզինն ավելացվում է անասնակերին՝ բերելով մսի արտադրության էական աճի: Հայտնի է, որ 1 տոննա լիզինի օգտագործումից խնայվում է 40-50 տ հացահատիկ, իսկ մսի լրացուցիչ արտադրությունը կազմում է 10 տ: Ուստի լիզինը որպես անասնակերի մեջ ավելացվող նյութ մեծաքանակ պահանջարկ ունի գյուղատնտեսության մեջ: Իսկ աշխարհում տարեկան արտադրվում է մի քանի տասնյակ հազար տոննա լիզին:



Նկ. 66. Լիզինի արտադրությունում:

Բակտերիաներում գեների մոլուստացիաների և տարբեր այլ փոփոխությունների հաշվին ստացվել և ընտրվել են արդյունավետ արդյունաբերական շտամներ, կատարելագործվել է լիզինի և այլ ամինաթթուների, օրինակ՝ թրեոնինի, պրոլինի արտադրությունը: Լիզինը, թրեոնինը և այլ ամինաթթուներ անհրաժեշտ են մարդուն: Ներկայում լայն կիրառություն ունի ֆերմենտային ճարտարագիտությունը: Հացազգիների ածխաջրերից գլուկոզի կամ ֆրուկտոզի խտահյութի, այլ սննդամթերքի կամ էքանոլի ստացման արտադրությունն ընթանում է ֆերմենտների մասնակցությամբ: Ֆերմենտների կայունության, նրանց ակտիվության բարձրացման, կրկնակի օգտագործման և արգելակնան նվազեցման նպատակով իրականացվում է նրանց իմորֆիզացումը՝ ֆերմենտների պահպանումը որոշակի կրիչների վրա: Օրինակ՝ իմորֆիլիզացված ֆերմենտների օգնությամբ արտադրվում է պենիցիլին:

**Դարցեր կրկնության համար.**



### **ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

1. Ի՞նչ է կենսատեխնոլոգիան, կենսաբանության ո՞ր բնագավառներն են բերել նրա ստեղծմանը և զարգացմանը:
2. Ավանդական կենսատեխնոլոգիայի ի՞նչ օրինակներ գիտեք:
3. Որո՞նք են կենսատեխնոլոգիայի ուղղությունները:
4. Բերեք մանրէաբանական սինթեզի, խմորման կենսատեխնոլոգիայի կամ ֆերմենտային ճարտարագիտության օրինակներ:

### **Առաջադրանք.**


Ներկայացրե՛ք կենսատեխնոլոգիայի հիմքերը: Կենսաբանության ձեզ ծանոթ ո՞ր բաժինների վրա է այն հիմնվում: Կարող եք արդյո՞ք պնդել, որ կենսաբանությունը կենսատեխնոլոգիայի հիմքն է:

## **22. ԲԶՋԱՅԻՆ ԵՎ ԳԵՆԱՅԻՆ ճԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Բջջային ճարտարագիտություն:** Բջջային ճարտարագիտությունը տարբեր բջիջներից նոր բջիջների, բջիջների կուլտուրաների ստացումն է: Այն հնարավորություն է տալիս ստանալ մարդու համար պիտանի հատկանիշներով կենդանի օրգանիզմներ: Բջջային ճարտարագիտությունը կիրառվում է բույսերի և կենդանիների բջիջների համար:

Բջջային ճարտարագիտության համար կարևոր են կենդանի բջջի, նրա կառուցվածքի, նրա ներսում տարբեր բնույթի փոխազդեցությունների, բջջի և շրջակա միջավայրի միջև կապի, նրա բազմացման նաև նաև տեղեկությունները:

Բջջային ճարտարագիտությունն ունի նոր բջիջների ստացման իր մեթոդները: Նոր բջիջ, բնականաբար, կարելի է ստանալ երկու տարբեր բջիջները միաձուլելու մեթոդով (**նկ. 67**):



**Նկ. 67. Երկու տարբեր բջիջների միաձուլումից ստացված հիբրիդային բջիջներ:**


Դրա համար ստեղծվում են հատուկ պայմաններ և կիրառվում բազմաթիվ հնարիներ: Այս դեպքում նոր բջիջն ունենում է հիբրիդային գենոն: Արդեն ստացվել են ցորենի և աշորայի, ցորենի և գարու, կարտոֆիլի և պոմիդորի, խնձորենու և բալենու

հիբրիդային բույսեր, կատվի և շան, մարդու և մկան, կենդանիների քաղցկեղային բջիջների և լինֆոցիտների հիբրիդներ: Դաջողվել է ստանալ նաև բուսական և կենդանական բջջի հիբրիդներ:

Բջիջը կարելի է վերակառուցել տարբեր բջիջների բաղադրամասերի, օրինակ՝ բջջակորիզի, միտոքոնոդրիումների կամ օրգանոիդների օգնությամբ:

Նոր բջիջների բազմանալու միջոցով ստացվում են **բջջային կուլտուրաներ**: Վաղուց հայտնի են բուսական բջիջների մեջ կենսազանգվածով այդպիսի կուլտուրաներ: Դրանք արժեքավոր են նպատակային տարբեր նյութերի, այդ թվում՝ դեղամիջոցների ստացնան համար:

Վերջին տարիներին մշակվեցին բջջային կուլտուրաների պահպանման եղանակներ, որոնցից կարևոր է բջիջների **հմորիլիզացումը**՝ այսինքն նրանց երկարատև պահպանումը որոշակի պոլիմերների ծակոտկեն կառույցներում (**նկ. 68**):



Նկ. 68. Հմորիլիզացված բջիջներ:

Բջջային ինժեներիայի զարգացումը հնարավոր է դարձնում առանձին բջիջներից ամբողջական օրգանների և օրգանիզմների աճեցումը՝ **կլոնների** ստացումը: Այս մեթոդն առաջարկվել է ամերիկացի կենսաբան **Մ. Ստյուարդի** կողմից: Կլոններն ինչպես գենոտիպով, այնպես էլ ֆենոտիպով նման են ծնողական ձևին: Ընդ որում կլոնների բջիջներում պարունակվում են շատ արժեքավոր նյութեր, որոնք հետագայում օգտագործվում են տարբեր նպատակներով:

Դատուկ սննդամիջավայրերում տեղադրված բուսական բջիջներից արդեն ստացվում են բուսական հյուսվածքներ և նույնիսկ ամբողջական բույսեր: Արդեն կան գենետիկապես ձևափոխված բջիջներից աճեցված կարտոֆիլի, ցորենի, ծխախոտի և այլ բույսերի նոր ձևեր (**նկ. 69**), որոնք ունեն օգտակար հատկանիշներ և դիմացկուն են շրջակա միջավայրի անբարենպաստ պայմաններում, ինչպես նաև որոշ քիմիական նյութերի և վիրուսների ազդեցության նկատմամբ:

Կարտոֆիլի և պոմիդորի միաձուլման արդյունքում ստացված հիբրիդներից աճեցված բույսերի պալարները մեծ են, իսկ խոշոր պտուղները պարունակուն են արժեքավոր նյութեր: Դիբրիդային բույսերի սելեկցիան կարող է բերել նոր սորտերի

### ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՆՈՐԱԳՈՒՅՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ստացման, տալ հետաքրքիր արդյունքներ: Կարևոր է նաև դրանցում ֆոտոսինթեզի արդյունավետության բարձրացումը: Բջջային կուլտուրաների միջոցով գիտնականները փորձում են ուղղակի եղանակով ստանալ, օրինակ, կարտոֆիլի պալարներ: Սակայն այդպիսի փոփոխությունների բնույթը դեռևս լիովին պարզաբանված չէ, իսկ դաշտային պայմաններում հնարավոր է նաև բույսերի հետագա ձևափոխում:



Նկ. 69. Գենետիկապես ձևափոխված բջիջներից ածեցված բույս:

Բջջային ճարտարագիտության միջոցով ստացվում և ածեցվում են նաև խոշոր եղջյուրավոր անասունների և այլ կենդանիների սաղմեր, որոնք օգտագործվում են զուղատնտեսության մեջ:

**Գենային ճարտարագիտություն:** Գենային ճարտարագիտությունը տարբեր կենդանի օրգանիզմների ժառանգականության կառավարումն է, նրանց գենոտիպի վերակառուցումը: Դրա սկզբանավորումը դրեց ԴՆԹ-ի կառուցվածքի մասին մոդելը, որը փոխեց ժառանգական տեղեկատվության պահպանման և փոխանցման մեխանիզմների մասին պատկերացումները: Բացահայտվեցին գեները, հայտնաբերվեցին դրանց դրսնորման, կարգավորման և տեղափոխման հնարավորությունները:

Գենային ճարտարագիտության մեթոդները շատ բարդ են: Այս կամ այն կենդանի օրգանիզմի գենոտիպ առանձին գեների կամ դրանց խմբերի ներմուծումը կամ հեռացումը հնարավոր է հատուկ ֆերմենտների օգնությամբ և փոքր գենետիկական կառուցների միջոցով: Այդ կառուցներից հայտնի են ԴՆԹ-ի ոչ մեծ հատվածները՝ **պլազմիդները** (Ակ. 70), որոնք կարող են պարունակել մինչև մի քանի տասնյակ կամ առավելագույնը հարյուր գեներ: Պլազմիդներ անվանումը տպել է ամերիկացի գենետիկ, Նորբեյան մրցանակակիր Զ. Լեդերբերգը: Պլազմիդներ կամ տարբեր բակտե-

դիաներում, նրանց հետ է կապված դեղամիջոցների նկատմամբ այդ բջիջների կայունությունը, հակարիտիկների նկատմամբ նրանց դիմադրողականությունը: Պլազմիդները կարող են տեղափոխվել բակտերիայի մեկ բջիջում մյուսը: Պլազմիդների հիմնավոր կառուցվում են հատուկ տեղափոխվող **վեկտորներ**, որոնք կարող են կրել լրացուցիչ տեղեկատվություն:



Նկ. 70. ՂՆԹ-ի տեղափոխվող հատվածներ՝ պլազմիդներ:

Գենային ճարտարագիտությունում շատ կարևոր է իմանալ, թե ինչպիսին է գեների հաջորդականությունը ՂՆԹ-ի մոլեկուլում, այսինքն՝ գենային քարտեզը:


Որպես գեներ տեղափոխող կառուց օգտագործվում է նաև վիրուսների ՂՆԹ-ն: Առաջին օտարածին գենը հաջողվել է տեղափոխել հինգ գեն պարունակող վիրուսի ՂՆԹ: Այնուհետև այդ ՂՆԹ-ն տեղափոխվել է բջիջ:

Գենային ճարտարագիտությունն օգտագործում են նաև հիբրիդային ՂՆԹ-ներ, որոնք ՂՆԹ-ի տարբեր հատվածների համակցումներ են՝ անկախ ծագումից, կառուցվածքից և մեծությունից: Այդպիսի հիբրիդային ՂՆԹ-ներն ունակ են պահպանվելու և գործելու ինչպես բջջում, այնպես էլ նաև արհեստական համակարգերում:

Գեների տեղափոխության միջոցով բջիջներում կարելի է փոխել դրանցում ժառանգական տեղեկատվության իրականացումը, կարող են սինթեզվել նոր սպիտակուցներ, որոնք բնորոշ չեն այդ բջիջներին և այդ սպիտակուցները կարող են որոշել նոր հատկանիշներ:

Գենային ճարտարագիտությունը մեծ հաջողությունների է հասել բակտերիաների գենոտիպի փոփոխության հարցում: Մշակվել են տարբեր միկրոօրգանիզմների, տարբեր կենդանիների և մարդու գեների բակտերիաների մեջ տեղափոխման մեթոդներ: Այդպիսի տեղափոխությունները կատարվում են ինչպես ՂՆԹ-ի, այնպես էլ տեղեկատվական ՂՆԹ-ի օգնությամբ:

Օրինակ՝ աղիքային ցուպիկներում տեղափոխվել են կապտականաչ ջրիմուների որոշակի գեներ, որոնք հնարավոր են դարձել այդ բակտերիաներում հագեցած ածխաջրածինների սինթեզը (**Ակ. 71**): Դա բենզինի կենսաբանական ստացումն է: Այս ճանապարհով ստացված վառելիքը կլինի բավականի էժան:



Նկ. 71. Բենզինի արտադրումը բակտերիամեթում:

Բերենք մեկ այլ օրինակ. աղիքային ցուափիկներում տեղադրվել են ինսուլինի (**Ան. 72**), սոմատոստատինի, ինտերֆերոնի կամ շատ այլ սպիտակուցների սինթեզի գեները, և այդ բակտերիան սկսել է սինթեզել այդ սպիտակուցները: Գենախնծեներային ինսուլինը կամ, օրինակ, ինտերֆերոնն անցել են բազմաթիվ լուրջ փորձարկումներ, երաշխավորվել բժշկական կլինիկաներում օգտագործման համար և կարևոր դեր ունեն ենթաստանորսային գեղձի խանգարումներով պայմանավորված շաբարախտով կամ, օրինակ, քաղցկեղային հիվանդներին օգնելու հարցում: Դիշեցնենք, որ ինտերֆերոնը կանխում է կենդանի օրգանիզմներում վիրուսների զարգացումը:



Նկ. 72. Կենսառեակտորը, աղիքային ցուափիկը և ինսուլինի մոլեկուլի մոդելը:

Բույսերից առաջինն արևածաղկի մեջ հաջողվեց տեղափոխել լոբու սպիտակուցներից մեկի կենսասիներեզը գաղտնագրող գենը: Այսօր բույսերի քչիշներում տեղադրում են ազոտ ֆիքսող բակտերիաների որոշակի գեներ, որոնք բերում են բույսի կողմից մթնոլորտային ազոտի յուրացմանը: Մթնոլորտային ազոտի ֆիքսումը հսկող գեների տեղափոխումն ազոտֆիքսող բակտերիաներից այլ քչիշներ կարևոր է գյուղատնտեսական մշակովի բույսերն ազոտով սնուցման և նրանց բերքատվության բարձրացման համար: Սա միաժամանակ հնարավոր է դարձնում կրծատել ազոտային պարարտանյութերի ծախսատար արտադրությունը, կանխել ազոտի միացություններով շրջակա միջավայրի աղտոտումը:

Կենդանիների սաղմերում օտարածին գեների տեղափոխությամբ հաջողվել է փոփոխել կարմասումների որոշակի հատկանիշներ: Դնարավոր է դառնում հաղթահարել մարդու նույնիսկ ժառանգական հիվանդությունները:

Գենային ճարտարագիտության միջոցով ստացվում են նաև տարբեր բուժիչ շիճուկներ:

Հաջողվել է գեներ տեղափոխել նաև բույսերի քլորոպլաստներ, ինչպես նաև բույսերի և կենդանիների միտոքոնդրիումներ՝ փոփոխելով այդ օրգանոիդների ժառանգական տեղեկատվությունը:

Դեռևս վաղ է պնդել, թե գեներն ամբողջությամբ ենթարկվում են մարդուն: Գենային ճարտարագիտությունը դեռ անցնելու մեջ ճանապարհ ունի, սակայն վստահաբար կարելի է կրկնել ռուս ֆիզիկաքիմիական կենսաբան, ակադեմիկոս Յու.Ա.Օվչիննիկովի խոսքերն այն մասին, որ շուտով կբացահայտվեն բոլոր գեները և կհաղթահարվեն գենային ճարտարագիտության բոլոր դժվարությունները:

### Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչ է բջջային ճարտարագիտությունը:
2. Ինչպիսի՞ մեթոդներով կարելի է ստանալ նոր քչիշներ:
3. Ի՞նչ նշանակություն ունեն բջջային կուլտուրաները:
4. Գենետիկակես ձևափոխված ի՞նչ բույսեր գիտեք, ի՞նչ պիտանի հատկություններ ունեն նրանք:
5. Ի՞նչ է գենային ճարտարագիտությունը: Ինչպիսի՞ն են նրա մեթոդները:
6. Գենային ճարտարագիտության ի՞նչ հաջողություններ գիտեք: Բերեք օրինակներ:

## 23. ԲՈՒՅՍԵՐԻ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՆՎԱճՈՒՄՆԵՐԸ ԴԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սելեկցիան մեծ զարգացում է ապրում ինչպես անբողջ աշխարհում, այնպես էլ Շայաստանում: Դա պայմանավորված է մարդու պահանջնունքների բավարարման, գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման պահանջներով: Այն հիմնված է սելեկցիայի արդեն ծանոթ մեթոդների և օրինաչափությունների վրա և ուղղված

### ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Է բույսերի նոր սորտերի, կենդանիների նոր ցեղատեսակների և միկրոօրգանիզմների նոր շտամների ստացմանը և արդեն ստացվածների բարելավմանը: Յաշվի են առնվուզ միջավայրի տեղական, այդ թվում՝ հողակլիմայական պայմանները, որոնք կարող են ներգործել կենդանի օրգանիզմների մարդու համար կարևոր այս կամ այն հատկանիշի դրսնորման ու զարգացման վրա:

Տարիների ընթացքում հայ սելեկցիոններին կենսաբանության տարբեր մասնագետների հետ համագործակցության արդյունքում, իրոք, հաջողվել է փոփոխել բույսերի, կենդանիների և այլ կենդանի օրգանիզմների հատկանիշները, ստեղծել և կատարելագործել նրանց նոր ձևերը:


Գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության մեջ բարձր բերքատվությամբ, ցրտադիմացկուն և մարդու համար կարևոր այլ հատկանիշներով մշակաբույսերի կիրառման նպատակով Յայաստանում շրջանացվել են բույսերի հարյուրավոր սորտեր, միաժամանակ հայ բուսաբույծ-սելեկցիոնների կողմից ստեղծվել են բույսերի բազմաթիվ նոր սորտեր ու հիբրիդներ: Դրանցից են, օրինակ, աշնանացան ցորենի Եղվարդի-4, Արմյանկա-60, Արտաշատի-42, գարնանացան ցորենի Նոր կունդիկ, աշնանացան գարու Արարատի-7, գարնանացան գարու Նուտանս-115, կարտոֆիլի Ստեփանավանի, լոբու Յայկական կարմիր և շատ այլ սորտեր (մկ. 73):



Մկ. 73. Յայաստանում ստացված գարնանացան և աշնանացան ցորենի սորտերը:

Ստեղծվել են պոմիդորի, տաքդեղի, բաղրիջանի (սմբուկի), սեխի, ձմերուկի և այլ բանջարանցային կուլտուրաների բազմաթիվ սորտեր: Բուսաբույծ-սելեկցիոններ Անահիտ Անանյանն ու նրա աշխատակիցները պոմիդորի Անահիտ-20 սորտը (մկ. 74), օրինակ, ստեղծել են բազմակի ընտրության մեթոդով: Այն ունի բարձր կիսափողով թուփ, մսալի, հարթ մակերևույթով կլոր պտուղներ: Դրանք աչքի են ընկնում չոր ճյութերի, վիտամինների բարձր պարունակությամբ, ածխացրերի ու օրգանական թթուների ներդաշնակությամբ, ինչով պայմանավորված է դրանց համի բարձր որակը: Անահիտ-20 շտամբովի թփով, պոմիդորի Կրասնոդարեց-87 սորտերի, այնուհետև՝ ստացված հիբրիդի և պոմիդորի այլ սորտերի միջսորտային բարդ հիբրիդացման ու ընտրության մեթոդներով ստացվել է պոմիդորի Յայկական շտամբովի-152 սորտը: Այն խոշոր, մսալի, հարթ մակերևույթով կլոր պտուղներով, շտամբովի թփով, միջա-

ուշահաս սորտ է, որն ունի առավել բարձր բերքատվություն: Բազմակի ընտրության մեթոդով ստացվել է բարդիջանի Երևանի-3 սորտը, որն ունի երկարավուն գլանածն, մուգ մանուշակագույն, փայլուն մակերևույթով պտուղներ և տալիս է հարուստ բերք:



Նկ. 74. Ա. Անամյամի կողմից ստացված պոմիդորի սորտերը:

Յայաստանի համար կարևոր մշակաբույս է խաղողը, որը մշակվում է շատ վաղուց: Խաղողը, չամիչն ու խաղողի հյութը հայկական սեղանի հայտնի զարդն են, նրանք շատ օգտակար են. խաղողի պտուղները պարունակում են մեծ քանակությամբ շաքարներ, զգալի քանակությամբ սպիտակուցներ, դարաղանյութեր, վիտամիններ և այլ նյութեր: Խաղողից ստանում են բարձորակ գինի և տեսակավոր կոնյակ: Խաղողի նոր սորտերի ստեղծման գործում մեծ ավանդ ունի Սովետ Պողոսյանը: Սեղանի խաղողի Յայաստան, Զվարթնոց և այլ սորտեր ունեն խոշոր պտուղներ, հարուստ են վիտամիններով, իսկ գինու խաղողի Յաղիսի, Մուսկատ և այլ սորտեր ունեն մուգ գունավորված և շաքարների մեծ պարունակությամբ պտուղներ, ցրտադիմացկուն են, տալիս են բարձր բերք ու որակով գինի (Նկ. 75): Կարելի է իհշատակել նաև Յայաստանում ստեղծված խաղողի Յաղթանակ ու Անահիտ սորտերը:



Նկ. 75. Ա. Պողոսյանի կողմից ստացված խաղողի սորտերը:

Յայտնի են նաև ծիրանենու՝ Երևանի, դեղճի՝ Նարնջի և պտղատու բույսերի շատ այլ սորտեր:

Յայ անասնաբույծ-սելեկցիոներների ջանքերով ստեղծվել են կենդանիների նոր ցեղատեսակներ: Դրանք կարևոր են անասնապահության մթերքների և արտադրանքի որակական ու քանակական խնդիրների լուծման գործում: Յայտնի է կովկասյան

### ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

գորշ տավարը (**նկ. 76**), որը ստացվել է տեղական տավարի, կաթնամսատու շվիցի և նսատու զերուի ցեղատեսակների խառնածինների ու հիբրիդների ընտրության արդյունքում: Տավարի այս ցեղատեսակն օժտված է արտակազմնվածքային լավ հատկանիշներով և բարձր մթերատվությամբ. կովերի զանգվածը 500 կգ-ից ավելի է, որոնք տալիս են տարեկան 3 տոննայից ավելի կաթ, որի յուղայնությունը 3,8-3,9 % է, իսկ ցուլերի զանգվածը կազմում է 800-900 կգ: **Աշոտ Ռուլիչյանի** և համահեղինակների մի մեծ խմբի ջանքերով ստեղծվեց հայկական կիսակոշտ բրդով ճարպապոչավոր ոչխարների նոր ցեղատեսակը (**նկ. 76**): Դա անդրկովկասյան կոշտաբուրդ ճարպապոչավոր բալբաս, ֆրանսիական նրբագեղմ ռամբուլը ու անգլիական կիսանրբագեղմ լինքոլն ցեղատեսակների բարդ հիբրիդացման արդյունք է: Ոչխարի այս ցեղատեսակն առանձնահատուկ է միջին կենդանի մեծ զանգվածով՝ 55-60 կգ, բարձր բրդատվությամբ՝ 2,5-3,2 կգ և մաքինների բարձր կաթնատվությամբ՝ 35-40 կգ:



**Նկ. 76. Հայկական ճարպապոչավոր ոչխարը և կովկասյան գորշ տավարը:**

Հայ սելեկցիոնների ջանքերով ստեղծվել են նաև անտառալեռնային խոզերի, ճագարների՝ հայկական մարդեր, հավերի՝ երևանյան ցեղատեսակները, մեղուների՝ հայկական դեղին ու լեռնային գորշ ցեղատեսակների խոշորացված հիբրիդների նոր պոպուլյացիաները:

Հայաստանում կենսատեխնոլոգիայի զարգացումը, սննդի արտադրությունը ու մանրէաբանական արդյունաբերությունը պահանջում են բակտերիաների, բորբոսա-սմերի և խմորասնկերի նոր շտամներ, որոնք պետք է ունենան արդյունավետ աճ և օժտված լինեն նպատակային նյութերի բարձր ելքով: Միկրոօրգանիզմների սելեկցիայի նվաճումներից է լիզինի, գյուտամինաթթվի և տարրեր այլ ամինաթթուների բարձր ելքով օժտված բակտերիաների շտամների ստեղծումը:

Բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների սելեկցիայի մեծ նվաճումներն արտացոլում են Հայաստանում բարձր գիտատեխնոլոգիական ներուժի առկայությունը և վկայում առաջիկայում՝ ժամանակի թելադրանքով պահանջվող կենդանի օրգանիզմների նպատակային փոփոխման հնարավորությունների մասին:

1999թ. Հայաստանի Հանրապետությունում ընդունվել է սելեկցիայի նվաճումների պաշտպանության մասին օրենք, որը կարևոր դեր է խաղում սելեկցիայի հետագա զարգացման գործում:

### Դարցեր կրկնության համար.



1. Ինչո՞ւ է պայմանավորված սելեկցիայի զարգացումը Հայաստանում:
2. Ի՞նչ գիտեք Հայաստանում բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների սելեկցիայի նվաճումների մասին :
3. Բույսերի ի՞նչ սորտեր, կենդանիների ի՞նչ ցեղատեսակներ և միկրոօրգանիզմների ի՞նչ շտամներ են ստեղծվել ու ինչպե՞ս: Բերեք օրինակներ:
4. Դայ սելեկցիոններից ո՞ւմ գիտեք: Ի՞նչ հաջողությունների են նրանք հասել:

### Էքսկուրսիա.

Այցելեք մոտակա սելեկցիոն կայան կամ տնտեսություն: Ծանոթացեք բույսերի և կենդանիների սելեկցիայի և բույսերի սորտերի, կենդանիների ցեղատեսակների շրջանացվելու ուղղությամբ տարրող աշխատանքներին: Դամենատեք այդ աշխատանքներում կիրառվող մեթոդները դասագրքի այս բաժնում բերված մեթոդների հետ: Վերլուծեք դրանք:

### Առաջադրանք.

Գտեք և նկարագրեք, թե բույսերի ի՞նչ սորտեր, կենդանիների ի՞նչ ցեղատեսակներ են շրջանացվել վերջին տարիներին ձեր մարզում կամ գյուղում: Ի՞նչ հատկություններով են նրանք առանձնանում: Ինչքանո՞վ են դրանք նպաստել գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացմանը:

## 24. ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՆՎԱճՈՒՄՆԵՐԸ: ԿԼՈՆԱՎՈՐՈՒՄ, ՏՐԱՆՍԳԵՆԱՅԻՆ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ

Սելեկցիան մշտապես զարգացող գիտություն է: Սելեկցիոն աշխատանքները տարեց տարի ավելի լայն թափ են ստանում, նրանցում ներգրավվում են կենսաբանության տարրեր ծյուղերի մասնագետներ: Սելեկցիոն աշխատանքները տարրում են տարրեր երկրներում և տարածաշրջաններում, բազմաթիվ հետազոտական ինստիտուտներում և կենտրոններում, փորձակայաններում, տնտեսություններում, ֆիրմաներում և այլ կազմակերպություններում: Ստեղծվել են բույսերի սորտերի գենոֆոնի, ազնվագեղ, էլիտար կենդանիների գենային տեղեկատվական բազաներ: Զարգանում է միջազգային համագործակցությունը, բույսերի սորտերի և կենդանիների ցեղատեսակների փոխանակումը, տեղափոխումը և շրջանացումը:

Սելեկցիայի խնդիրները տարեցտարի ընդլայնվում են և նորացվում: Բույսերի նոր սորտերի, կենդանիների նոր ցեղատեսակների և միկրոօրգանիզմների նոր շտամ-ների ստացումը և արդեն ստեղծվածների կատարելագործումը շարունակվում է: Սելեկցիան չի սպառել իր հնարավորությունները:

Բույսերի և կենդանիների արդեն հայտնի առանձնահատկություններին ավելա-նում են այնպիսինները, ինչպիսիք են բերքի և արտադրանքի մանրակրկիտ քիմիա-կան կազմը կամ էլ պտուղների և բանջարեղենի, դեկորատիվ բույսերի ծաղիկների, թռչունների փետրածածկույթի կամ կենդանիների մորթու գույնը: Կարևոր են նաև բերքի և արտադրանքի փոխադրումը և պահպանումը, թարմ վիճակում բանջարեղենի սառեցման և պահպանման երկարատևողությունը կամ ծաղիկների պահպանման տևողությունը, վերանշակման համար բերքի կամ արտադրանքի պիտանելիությունը, (օրինակ՝ աղադրման, հյութերի ստացման կամ պահածոյացման համար պտուղների և բանջարեղենի, կամ մշակման և պահպանման համար մորթու պիտանելիությունը և այլն): Անհրաժեշտ է ի նկատի ունենալ գյուղատնտեսության և արդյունաբերության, ինչպես նաև բժշկության տեխնոլոգիական զարգացումը, տարբեր տեխնոլոգիաների կատարելագործումը: Կարևոր է հաշվի առնել նաև հողատարածքների բնակլիմա-յական պայմանների վերջին տարիների փոփոխությունները, որոնք անդրադարձում են բույսերի և կենդանիների վրա: Այդ փոփոխությունները պայմանավորված են մշակ-վոր հողատարածքների կրծատմամբ, հողերի հատկություններով:

Վերջին տարիներին սելեկցիան ուժգնորեն տեղափոխվում է արդյունաբերական հենքի վրա, սելեկցիոն աշխատանքում հաշվի են առնվում բույսերի աճեցումը ժամա-նակակից ջերմոցներում, ոռոգման ջրի և պարարտանյութերի խնայողությունը, բերքահավաքում գյուղատնտեսական նոր տեխնիկայի օգտագործման հնարավորությունները, կենդանիների պահպանումը խոշոր կենդանաբուծական համալիրներում, դրանցում նոր տեխնիկայի օգտագործումը, դրանց համակարգչային կառավարումը և այլն: Կարևոր է նաև կրծատել բերքի և արտադրանքի համար էներգիայի ծախսերը:

Աշխատանքներ են տարվում բազմամյա ցորենի սպիտակուցների և գունակների բարձր պարունակությամբ ու ցրտադիմացկուն նոր կերային սորտերի ստեղծման ուղղությամբ: Օրինակ՝ Ուսասատանում ստացված Ցիցինի կամ Կանադայում ստաց-ված ցորենի Գլենվիի սորտերը, հիբրիդային ցորենը և գարին: Ստեղծվել են նաև վա-ղահաս և միջահաս բրնձի սպիտակուցների բարձր պարունակությամբ, ինչպես նաև տարվա ընթացքում երկու բերք տվող, օրինակ, ամերիկյան Նատո կամ Նովա նոր սորտերը (**նկ. 77**): Հետաքրքրություն են ներկայացնում սպիտակուցների և ամի-նաբրուների, հատկապես՝ լիզինի բարձր պարունակությամբ եգիպտացորենի և օւ-լայի բարձր պարունակությամբ կարտոֆիլի հիբրիդների, բարձր յուղայնությամբ և ճարպաթրուների 2-3 անգամ ավել պարունակությամբ արևածաղկի և այլ բույսերի նոր ձևերի ստացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ուշադրություն է դարձվում բերքատվության բարձրացմանը, ցրտադիմացկունությանը, երաշտա-կայունությանը, համի բարելավմանը և տեխնոլոգիական հատկությունների ուժե-ղացմանը:



Նկ. 77. Վերջին տարիներին ստացված բրնձի ամերիկյան սորտերը:

Ցորենի գաճաճ սորտերի ստացումը Մեքսիկայում բերեց այդ մշակաբույսի բերքատվության բազմակի անգամ ավելացմանը, որն անվանվեց «կանաչ հեղափոխություն»: Դրա հեղինակը ամերիկացի հանրահայտ գենետիկ և սելեկցիոներ, Նորելյան նրանակակիր **Ն.Բորլաուգն** (նկ. 78): Դա հնարավոր դարձավ միայն բույսերում գաճաճության գենի հայտնաբերումից հետո: Այսօր ցորենում հայտնի են արդեն 10 այդպիսի գեներ, որոնք որոշում են բույսի բարձրությունը: Բոլոր դեպքերում կարևոր է, որ գաճաճ բույսերում փոփոխված են ոչ միայն աճի, բույսի ցողունի և այլ օրգանների ձևավորումը, ամբողջական բույսի, հասկերի, հատիկների և այլ օրգանների զանգվածը, այլ նաև նյութափոխանակության գործընթացները: Բույսերի աճի և այդ գործընթացների միջև կապը դեռևս ուսումնասիրվում է: Հաջողությամբ ստեղծվել են նաև եգիտացորենի, բրնձի և այլ բույսերի գաճաճ սորտեր:



Նկ. 78. **Ն.Բորլաուգը** և ցորենի գաճաճ սորտը:

Դետաքրքիր է դեկորատիվ բույսերի, օրինակ, կակաչի սելեկցիան: Մարդկանց նոր սերունդները և նրանց ճաշակի փոփոխությունը բերել է խայտարդետ գունավորմանը կակաչի նոր, Դարվինի անունով սորտերի ստեղծմանը Հոլանդիայում (նկ. 79): Դրա համար անհրաժեշտ են տասնյակ տարիներ, սակայն, օգտագործելով կակաչների բնական գենոֆոնդը, հաջողվել է էակես կրծատել այդ ժամանակահատվածը: Առավել գեղեցիկ կակաչների նոր սորտերի բազմացումը կատարվում է արտադրական մասշտաբներով:



Նկ. 79. Կակաչների նոր սորտեր:

Կենդանիների սելեկցիայի վերջին տարիների հաջողություններից են նրանց մսի և կաթի հատկությունների էական բարելավումը, թռչունների ծվատվության բարձրացումը և այլն:

Սելեկցիայի հաջողությունները պայմանավորված են դասական մեթոդների հետ համատեղ նորերի կիրառմամբ: Դրանցից են կլինավորումը և տրանսգենային օրգանիզմների ստացումը:

**Կլինավորում:** Կլինավորման տեխնիկան արդեն հաջողված լուծում է կենդանի բջիջների վերարտադրման և նրանցից նոր կենդանի օրգանիզմների ստացման համար: Ստացված բջիջների խումբը և կենդանի օրգանիզմները՝ կլինները կրկնում են նայրական բջիջը, բայց նաև կարող են տարրերվել նրանց մոլուստացիաների պատճառով, անհատական զարգացման ընթացքում տարրեր հատկանիշների դրսնորման վրա շրջակա միջավայրի ներգործության հետևանքով:

Կլինավորումն էապես արագացնում է սելեկցիան՝ կարճ ժամանակահատվածում ստեղծվում են բույսերի նոր սորտեր և կենդանիների նոր ցեղատեսակներ: Բույսերի կլինները ստացվում են սննդային միջավայրում տարրեր սպիտակուցների և բուսական հորմոնների հարաբերակցության փոփոխության ճանապարհով: Կան գորտերի, թռչունների, մկների, կատունների, ոչխարների, ուղտերի և այլ կենդանիների կլիններ, որոնց ստացման ժամանակ օգտագործվել է կորիզների տեղափոխումը մեկ բջից դեպի մյուսը, սովորաբար տարրերակված բջից դեպի ծվաբջիջ: Մշակվել է կենդանիների կլինների ստացումը բնային բջիջներից՝ առանց կորիզների տեղափոխության: Կլիններն օժտված են որոշակի ցանկալի հատկություններով:

Կլինավորման ճանապարհով մարդու ստեղծումն արգելված է տարրեր երկրներում և բազմաթիվ միջազգային կոնվենցիաներով: Այդ մասին 2005թ. ընդունվել է նաև ՄԱԿ-ի հռչակագիր:

**Տրանսգենային օրգանիզմներ:** Բույսերի և կենդանիների տրանսգենային օրգանիզմներին, ինչպես նաև տրանսգենային միկրոօրգանիզմներին արդեն ծանոթ ենք:

Այս օրգանիզմները ստացվում են նման ճանապարհով. ՂՆԹ-ում նույլեռտիդների օտարածին հաջորդականությունների ներմուծմամբ: Ընդ որում, տեղափոխվող հաջորդականությունները պարունակում են միկրոօրգանիզմների, բուսական կամ կենդանական բջիջների, կամ էլ վիրուսների որոշակի գեներ: Այդ գեների հետագա ակտիվությունը բերում է նոր սպիտակուցների կենսասինթեզին:

Տրանսգենային օրգանիզմների ստեղծումը սկսվել է 1972թ., երբ ամերիկացի կենսաքիմիկոս, Նորեյյան մրցանակակիր **Պ.Փերգը** վիրուսի և բակտերիայի ՂՆԹ-ների հատվածներից կառուցեց ՂՆԹ-ի մի նոր մոլեկուլ: Արդեն 1980թ. ստեղծվեց բակտերիայի առաջին տրանսգենային ձևը, որը ճեղքում էր նավթը: Այնուհետև ստեղծվեցին բազմաթիվ տրանսգենային միկրոօրգանիզմներ, որոնցում սինթեզվում են տվյալ օրգանիզմի համար նոր սպիտակուցներ:

Հաջողությամբ ստեղծվել են եգիպտացորենի, սոյայի, բամբակի, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի, տոնատի, վարունգի, ելակի և այլ բույսերի տրանսգենային ձևեր (**նկ. 80**): Դրանց թիվը գերազանցում է մի քանի տասնյակներ: Կան տրանսգենային խոզեր և այլ կենդանիներ:



**Նկ. 80. Որոշ բույսերի տրանսգենային ձևեր:**

Տրանսգենային օրգանիզմների, ինչպես կլոնների, օգտագործումը բազմակի անգամ արագացնում է սելեկցիան: Մշակված են այդպիսի օրգանիզմների ստացման տարբեր եղանակներ, որոնք շատ բարդ են և ընդգրկում են նաև տարբեր մետաղներ, ֆերմենտներ և այլ քիմիական նյութեր, կիրառվում են բարձր լարման կարճատև էլեկտրական ազդակներ և այլ գործոններ: Տրանսգենային օրգանիզմներն ավելի կայուն են վնասատուների, թունաքիմիկատների նկատմամբ, տալիս են բարձր և մեկ

### ԳԼՈՒԽ 3. ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՆՈՐԱԳՈՒՅՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ

տարվա ընթացքում երկու բերք, իսկ նրանց պտուղներն առանձնանում են սպիտակուցների, ամինաթթուների, վիտամինների, օսլայի, երկարի և կալցիումի բարձր պարունակությամբ, պահպանման երկար ժամկետով և այլ հատկանիշներով։ Նման կարևոր հատկությունների շնորհիվ վերջին տարիներին բազմակի անգամ մեծացել են այդ օրգանիզմներով զբաղեցված հողատարածքները, գերազանցելով մի քանի տասնյակ մլն հեկտարներ։

Քանի որ տրամագենային օրգանիզմները սննդի աղբյուր են, ապա առավել մեծ է ուշադրությունը նրանց նկատմամբ։ Շատ երկրներում սահմանվել է պետական վերահսկողություն և ստեղծվել են փորձաքննական լաբորատորիաներ և կենտրոններ։ Տրամագենային օրգանիզմներից ստացվում են տարբեր սննդանյութեր, օրինակ, սոյայի այսուր, կաթ և կաթնամթերքներ, որոնք առանձնանում են համային որակներով, պահպանման ժամկետներով և պայմաններով և այլ հատկություններով։ Որպես կանոն, նրանց ստացումը համենատարար էժան է։ Ուստի կենսատեխնոլոգ, ակադեմիկոս Վ.Ի.Սկրյարինի կարծիքով տրամագենային ձևափոխված սննդամթերքն անվտանգ է։



Դարցեր կրկնության համար։

1. Ի՞նչո՞վ է պայմանավորված սելեկցիայի զարգացումը վերջին տարիներին։
2. Ի՞նչպիսի՞ նոր խնդիրներ են դրվում սելեկցիայի առջև։
3. Վերջին տարիների սելեկցիայի ի՞նչ հաջողություններ են հայտնի։
4. Ի՞նչ նոր մեթոդներ են օգտագործվում սելեկցիայում վերջին տարիներին։ Ի՞նչ արդյունքի են դրանք բերում։
5. Ի՞նչ է կլոնավորումը։
6. Ի՞նչպես են ստացվում տրամագենային օրգանիզմներ։ Դրանց ի՞նչ օրինակներ գիտեք։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ..... 3

### ԳԼՈՒԽ 1. Երկրի վրա կյանքի ծագման մասին ժամանակակից պատկերացումները

1. Կյանքի էռլիքունը: Երկրի վրա կյանքի ծագման մասին ժամանակակից պատկերացումները.....	10
2. Կենսաբանական մոնոմերներ և կենսաբանական պոլիմերներ.....	16
3. Թաղանթային կառուցվածքների ձևափորումը նախնական կենսապոլիմերների էվոլյուցիան.....	19
4. Միաբջիջների էվոլյուցիան (նախակորիզավորներ և կորիզավորներ) .....	21
5. Կյանքի զարգացումը Երկրի վրա.....	26

### ԳԼՈՒԽ 2. Օրգանիզմների ժառանգականությունը և փոփոխականությունը

6. Ժառանգականության հիմնական հասկացությունները: Մենդելի բացահայտած հատկանիշների ժառանգման օրինաչափությունները.....	34
7. Մենդելի առաջին, երկրորդ և երրորդ օրենքները.....	38
8. Մարդու ժառանգական փոփոխականությունը: Դամակցական փոփոխականություն.....	44
9. Մարդու ժառանգական փոփոխականությունը: Մոլտացիոն փոփոխականություն.....	47
10. Մոլտացիաներ սոմատիկ և սեռական բջիջներում: գենային և քրոմոսամային մոլտացիաներ.....	50
11. Գենոմային մոլտացիաներ: Ցիտոպլազմային մոլտացիաներ: Մարդու օրգանիզմում առավել հաճախ հանդիպող մոլտացիաներ.....	53
12. Անհատական զարգացման ընթացքում գեների գործունեության հիմնական օրինաչափությունները.....	55
13. Մարդու գենետիկայի ուսումնասիրման մեթոդները.....	58
14. Մարդու սերի գենետիկա.....	65
15. Մարդու ժառանգական հիվանդությունները.....	68

---

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

---

16. Մարդու որոշ ժառանգական հիվանդությունների կանխարգելումը և բուժումը.....	71
17. Շրջակա միջավայրի ազդեցությունը մարդու առողջության վրա.....	75

### **ԳԼՈՒԽ 3.** **ՍԵԼԵԿԳԻԱՅԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

18. Բույսերի և կենդանիների սելեկցիայի մեթոդները և օրինաչափությունները. ընտրություն.....	77
19. Բույսերի և կենդանիների սելեկցիայի մեթոդները և օրինաչափությունները. հիբրիդացում.....	82
20. Միկրոօրգանիզմների սելեկցիա.....	87
21. Կենսատեխնոլոգիա.....	89
22. Բջջային և գենային ճարտարագիտություն.....	95
23. Բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների սելեկցիայի նվաճումները Դայաստանում.....	100
24. Սելեկցիայի նորագույն հաջողությունները: Կլոնավորում, տրանսգենային օրգանիզմներ.....	104
Բովանդակություն.....	110

ԵՄԻԼ ՍՈՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ  
ՖԵԼԻՔՍ ԴԱՍԻԵԼԻ ԴԱՍԻԵԼՅԱՆ՝ կենս գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՐԱՍՏԻ ԵՍԱՅԱՆ՝ կենս. գիտ. թեկնածու, դոցենտ  
ԳԱՐԵԳԻՆ ԳԵՎՈՐԳԻ ՍԵՎՈՅԱՆ՝ կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - 10

(ավագ դպրոցի հումանիտար հոսքի համար)

Ընդհանուր խմբագրությամբ՝

կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԹՈՂՈՒՆՅԱՆԻ

Հրատարակիչ-տնօրեն՝ Ս. Չունգուրյան  
Սրբագրիչ՝ Ծ. Հովհաննիսյան  
Համակարգչային ձևավորող՝ Ա. Եսայան

Զափսը՝ 70x100 1/16:  
Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:  
7 տպ. մամուլ: Պատվեր՝ 1242:  
Տպաքանակը՝ 7500.



«ԱՍՏՈՒԿ ԳՐԱՏՈՒՆ» հրատարակչություն  
(0009, Երևան, Գևորգ Քոչարի փ. 21)

Տպագրվել է՝ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՓԲԸ տպարանում